

ԶԱՐԵՂ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր

(ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ԵՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ)



Պ Է Յ Ր ՈՒ Թ
1981

ԶԱՐԵՂ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Property of
SHANT KAZANJIAN

ԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

(ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ԵՒ ՎԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ)

ԳՐԱԿԱՆ ՍԵՌԵՐ
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԳԻՑԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ
ՈՃ (ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՏԵՍԱԿՆԵՐ)
ԽՈՐԲ (ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ)
ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԵՅՐՈՒԹ

1981

Property of
SHANT KAZANIAN

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՐՆ

Կ.ՏՕՆՆԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

□ 871 - 887, ԱՐՄԵՆԻԱ ՓՈՂՈՑ □ ՍԵՆ ՄԻՇԵԼ

ՊԵՏՐՈՒՔ - ԼԻՐԱՆԱՆ

ՀԵՌԱԶԱՅՆ 223971 ԵՒ 256201

ԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ա. ՄԱՍ

ԳՐԱԿԱՆ ՍԵՌԵՐ

Ա. - ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Տ Ք

Իրենց պատմութեան հնագոյն շրջաններուն՝ ժողովուրդները զրկուած ըլլալով գիրէ, իրենց զգացումներն ու մտածումները արտայայտած են բանաւոր (այսինքն՝ բերանացի) ստեղծագործութիւններու միջոցով, եւ յօրինած են հերոսավէպեր, երգեր, գրայցներ, հեքիաթներ, առասպելներ, առակներ, համելուկներ, առածներ, ասացուածքներ, եւ այլն:

Այս անգիր ստեղծագործութիւնները փոխանցուած են սերունդէ-սերունդ՝ բերանացի, ժողովուրդներու կեանքին հնագոյն շրջաններուն՝ երբ դեռ գիրը չէր հնարուած, ինչպէս նաեւ զիրերու գիւտէն ետք, երբ ժողովուրդին մէկ փոքր մասը միայն գրել-կարդալ կը գիտնար:

Նոյնիսկ այսօր, յետամնաց երկիրներու մէջ մասնաւորաբար, ժողովուրդին զիւղացի հատուածը յատկապէս, դեռ սերունդէ-սերունդ բերանացի կը փոխանցէ անգիր ստեղծագործութիւններ, որովհետեւ գրել-կարդալ չգիտցողներու թիւը մեծ է տակաւին բազմաթիւ երկիրներու մէջ:

Այս անգիր, բերանացի ստեղծագործութիւններն են որ կը կոչենք ժողովրդական բանահիւտութիւն:

Շատ հաւանական է որ այս բանաւոր ստեղծագործութիւնները ունեցած ըլլան անհատ հեղինակներ. բայց մենք զանոնք կը նկատենք «ժողովրդական» ստեղծագործութիւններ, որովհետեւ զանոնք

կրկնող իւրաքանչիւր նոր անձ կամ սերունդ՝ անոնցմէ բան մը պակսեցուցած է, փոխած է, կամ անոնց վրայ բան մը աւելցուցած է իր կողմէ: Այնպէս որ քանի մը սերունդ ետք, այդ անընդհատ փոխուող ստեղծագործութիւնները դադրած են ըլլալէ գործերը անհատ հեղինակներու եւ դարձած են սեփականութիւնը ժողովուրդին:

Գրաւոր ստեղծագործութիւններու պարագային, բնականաբար, ժողովուրդը չի կրնար փոփոխութիւններ մտցնել անհատներու գործերուն մէջ եւ սեփականացնել զանոնք:

* * *

Ժողովուրդները բանահիւսութեան մէջ դրած կ'ըլլան իրենց հաւատալիքները, նկարագիրը, երազները, ճաշակը: Օրինակ, «Հայկ եւ Բել» առասպելին մէջ, Հայկ Նահապետը, որ կը ներկայացնէ մեր ժողովուրդը, ազատասէր, խաղաղասէր եւ աշխատանքը սիրող անձ մըն է. բայց նաեւ քաջ ռազմիկ է՝ երբ ա'յդ կը պահանջէ ժողովուրդին շահը: Հայկ Նահապետ կը նախընտրէ ցուրտ ու նուազ բերրի երկրի մը մէջ ապրիլ ու աշխատիլ՝ բայց ըլլալ անկախ, քան ապրիլ Բելին լուծին տակ՝ հող չէ թէ բարեխառն կլիմայով ու հարուստ երկրի մը մէջ: Հայ ժողովուրդին անկախ ըլլալու, իր սեփական կեանքը ունենալու, ուրիշներէն զատորոշուելու ձգտումն է, որ երեւան կու գայ Հայկ Նահապետին մէջ, որ գիտէ նոյնատեւ քաջաբար պաշտպանել իր ազատութիւնն ու խաղաղութիւնը՝ երբ վտանգ կը սպառնայ անոնց: Հայկ Նահապետ կը կռուի իր իրաւունքները պաշտպանելու համար, եւ ո'չ թէ ուրիշներու հողերն ու դանձերը յափշտակելու:

Ազատասիրութեան, խաղաղասիրութեան եւ քաջութեան այս նոյն գիծերը երեւան կու գան՝ «Հայկ եւ Բել» առասպելին աւելի քան տասնըհինգ դար ետք յորինուիլ սկսած «Սասմայ Ծոբը» ժողովրդական դիւցազներգութեան հերոս Սասունցի Դաւիթի'ն ալ անձին մէջ: Դաւիթ ալ կռուի կ'ելլէ իր երկիրը պաշտպանելու համար բռնագրաւիչներու դէմ. բայց երբ կը յաղթէ՝ փոխանակ գերի առնելու թշնամիին անձնատուր եղող զօրքերը, կ'արտօնէ որ անոնք դառնան իրենց երկիրը, ապրին խաղաղ ու շէնցնեն իրենց աշխարհը: Այս արարքով Դաւիթ իյայտ կը բերէ նաեւ խորունկ մարդասիրութիւն: Սակայն կայ աւելին.— Դաւիթ ունի նաեւ ասպետական

ոգի, եկեղեցասէր է եւ կը տածէ յարգանք ընտանեկան սրբութիւններուն հանդէպ: Օրինակ. Ձի հարուածեր Մարամելիքը երբ ան քնացած է (ասպետական ոգի), կռուի չբացած կը նորոգէ Մարութայ վանքը (եկեղեցասիրութիւն), իսկ Մարամելիքին հետ ունեցած իր մենամարտին ընթացքին իր մէկ հարուածէն կը հրաժարի անոր մօրը խնդրանքին վրայ, միւսէն՝ քրոջը (յարգանք մօր եւ քրոջ հանդէպ):

* * *

Հայկական ժողովրդական բանահիւսութենէն մեղի հասած են փշրանքներ միայն՝ շնորհիւ Մովսէս Խորենացիին, որ զանոնք հաւաքած է ժողովուրդին բերնէն եւ գրի առած է Ե. դարուն (Ք. Ե.): Աւելի ետք, ԺԹ. դարու երկրորդ կէսին, Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցն է, որ մեծ թափով կատարած է բանահաւաքումի այս աշխատանքը:

ՆԱԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.— Իրարու հետ պէտք չէ շփոթել բանահիւսութիւն եւ մատենագրութիւն բառերը: Մատենագրութիւն են միայն գրաւոր արտադրութիւնները, այսինքն՝ մատենաները (գիրքերը). իսկ բանահիւսութեան մաս կը կազմեն պիտաւորաբար բերանացի, անգիր ստեղծագործութիւնները: Ներկայիս «մատենագրութիւն» ըսելով կը հասկնանք՝ անցեալին գրաբարով գրուած գիրքերը:

2.— Հայ ժողովրդական հին բանահիւսութիւնը տարածողները եղած են գուսանները, որոնք չրջուն երգիչներ էին: Այս երգիչները կոչուած են Գոգթան երգիչներ, որովհետեւ անոնց հայրենիքը եղած է առաւելաբար Հայաստանի Գոգթն գաւառը:

3.— Շատ հաւանաբար ժողովրդական բանահիւսութեան սկզբնական ձեւը եղած է հեքուսովեպը. ապա եկած են երգն ու գրայցը եւ այլ ձեւեր:

4.— Ձրոյցները, երգերը սովորաբար ըսուած են նուազի եւ պարի ընկերակցութեամբ: Նուազարաններէն կը յիշատակուին եղբգնեայ փողը, պղնձեայ փողը, սրիմգը (որոնք շշական նուազարաններ են), ֆնարը, վիմը, տաւիղը, փանթիղը (լարաւոր), քըմբուկը, ծնծղան (թնդական): Պարերէն կը յիշատակուին կափաւփ, կայքփ, պարանցիկ պարերը:

1.- ԱՌԱՍՊԵԼ

Բանահիւսութեան ամէնէն հին սեռերէն (տեսականերէն) մէկն է առասպելը: Առասպելը ընդհանրապէս չափածոյ (այսինքն՝ ոտանաւոր) և յարաբերաբար երկար պատմութիւն մըն է, ուր կ'երգուին երեսակայական ազգային հերոսներու քաջագործութիւնները, ընկերային կեանքի այլազան անցուղարձեր: Առասպելին հիմնական յատկանիշը չափագանցութիւնն է: Հերոսները կը կատարեն գերմարդկային քաջագործութիւններ: Սովորաբար հրաշագործ էակներ կը միջամտեն պատմութեան եւ ուղղութիւն կու տան անոր:

Կրնանք առասպելին հիմնական յատկանիշները ամփոփել հետեւեալ վեց կէտերուն մէջ.

- 1.— Առասպելը սովորաբար չափածոյ է.
- 2.— Յարաբերաբար երկար է.
- 3.— Պատմում մը (պատմութիւն մըն է).
- 4.— Հերոսները ազգային են.
- 5.— Հրաշագործ էակներ կը միջամտեն.
- 6.— Զափագանցութիւնը հիմնական է:

Առասպելը, յաճախ, ստեղծուած կ'ըլլայ բնութեան հանելուկային թուող երեւոյթներուն որպէս բացատրութիւն: Հին առասպելներու մէջ բնութեան ուժերը կը ներկայացուին որպէս անձեր, եւ այդ անձերուն այս կամ այն արարքին կը վերագրուին բնութեան մէջ յայտնուող երեւոյթները: Օրինակ, ծովը կը փոթորկի որովհետեւ ծովի չաստուածը բարկացած է:

Առասպելներուն մէջ, ժողովուրդները իրենց հերոսները կը դասեն աստուածներու կարգը եւ կամ կը նկատեն անոնցմէ սերած:

Առասպելները ժողովուրդին համար ունեցած են չորս գլխաւոր նշանակութիւն. եղած են 1) Արուեստ, 2) Յեղային (ազգային) պատմութիւն, 4) Կրօնք, 4) Գիտութիւն:

Հայ ժողովուրդն ալ, իր հեռաւոր անցեալին՝ ստեղծած է առասպելներ, որոնցմէ ոմանք յետագային գրի առնուած են: Օրինակ, «Հայկ եւ Բել», «Տորք Անգեղ», «Արտաւազը», «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» առասպելները:

Ահա հատուածներ Ղազարոս Աղայեանի «Տորք Անգեղ»էն, որուն նիւթը առնուած է Մ. Խորենացիէն: (Յատկանշական է այն

պարագան, որ Տորք Անգեղ՝ հակառակ որ անտաշ ու բիրտ ուժի ներկայացուցիչն է, նաեւ արուեստագէտ է. «Եղունգով կը փորէ պէս-պէս նկարներ՝ ժայռերուն վրայ...»):

Տ Ո Ր Ք Ա Ն Գ Ե Ղ

Շատ դարեր առաջ հին Հայաստանում Տորք Անգեղ անուամբ մի մարդ էր ապրում: Տորքը չէր նման հասարակ մարդու, Այլ մի ածղանա եւ շատ տեսակաւ...:

...Առիւծն ու վագրը նրան տեսնելիս, Սովոր շան նման մօտն էին գալիս, կարծում էին թէ նա՛ էլ է գազան, Եւ նա է իրենց զօրաւոր արքան:

Փաթաթում էին նրա սունբրին Եւ կաղկանձելով աղերսում բաժին: Նա էլ տալիս էր սնունդ բաւական Եւ հօտի վրայ կարգում պահապան:

...Եւ նա բռնում էր, բռնոտում այսպէս՝ Եղնիկ, Եղջերու եւ այլ ի՛նչ ասես: Բասն, երեսուն երէ շալակած, Գնում էր հօտը՝ յոգնած ու քրտնած:

Առիւծն ու վագրը դէմն էին գալիս, Նրա սուն ընկնում ու բարեւ տալիս Եւ խնդրում էին դիւցազն Տորքից Համեղ ընթրիքին լինել մասնակից:

...Նա դեռ պատանի ժայռեր էր նեղում, Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էր կոկում, Ճեղքում, յղկում էր քարէ տախտակներ, Եղունգով փորում պէս-պէս նկարներ...:

...Ծերունու առջեւ Տորք եւ Հայկանոյշ Ծունկ դրին ինչպէս երեխայք բնօրշ. կաղնի պսակներն առաւ ծերունին, Օրհնելով դրաւ երկուսի գլխին:

2.- ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Դիւցազներգութիւնը երկարաշունչ, չափածոյ պատմում մըն է՝ ազգային առասպելական հերոսներու՝ դիւցազուններու մասին:

Դիւցազներգութեան մէջ ալ, ինչպէս առասպելին, հերոսները օժտուած կ'ըլլան գերբնական կարողութիւններով: Սակայն, եթէ առասպելին հերոսները երեւակայական են մեծ մասամբ, դիւցազներգութեան հերոսները, թէեւ յաճախ կրնան անուշով չհամապատասխանել իրականութեան, բայց իրենց զործով ու կեանքով իրական են ընդհանրապէս:

Հայ ժողովրդական հին դիւցազներգութեան մէջ ծանօթ են «Տիգրան եւ Աժդահակ», «Վահագն», «Արտաշէս եւ Արտաւազդ» դիւցազներգութիւնները: Յետադայ դարերուն յորինուած ժողովրդական դիւցազներգութիւններէն ամէնէն ծանօթն է «Սասմայ Ծոերը» (Ժ. դար Գ. Ե.):

Ահա փշուրներ Հայ հին դիւցազներգութենէն.

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

1

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ եւ ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ եւ գկարմրիկ եղէգնիկն.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող՝ բոց ելաներ.
Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ուներ,
Ապա թէ բո'ց ուներ մօրուն,
Եւ աչկունքն էին արեգակունք:

(Երկունքի մէջ էին երկինքը, երկիրը, ծիրանի ծովը եւ կարմրիկ եղէգնիկը: Եղէգին փողէն ծուխ կ'ելլէր, բոց կ'ելլէր եւ բոցին մէջ կը վազէր խարտեաշ պատանեկիկ մը: Ան հրեղէն մազեր ունէր, բոցեղէն մօրուք եւ արեգակի նման աչքեր):

2

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ,
Եւ հանեալ գոսկեօղ շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաբեւ ընդ գետն,
Եւ ձգեալ գոսկեօղ շիկափոկ պարանն,
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցեալ ի բանակն իւր:

3

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:

4

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ գառաւօտն Նաւասարդի,
Զվագելն եղանց,
Եւ զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուստ
Եւ թմբկի հարկանէտք,
Որպէս օրէն է թագաւորաց:

5

Դու յորս հեծցես յԱզատ ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս,
Անդ կացցես եւ զոյս մի՛ տեսցես...

ԴԻՏՏԵԼԻ ԿԷՏԵՐ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

1.- Գեղեցիկ է Վահագնի ծնունդին նկարագրութիւնը.

2.- Յատկանշական է այն քնքուշ վերաբերումը, որ ցոյց կը տրուի իրական սեռին հանդէպ՝ աւելի քան քսան դար առաջ յօրինուած այս ոտանաւորին մէջ:

3.- Ուշադրաւ է այն պարագան որ՝ Արտաշէսին (այր մարդու մը) առիթով ոսկի կը տեղայ, եւ Սաթենիկին (կնոջ մը) առիթով՝ մարդարիտ: Ոսկին կարծր է եւ կը խորհրդանշէ նաեւ նիւթական ուժը: Մարդարիտը ճերմակ է, նուրբ, թեթեւ, կնոջական:

4.- Հատուածը ունի յանգ. յուղիչ է եւ տխուր:

5.- Տողերուն վերջին մասերուն կրկնումը յատուկ է դուսանական, աշուղական բանաստեղծութեան:

* * *

Գրողներ զրական վերամշակումի ենթարկած են ժողովրդական դիւցազներգութիւններն ու առասպելները: Այսպէս՝ Յ. Թումանեան իր «Սասունցի Դաւիթ»ը զրելու համար օգտագործած է հայ ժողովուրդին կողմէ յօրինուած համանուն բանաւոր ստեղծագործութիւնը: Ղ. Աղայեան, նմանապէս, դիմած է ժողովրդական անգիր ստեղծագործութեան իր «Տորք Անգեղ» դիւցազներգական բանաստեղծութեան համար: Հայր Ա. Բագրատունի, նոյնպէս, իր «Հայկ Դիւցազն» երկին ատաղձը առած է հայկական բանահիւսութենէն:

Կան նաեւ դիւցազներգութիւններ, որոնց նիւթերը առնուած են ուղղակի պատմութենէն կամ կեանքէն, եւ ո՛չ թէ բանահիւսութենէն. (այս նիւթերուն մասին ժողովուրդը ստեղծագործութիւն չէ յօրինած. եւ կամ եթէ յօրինած է՝ մեղի չեն հասած): Ասոնք ունին անհատ հեղինակներ եւ դրուած են ժողովրդական դիւցազներգութեան նմանողութեամբ: Օրինակ՝ Դանիէլ Վարուժանի «Արմենուհին»: Զանոնք կը կոչենք գրական դիւցազներգութիւն, միւսները՝ ժողովրդական դիւցազներգութիւն:

Կը պատահի որ ժողովուրդը մասնաւոր սէրով մը կապուի իր հերոսներուն մէկին, անոր անձին շուրջ հաւաքէ ուրի՛շ հերոսներու ալ քաջութիւններէն ոմանք, անոր մէջ մէկտեղէ իր առաքինութիւններէն եւ ձգտումներէն շատերը եւ զայն բարձրացնէ ազգային հերոսի դիրքին: Այսպէս. Սասունցի Դաւիթը հայերու ազգային (իրենց ազգը ներկայացնող) հերոսն է, իսկ «Սասմայ Ծոեր» դիւցազներգութիւնը՝ ազգային հերոսավէպը:

Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցն է, որ ժողովուրդին բերնէն հաւաքած եւ գրի առած է «Սասմայ Ծոեր» դիւցազներգութիւնը: «Սասմայ Ծոեր»ը կարելի է բաժնել չորս մասի. — 1) Սանասար եւ Աղբամեղէք, 2) Առիւծաձեւ Մհեր, 3) Սասունցի Դաւիթ եւ 4) Պզտիկ Մհեր:

Ահա հատուած մը «Սասունցի Դաւիթ»էն.

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ Ը

Գնաց, խասաւ մօտ Մարամեղիք, ասաց.
— Մարամեղիք, էն տիր ծի խաբեցիր,
Մկա էլ ի՛նչ տ'անես:

Մարամեղիք ասաց. — Դ'արի, նստի:
Ասաց. — Ես չեմ նստի, կռիւ անենք:
Մարամեղիք ասաց.
— Կռիւ գօրո՞վ, քէ նոբըքով ի:
Դաւիթ ասաց. — Նոբըքով ի:
Որ նոբըքով ի՛ նոբաք վի՞րն ի.
Դաւիթ ասաց. — Նոբաք բռնն ի:

(Մարամեղիք կը հարուածէ երեք անգամ, բայց չի յաջողիր սպաննել Դաւիթը: Հարուածելու հերթը կու դայ Դաւիթին):

Մարամեղիք ասաց.
— Դաւիթ, ես մտնիւք կ'ուզեմ քեզ:
Դաւիթ ասաց. — Հի՞նչ կ'ուզես:
— Կ'ուզեմ, որ քառսուն գազ խուր փորեմ:
Դաւիթ ասաց. — Փորի՛:
Մարամեղիք ասաց.
— Ես էրթամ, ընկնեմ մըջ խորուն,
Քառսուն ջաղցի քար քաշեմ վար իմ,
Քառսուն դրդած գովշի կաշի լէ առնեմ,
Քցեմ վար ջաղցի քարին:
Դաւիթ ասաց. — Քցի՛...

(Դաւիթ իր առաջին երկու հարուածներէն հրաժարելէ ետք՝ կը պատրաստուի երրորդին):

Դաւիթ գնաց, էկաւ,
Ասձու անուն էտու,
Յիշեց զՄարութայ Բանարիկ Աստուածածին,
Խաչ Պատարագին, ինչ վար ուր աջ թելին,
Զիւր մէկ գորգ էգար:
Որ էգար, Ասձու հրամանքիւ
Զքառսուն ջաղցի քար լէ կտրեց:
Մարամեղիք կանչեց, ասաց.
— Դաւիթ, կո ես դեռ էտեխն իմ:
Դաւիթ ասաց. — Մարամեղիք, քէ քափ տուր մէկ:
Ինչ Մարամեղիք գինք քափ էտուր՝
Մէկ կտոր ընկաւ էտեխ, մէկ՝ էնտեխ...:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՆ. ԳԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ(*)

ԳԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ «գիրք»երու՝ չաստուածներու, պատմութիւնն է. հեթանոսական շրջանի մարդոց կրօնքն է:

Ժողովուրդները, իրենց պատմութեան հնաւոյն շրջաններուն՝ երբ դարգացումի ցած մակարդակի վրայ կը գտնուէին՝ երեւակայական պատկերացումներու միջոցով ձգտած են բացատրել բնութեան, մարդկային հոգիին, ընկերային կեանքին այլազան երեւոյթները: Այսպէս, իրենց երեւակայութեան մէջ ստեղծած են գերբնական էակներ, աներեւոյթ ոգիներ, չաստուածներ, չաստուածուհիներ, եւ զանոնք նկատած են ստեղծիչն ու ղեկավարը տիեզերքին ու մարդկային կեանքին: Անոնց համար կառուցած են մեհեաններ եւ պաշտած են զանոնք:

Հայկական դիցարանութիւնը դրի չէ առնուած. անկէ մեղի հասած են փշուրներ միայն՝ ցրուած հին մատենապարտութեան մէջ:

ԱՐԱՄԱԶԴ — Հայկական դիցարանութեան գլխաւոր չաստուածն է Արամազդը, որ կը համապատասխանէ Յունական Զեւսին: Արամազդը չաստուածներու հայրն է. ինք ստեղծած է չաստուածները, ինչպէս՝ երկինքն ու երկիրը. ինք է երկրին լիութիւն եւ պարարտութիւն պարգեւողը:

Արամազդը ունեցած է մէկ արու զաւակ՝ Միհրը, եւ երկու աղջիկ՝ Անահիտը եւ Նանէն:

ԱՆԱՀԻՏ — Անահիտը կը համապատասխանէ Յունական Արտեմիս դիցուհիին, որ եղած է նաեւ որսորդ չաստուածուհի: Ան եղած է առաքինութիւններու չաստուածուհին, «մայր ամենայն զգաստութեան». ինչպէս նաեւ «բովանդակ մարդկութեան բարբառ», «հայ ժողովուրդին փառքն ու կեցուցիչը»:

ԱՍՏՂԻԿ — Անահիտը եւ Աստղիկը միեւնոյն դիցուհիին տարբեր անուններն են: Յետագային Անահիտ-Աստղիկ չաստուածուհիին պաշտամունքը բաժնուած է երկու ճիւղի, եւ Անահիտն ու Աստղիկը դարձած են տարբեր չաստուածուհիներ. Անահիտը եղած է զգաստութեան (առաքինութիւններու) դիցուհին, իսկ Աստղիկը,

*) Տե՛ս՝ «Հայ ժողովուրդի Մտաւոր Մշակոյթի Զարգացման Պատմութիւն», Ա. Գ. Աւաքելեան, Երեւան, 1959:

որ վահագնի կրնն էր՝ սիրոյ եւ ղեղեցկութեան դիցուհին: Յունական դիցարանութեան մէջ Աստղիկին կը համապատասխանէ Ափրոսիթէն: Աստղիկը նկատուած է նաեւ ջուրի դիցուհին:

ՆԱՆԷ — Աստղիկին քոյրը եւ Արամազդին դուստրն է Նանէն, որ եղած է դիցուհին տանտիրնութեան եւ մայրութեան, ինչպէս նաեւ՝ հնարագիտութեան եւ իմաստութեան: Յունական դիցաբանութեան մէջ Աթենասն է իմաստութեան դիցուհին:

ՎԱՀԱԳՆ — Հայկական դիցարանութեան մէջ Վահագնը քաջութեան չաստուածն է, ինչպէս Հերակլեսը՝ յունականին մէջ: Վահագնը կոչուած է «վիշապաքաղ», որովհետեւ կռուած է վիշապներու դէմ եւ յաղթած: Ան երկինքին մէջ կռուած է նաեւ Բարշամին հետ եւ անոր յարդը գողցած է: Ճամբան թափած է յարդը եւ անկէ զոյացած է Ծիր Կաթինը՝ «յարդգողի ճանապարհը»: Վահագնը եղած է նաեւ ամպրոպի չաստուածը:

ՄԻՀՐ — Կրակի չաստուածն է Միհր. ան կը համապատասխանէ յունական Հեփեստոսին:

ՏԻՐ — Տիրը աստուածներու հայր Արամազդին գրագիրն է. ան չաստուածն է ուսումի, գիտութեան, արուեստներու, բուշակութեան, երագներ մեկնելու: Կը համապատասխանէ յունական Հերմեսին եւ Ապոլոնին:

ՎԱՆԱՏՈՒՐ — Վանատուրը, որուն անունին կապուած են Նաւասարդեան տօնախմբութիւնները, պողաբերութեան չաստուածն է եւ բերքերու խնամակալը: Յունաստանի մէջ պողաբերութեան չաստուածն է Տիոնիսիոսը: Վանատուրը նկատուած է նաեւ հիւրընկալութեան եւ գինիի չաստուածը:

ՍԱՆԴԱՐԱՄԵՏ — Սանդարամետը ստորերկրեայ աշխարհին, այսինքն՝ մեռելներու աշխարհին գաղափարն է: Յունական դիցարանութեան մէջ Հատեսն է չաստուածը ստորերկրեայ այդ աշխարհին՝ ուր կը փոխադրուէին մեռելներու հոգիները:

Բացի վերոյիշեալ չաստուածներէն՝ հայ ժողովուրդը, հեռաւոր անցեալին պաշտած է նաեւ արեւը, լուսինը, աստղերը, բոյսերը, ջուրը, գետերը, կենդանիները, քաղաւորները, հերոսները, եւ այլն:

(Բանաստեղծներ, յատկապէս անցեալին, երգեր հիւսած են զիցարանական զէմքերու եւ անցուղարձերու մասին: Ահա երեք հատուած Դ. Վարուժանէն, առաջին երկուքը հայկական զիցարանութեան վերաբերող, երրորդը՝ յունական:

Վ Ա Հ Ա Գ Ն

Ո՛վ Աստուածն իմ հայրերուս,
Կը մօտեցամ ահա բազմիդ, եւ ինձ հետ
Իր պախուրցէն քաշելով
Կը բերեմ ցուլ մ'հովիտներէն Տարօնի...:

...Ո՛վ դուն վահագն, աստուածահայր գօրութեան,
Ո՛վ Տիգրանի սերմին մէջ
Դուն մարդացած Արեգակ,
Լուս՝ հագիս, ցառագայթով մը օժէ
Շրթունքներս այս, զի աւասիկ կ'համբուրեմ
Բագինդ սուրբ, եւ առած մուրնը ահեղ
Սպասարկու հաստ բազուկով կը ջարդեմ
Ցուլիս ցակատն եւ իր արիւնն յարդավէժ
Կը նուիրեմ ծունկերուդ...:

Վ Ա Ն Ա Տ Ո Ւ Ր

Նստած պարարտ եզիդ վրայ, օ՛, Վանատուր,
Մէկ ծագէն միւսը կ'անցնիս
Հայրենական դաշտերուն:
Մեռա՛ն բոլոր մեծ աստուածները, իրենց
Բագիններուն վրայ մամուռը կ'անի:

.... Ահա աշունն ու արիւններն իր յուրփի-
Որքատունկա՛վ պսակուէ, օ՛, Վանատուր:

.... Իսկ դուն, Աստուածդ գուարք,
Աստուածդ գէր, վարդերես,
Ա՛ն դաշխուրանդ, ըմպէ՛ արիւնը աշնան:

ՄԵՌԱԾ ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ(*)

... Մեռա՛ր դուն,
Ո՛վ Ապողոն, որուն կառէն քառաձի
Կու գար խրիսիզն Արեւուն:
Սիրամարգներ չեն քաշեր
Հերայի սայլն՝ որ ունէր լոյս սարիքներ...
Ձե՛ն արծարծեր ոտնաթելերն Հերմեսին
Աստղերը որք երկնքին:

Անտառին մէջ, Անահի՛տ,
Ա՛լ չեմ լսեր շանդ հաջիւններն՝ ետեւէն
Նախընտրած գէր երէիդ.
Կապարնդ հողին տակ կը փտի. լիներէն
Ջուրն իր խմել կ'երթայ եղնիկը անվախ:
Ձի՛ պսակուիր Պանը շոճով. ամէն ցալս
Անոր շունչով նորէն առոյգ չի՛ ծաղկիր:
Դափ չէ՛ք գարներ, Այծեմարդեր բարեկիր...:

Յաւերժարսե՛ր, մեռա՛ք դուք...
Լուսազմայլիկ ազրիւրին մէջ չեմ տեսներ
Բիրերուդ կայծն, անբա՛խտ Նարգիս:
Մեռաւ Սիրենը ժայռին տակ Սիկիլեան,
Կ'անցնի նաւագն անկէ առանց դիւրութեան...:

3.- Հ Ե Ք Ի Ա Ք

Հեքիաթը այլարանական(**) և երեւակայական արձակ պատմուածք մըն է՝ կազմուած միախառնումովը իրական եւ անիրական տարրերու: Հերոսներն են մարդիկ, կենդանիներ, ինչպէս նաեւ՝ երեւակայական էակներ, — վիշապներ, ոգիներ, դեւեր, հրէչներ:

*) Ուսուցիչը ծանօթութիւններ կու տայ Ապողոնի, Հերայի, Հերմեսի, Արտեմիսի (Անահիտի), Պանի, Այծեմարդերու, Յաւերժարսերու, Նարգիսին եւ Սիրեններու մասին:

**) Այլարանութիւնը խօսքի ձեւ մըն է, որով բան մը կ'ըսուի՝ ուրիշ բան մը հասկցնելու համար:

Հեքիաթը ազգային չէ անպայման. (սովորաբար չ'ըսուիր թէ հերոսները ո՛ր ազգին կը պատկանին: Հեքիաթը ընդհանրապէս կը սկսի «Կար ու չկար...»ով):

Հեքիաթը պարզապէս շինծու, մտացածին պատմութիւն մը չէ. իրական կեանքին եւ հեքիաթին միջեւ կայ ներքին կապ. հեքիաթը կը փոխանցէ իմաստուն դաղափարներ, կը ներշնչէ քաջութիւն, կը բերուի երեւակայութիւնը, հաճոյք կը պատճառէ, կ'ուսուցանէ:

Հեքիաթները առ հասարակ կ'ունենան երկու կարգի հերոսներ, — բարի եւ չար: Պատմութեան վերջաւորութեան բարին կը յաղթանակէ ընդհանրապէս:

Հեքիաթները կրնան, մէջընդմէջ, երգուելիք չափածոյ մասեր ունենալ:

Նոր ժամանակներու մէջ, ժողովրդական հեքիաթները դրական վերամշակումի ենթարկած են կարգ մը դրողներ, ինչպէս՝ Ղ. Աղայեանը («Անահիտ»), Յ. Թումանեանը («Ոսկի Քաղաքը»), Ռ. Զարդարեան («Զարնուած Որսորդը»), Ա. Իսահակեանը («Արեւի Մօտ»), եւ այլն:

Հեքիաթներ գրող (վերամշակող) արուեստագէտները կը կոչենք հեքիաթագիր:

Ահա ժողովրդական հեքիաթ մը.

ԽԵԼՔՆ ՈՒ ԲԱՍՏԸ

Խելքն ու Բաստը խօսեով կռիւի բռնուեր էին: Բաստը կ'ըսէր.

— Մարդիկ ինձմ'վ մարդ են:

— Զէ', ինձմ'վ, — կ'ըսէր Խելքը:

Թեպէտ դատաւորի չգնացին, բայց իրենց մէջ պայման դրին որ մէկը մէկալի ըրածին չխառնուի: Իրենց այս պայմանը տեսնուեցաւ գիւղացիի մը վրայ:

Գիւղացին ըստ իւր սովորութեան առաւ արօրն ու գնաց արտը վարելու. հարօրն ասըռաւ ախօսի մէջ. մարդը տեսաւ որ հօ', գուգում մի կայ հողի մէջ. վերցուց որ մէջը իլին ոսկի: Է', ի'նչ անեմ, ի'նչ չանեմ: Մէյ մը կը մտածէ որ շատ մեծ բաներ կրնամ ընել, շատ մեծ մարդ կրնամ լինիլ. մէյ մ'ալ կը մտածէ որ հապա թէ որ գողերն իմանան, գան գողնալու, ես դիմանամ, գիս սպանեմ...:

Այս շուարման մէջ կը տեսնայ որ իրենց երկրի դատաւորը նանապարհէն կ'անցնի. կ'որոշէ թէ ոսկիները տամ. դատաւորին, եւ ես հանգիստ գործիս նայիմ: Կը վազէ, կը կանչէ դատաւորը՝ որ կը բերէ իր արտին մէջ:

Մարդուն Խելքը գլուխը կու գայ, ոսկին կը ծածկէ ու կ'ըսէ.

— Աղա', դու դատաւոր մարդ ես, գիտուն ես, ինձ ասա', իմ այս երկու եզներէն ո՛ր մէկն է աղէկ:

Դատաւորը նեղսրտելով կը թողու կ'երթայ: Խելքն ալ կը հեռանայ, ու մարդը նորէն կը շուարի թէ ինչո՛ւ ոսկիք չտուի, ի'նչ պիտի ընեմ, ո՛ր պիտի պահեմ: Մինչեւ իրիկուան անգործ կը մնայ ու այս բանի վրայ կը մտածէ. կը տեսնայ որ դատաւորը գեղէն դարձաւ կ'երթայ. կը վազէ առջեւ, կ'աղաչէ որ մէկ անգամ էլ գայ իր արտը՝ իր լուծփի խեչ ու երթայ: Դատաւորը կը զգայ որ բան մը կայ աստեղ, կու գայ: Մարդուն խելքը գլուխը կու գայ, եւ դատաւորին կ'ըսէ.

— Կ'աղաչեմ, չառնուիս. այս իմ արտին նայէ, երկուան վաթ՞ծս շատ է թէ այս օրուան. դուն գիտուն մարդ ես:

Դատաւոր ծռու տեղ կը դնէ մարդը ու ծիծաղելով կը հեռանայ: Խելքն ալ կը հեռանայ ու արտի մէկ կողմն կը նստի: Մարդն իր գլուխը կը ծեծէ, ու կ'ըսէ.

— Ջանքմ, ինչո՛ւ չտուի. հա', հա', ես ո՛ր պահեմ, ու ինչպէ՛ս պահեմ:

Կը բերէ գուգում ոսկին՝ կը դնէ հացի մէկաքի մէջ, կը շալկէ, կու գայ տունը, կը կանչէ.

— Կնի'կ, կնի'կ, գեզներ կապէ, խոտ տուր, արօրն առ ներս, ես երթամ դատաւորին՝ գամ:

Կնիկ կը նայի որ մէկաք էրկան շալակն է, ու մէջը բան մը կայ, ու չդնէր վար. կը մտածէ որ նոր բան մը պիտի եղնի. ի'նչ ընէ որ իմանայ: Կը պատասխանէ էրկան թէ՛

— Եզներ կապել իմ ի'նչ գործն է. ես ոչխարն ու կովեր ներս կ'առնեմ, կը կթեմ, դու քո եզներ կապէ, ո՛ր կ'երթաս՝ գնա':

Մարդը մէկաք կը դնէ դուռը, եզներ ներս կ'ընէ, եւ մինչեւ կը կապէ կ'ելնէ, կնիկն մէկաք բացեր, ոսկիներն առեր ու անոր չափ քար մի պլորեր, դրեր իր տեղը: Մարդը շուտմաշուտ կ'առնէ մէկաք՝ կ'երթայ կը դնէ դատաւորի առջեւ.

— Ա՛ն աս, քեզ ընծայ եմ բերեր, — կ'ըսէ.

Կը բանան որ քար մ'է. մարդն ալ կը գարմանայ, ու դատաւոր կը նեղարտի, բայց կը մտածէ թէ այս մարդուն մօտ խօսք մը, բան մի պիտի լինի:

Կը դնէ բռնատուն, ու երկու մարդ կը դնէ դուռը, որ նային թէ ի՛նչ կ'ընէ ու ի՛նչ կ'ըսէ, իրեն իմաց տան: Մարդն ինքզինքին մտքով կ'ըսէ, ու ձեռքերով կ'ընէ. «Գուգումն ա՛յստան էր, բերանը՝ ա՛յստան, փորն՝ ա՛յստան, տակն՝ ա՛յստան, ու մէջի ոսկին՝ ա՛յստան»: Նայողներ կը պատմեն դատաւորին թէ երկու ձեռքով բան կը չափէ ու խօսք չ'ըներ:

- Կանչեցէ՛ք, - կ'ըսէ դատաւոր:

Մարդը կը բերեն, եւ կը հարցու թէ՛

- Ի՛նչ բան էր ձեռներովդ կը չափէիր:

Մարդու հեղքը կու գայ գլուխը եւ պատասխան կու տայ թէ՛

- Ես կը չափէի քո գլուխն ա՛յստան է, քո վիզն՝ ա՛յստան, քո փորն՝ ա՛յստան, քո մօրուսն՝ ա՛յստան, ու կ'ըսէի թէ դո՞ւ ես մեծ թէ մեր մօրուսն է՞ծը:

Սաստիկ կը բարկանայ դատաւոր ու հրաման կ'ընէ որ տանին կախսն այս մարդը: Կը տանին որ մօպանը ճիտը պիտի ձգեն, կ'ըսէ:

- Զիս մի՛ խեղդէք, կը խօսիմ:

Դատաւոր հրաման կ'ընէ որ ճիշդ ըսէ թէ ի՛նչ էր կը չափէր բռնատան մէջը: Մարդը կ'ըսէ.

- Ես գէս ու գէն չեմ գիտեր, ատրցէ՛ք՝ թէ որ մօպան իմ ճրտէն չեանէի՛ք, ես պիտի խեղդուէի. ահա՛ ձեզի ճշմարիտն:

Ատր վրայ կը ծիծաղի դատաւորն ու կ'ազատէ մարդը: Մարդը կու գայ տունը. իր Բախտն ու հեղքը մեղայ կու տան իրարու, կը միաբանին ու կ'ըսեն.

- Բախտը՝ հեղքով, հեղքն ալ Բախտով կրնան մարդը մարդը ընել:

Հաւաքեց՛

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

4.- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Ժողովրդական երգերը («երգ» բառով պէտք է հասկնալ թէ՛ երգը եւ թէ՛ երգին բառերը) ստեղծուած են առաւելաբար դիւզացիութեանն հողմէ, առօրեայ կեանքի եւ աշխատանքի ընթացքին, տիրութեան թէ խինդի պահերուն եւ փոխանցուած են յաջորդող սերունդներուն՝ բերանացի: Կան՝ աշխատանքի, սիրոյ, սուգի, երգիծանքի, բնութեան, օրօրոցի, հարսնիքի, խնճոյքի, պանդխտութեան, փառարանութեան երգեր: Այս երգերը հարուստ են իրենց արուեստով եւ բովանդակութեամբ:

Հ Ա Յ Ր Է Ն Ն Ե Ր



Գնա՛մ, կու գնա՛մ՝ կ'աւեր իմ մանչուկն, ես ատալու չ'ի. Երբ բարով մնա՛ ասաց, ես ատու չաւտ կեանքի. Երբ գոտն ի գանկիւն եղիր՝ ես հայրան ի վար մնացի. Այլ բան չկրցի ասել՝ «Ուր երթաս՝ ցամբէկդ ի բարի, Այն ցամբովն որ դուն երթաս՝ վարդ ու մուրտ առջեդ բուսնի. Այն քաղաքն որ դու մտնուս՝ գրողին ձայնը չի հասնի. Այն մանկիսն որ դուն նստիս՝ գաւաթնե՛րըդ գինով լցուի. Ծովերն ալ գինի դառնայ ու նաւերն տաստազանի»:



Այլ ողորմ մարդ չեմ տեսել քան հարուստն որ աղքատանայ, Ի դարիպուրիսն երթայ, հայր ու մայր, եղբայր չունենայ. Յորժամ սիրելի տեսնու՛ նա պահէ գերեսն ու գնայ: Նորս օրինակ բերեմ զկանաչ ծառն ու չորանայ, Տերեւն ալ իւրմէն թափի, շուք ի իւր տակէն հեռանայ:



Ղարիպ եմ ու յոխտ լալի՝ յայս օտար երկիրս որ եկի. Ո՛չ հայր, ո՛չ եղբայր ունիմ, ո՛չ ունիմ սրտով սիրելի. Ինձ սիրելի պիտէր, որ սրտիս սրբուն ասէի, Զհոգիս հոգուն իր տայի, յարեւէս բաժին հանէի:

ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Լուսնակն անո՛ւշ, հովն անո՛ւշ,	Ծովային հովն էր անո՛ւշ:
Շինականի փունն անո՛ւշ:	Դաշտեր, ձորեր մնջեր են,
Ծագեց լուսնակն երկնուց,	Ջրեր գլղան՝ ձէնն անո՛ւշ:
Հովիւի փողն էր անուշ:	Հաւքեր թռան ուրեց բոն,
Հստաղ եզներ կ'արածայ,	Բլբուլի տաղն էր անուշ:
Մանկալ պտկեր, փունն անո՛ւշ:	Անմահական հոտ բուրէր,
Ջղզղուն փամին կը փչէ,	Քափուր վարդի հոտն անուշ:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԵՐԳ-ԱՂՕԹՔ

Անունն ի Աստծուն,	Ընդուն-թռլուն,
Դու տաս յաջողում.	Կերէ՛ք իմ ցանածից,
Էս մէ բուռն՝ անցաւրականին,	Կշտացէ՛ք,
Էս մէգն էլ՝ թռչուններին,	Եւ իմ ցանածին
Էս էլ՝ աղփասներին.	Բարափաթ ասէ՛ք:

ԵՐԳ ԹԱԳԻՈՐ ՀԱԳՑՆԵԼՈՒ

Ան բարձրը լեռներն ի վար, մեզի բարկ արեւ մըն է ցաթեր.
 Ըմմէնուն երգիւնքն ի վար, մեզի դուռն ի ներս նառագեր.
 Ըմմէն ի վրայ եկէ՛ք, թագւորին կապան կապեցէ՛ք.
 Լուսնկան աստառ արէ՛ք, արեգակն երես ձեւեցէ՛ք,
 Ան մոյ ու խռար աստղեր թեւերուն տուկմէ կարեցէ՛ք:

5.- ԱՌԱԾ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՔ

Առածն ու Ասացուածքը շատ կարճ բայց իմաստալից գաղափար մը պարունակող պատկերաւոր արտայայտութիւններ են:

Առածն ու Ասացուածքը տարրեր են իրարմէ անով որ առածը կ'արտայայտէ աւարտած միտք մը, որ սովորաբար խրատական ընոյթ ունի (Օրինակ.— «Ձէ ցանած բայց մանգաղ կը սրէ»), մինչ Ասացուածքը կ'արտայայտէ անաւարտ միտք մը, որ պէտք է լռելեայն ամբողջացնել. Օրինակ.— «Ո՛րքին խրատ, սեւին՝ օճառ»: (Բայց եթէ ըսենք — «Ո՛րքին խրատը օգուտ չունի, սեւին՝ օճառը», վերոյիշեալ ասացուածքը վերածած կ'ըլլանք առածի):

Առածներ են.— «Շունը չունի միւ չ'ուտեր», «Մի՛ թքներ այն ջրհորին մէջ, որուն ջուրը խմեր ես», «Տաշուած քարը գետինը չի մնար», «Գորգը չեն այրեր լուի մը համար», «Ձուկը չընած ծախու չեն հաներ», «Մինչեւ առուն ջուր գայ՝ գորտին աչքը դուրս կու գայ», «Անուշ լեզուն օճը ծակէն կը հանէ», «Մէկ քարով երկու թռչուն զարկաւ», «Կարկուտէն փախանք, անձրեւի բնուեցանք», «Ամէն փայլող բան ոսկի չէ», «Անպտուղ ծառին քար նետող չ'ըլլար»:

Ասացուածքներ են.— «Արջի ծառայութիւն», «Գող՝ սիրալը դող», «Աչքէ հեռու, սիրտէ հեռու», «Գորգեան հանգոյց», «Դանայեան տակառ», «Մեղքը՝ լալով, պարտքը՝ տալով», «Ինք քուն, բախտը արթուն», «Ձուի դող, ձիու դող»:

Առածն ու Ասացուածքը կը դործածուին արտայայտուած գաղափար մը աւելի տպաւորող եւ համոզիչ դարձնելու համար:

6.- ԱՌԱԿ

Առակը բարոյախօսական կարճ պատմութիւն մըն է՝ տրուած խօսակցութեան միջոցով: Պատմութեան հերոսները ընդհանրապէս կ'ըլլան կենդանիներ, բոյսեր, եւ երբեմն՝ մարդիկ:

Առակը կը կազմուի առածին հիման վրայ: Օրինակ. «Մըրջիւնն ու ձպուռը» առակը կրնայ կազմուած ըլլալ — «Ով որ խաղայ ամռան՝ կը դողայ ձմռան» առածին վրայ: Առակին բարոյականը յայտնուած կ'ըլլայ սկիզբը, պատմութեանէն առաջ, եւ կամ վերջաւորութեան պատմութեան աւարտումէն ետք:

Ժողովրդական առակը ընդհանրապէս կ'ըլլայ արձակ: Ծանօթ առակներ են.— «Մըրջիւնն ու ձպուռը», «Աղուէսն ու Արագիլը», «Փայտահատն ու Մահը», «Արջն ու Օճը», եւայլն:

Գրողներ յաճախ գրական մշակումի ենթարկած են ժողովրդական առակները՝ ոտանաւորի ձեւով: Մեր գրականութեան մէջ նշանաւոր են որպէս առակագիր Մխիթար Գօշն ու Վարդան Այգեկցին, որոնք ապրած են 12-13րդ դարերուն, Պ. Արովեանը 1805-1848, Ղ. Աղայեանը, Յ. Թումանեանը, եւայլն: (Առուելաբար Արեւելահայ գրողներն են, որոնք մշակած են այս սեռը):

Միջազգային գրականութեան մէջ որպէս առակագիր հռչակաւոր են Եղովթսը (Յոյն), Լա Ֆոնթենը (Ֆրանսացի), Կոլիովը (Ռուս):

ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԿԱՔԱԻԸ

Աղւիս զկախաւ պոնից:

Կախաւ ըսաւ.— Աղւիս, ի՛նչ տ'էնիս.

Ըսաց.— Քի տ'ուտիմ:

Ըսաց.— Փառք տու Աստուծո:

Ինչ փառք իտու Աստուծո՛ կախաւ բերնէն թռաւ:

Աղւիս դարձաւ, էսաց.— Էնու տուն աւիր ըլի, ինչ չուր կուշտ չուտք, փառք տայ Աստուծո:

(Ժողովրդական)



Բեկեալ առիւծու ոտք տրտնջէր գրնաւ կենդանեաց, եթէ —
Հարկատուք ի՛մ էք, զի իշխան գազանաց եմ, ընդէ՞ր այժմ ոչ պա-
տարագիք, զի դարմանեցայց:

Եւ ասեմ.— Զի ի քէն ինչ ոչ գտաք պահպանութիւն ո՛չ յար-
ջոյ, եւ ո՛չ ի գայլոյ, եւ ո՛չ յայլ ի գազանէ: Նա եւ ոչ դո՛ւ իսկ ի
մեզ խնայեցեք: Այլ մեզ պատարագել Աստուծոյ արժան է, որ այդ-
պիսի չարեաց գեղ պատահեցոյց:

Յայտնի է առակիս միտք. զի չարք յառաջնորդաց յաշխար-
հայնոց եւ յեկեղեցականաց՝ տանջելով զհնազանդեալսն, եւ ոչ յայ-
լոց պահեն ի վտանգէ: Եւ ըստ արժանւոյն անկեալք ի չարիս՝ Աս-
տուծոյ գանձութիւն մատուցուի՝ զի ոչ ի մէնջ եղի:

ՄԵԻԹԱՐ ԳՕՇ

Ե Ձ Ն Ո Ի Ձ Ի Ն

Եզն եւ ձին խօսեցան ընդ միմիանս: Ասաց ձին ընդ եզն, թէ —
Դու ո՛վ ես կամ զի՛նչ պէտս ես:

Ասէ.— Ես ձի եմ, որ թագաւորք եւ իշխանք եւ պարոնայք
կազմեն զիս ոսկով եւ արծաթով եւ բազմին ի վերայ իմ:

Ասէ եզն.— Ամէն աշխարհիս շէն եմ ես, որ վաստակիմ եւ
չարչարիմ, եւ խոնջիմ, եւ ապա դու եւ քո թագաւորն ուտէք: Եւ
ամենայն մարդ զվաստակս իմ ուտեն: Եւ թէ ոչ վաստակիմ, դու եւ
քո թագաւորն մէկ հետ մեռանիք, եւ դու երախտամոռաց մի լի-
նար:

Վ. ԱՅԳԵԿՑԻ

ՄԱՐԳԱՐԻՏՆ ՈՒ ՓՐՓՈՒՐԸ

Ծովի երեսն է փրփուրը ելնում,
Փայլփլում մի պահ, իբր մարգարիտ,
Մինչ մարգարիտը խորում է լինում,
Խորփից է ծնում գանձը ճշմարիտ:

Բայց այսպէս խօսեց փրփուրն այդ մասին.
— Ինչո՛ւ տեղ չունես ծովի երեսին,
Թէ մարգարիտ ես... Էլ ի՛նչ մարգարիտ,
Ե՛ս եմ մայր ծովի գանձը ճշմարիտ,
Որ միշտ ջրերի երեսն եմ ելնում,
Ու ե՛ս եմ փայլում,
Կեանքը վայելում...:

Բայց իր վայելքը երկար չտեսց,
Մի քանի ելաւ, փրփուրը ցրուեց,
Հետքն էլ չմնաց ծովի երեսին...
Մինչ մարգարիտը, երբ խորփից հանուեց,
Ձեռքէ-ձեռք խլուեց, «Գանձ է, գա՛նձ», ապին,
«Ահա մայր ծովի միակ փառքը մեծ»:

...Մարդիկ կան, որոնք փրփուրի նման
Միշտ կեանքի ծովի երեսն են ելնում,
Բայց խորում որքա՛ն
Մարգարիտներ կան,
Որոնց փառքը դեռ փրփուրն է խլում:

Յ. ՇԻՐԱԶ

7.- ՀԱՆԵԼՈՒԿ

Հանելուկը շատ կարճ գրութիւն մըն է, որ ընդհանրապէս
կ'ըլլայ չափածոյ, եւ քօղարկուած ձեւով մը կու տայ առարկայի
մը կամ երեւոյթի մը յատուկ եղող նշաններէն ոմանք, ակնկալելով
որ կուահենք թէ ինչի՛ մասին է խօսքը: Օրինակ.

Կարաս մ'ունիմ ես փոքրիկ,
Մէջը երկու գոյնի ջրիկ:

* * *

Անձրեւը հայրն է,
Արեւը մայրն է,
Երկնակամարն իր
Զբօսավայրն է:

Կը շարժի
Ուտ չունի,
Մտրակ է
Կոք չունի:

Հանելուկը թէ՛ կը զուարճացնէ եւ թէ՛ կ'ուսուցանէ: Հայ-
կական բանասիրութիւնը հարուստ է հանելուկներով:

Բ.- ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1.- ԶԱՓԱԾՈՅ ԵՒ ԱՐՁԱԿ

Գրական ստեղծագործութիւնները կ'ունենան երկու ձև —
ԶԱՓԱԾՈՅ (ոտանաւոր, քերթուած, բանաստեղծութիւն) կամ
ԱՐՁԱԿ:

Ժողովուրդներու պատմութեան մէջ, սովորաբար, չափա-
ծոն աւելի կանուխ սկսած է քան արձակը: Եւ այս՝ որովհետեւ,
իրենց կեանքին հնազոյն շրջաններուն երբ դեռ կը գտնուէին դար-
գացումի ցած մակարդակի վրայ եւ չունէին դիր՝ ժողովուրդները
պէտք էր որ ստեղծէին այնպիսի արուեստ մը, որ կարելի ըլլար
դիւրութեամբ զոց սորվիլ, կրկնել եւ փոխանցել ուրիշներու: Այս
եւ այլ պատճառներով՝ ժողովուրդներու առաջին շրջանի ստեղծա-
գործութիւնները ունեցած են կարճ տողեր, տուներ, յանգ, չափ,
այսինքն՝ եղած են չափածոյ: Արդարեւ, չափածոն իր տողերուն
կարճութեամբ, յանգերով, չափերով, կրկնութիւններով եւ երա-
ժշտականութեամբ մեծապէս կը դիւրացնէր զոց սորվելու եւ կրկնե-
լու աշխատանքը, որ այնքան կարեւոր եղած է ժողովուրդներու
մշակութային կեանքին մէջ՝ հեռաւոր անցեալին:

Կայ աւելին. Բանաստեղծութիւնը լեզուն է առաւելաբար
զգացումի, արձակը՝ մտածումի: Եւ այս՝ հաւանաբար այն պատ-
ճառով որ ժողովուրդները, հնազոյն դարերուն, երբ դեռ մանուկ
էին իրենց խառնուածքով եւ մտածելակերպով, եղած են աւելի՛

զգացող, քան թէ՛ մտածող, ինչպէս կ'ըլլան մանուկները առհա-
սարակ. եւ իրենց ստեղծած արուեստն ալ, այսինքն՝ չափածոն,
եղած է առաւելաբար զգացական: Արձակը ընդհանրացած եւ իր
կատարելութեան հասած է սովորաբար չափածոյէն ետք եւ ժողո-
վուրդներու կեանքին նորազոյն շրջաններուն:

Չափածոյի ձև ունեցող գրութիւն մը արձակէն կը դանա-
զանուի յատկապէս անսով որ՝ չափածոն կ'ունենայ կանոնաւոր չափ
եւ յանգ:

2.- Զ Ա Փ Ա Ծ Ո Յ

Ա.- ԶԱՓ

Ոտանաւորին մէջ ամէն տող բաժնուած կ'ըլլայ որոշ թիւով
վանկեր պարունակող մասերու. այս մասերը կը կոչուին հատած
կամ ուտ: Այսպէս. յաջորդ տողերը ունին չորսական հատած.

Ե-կ-ե-դ-ե-ցիւն + հայ-կա-կան + բար-ձր-բերդ-ն է + հա-ւաս-քին
իւ-պա-պե-րուս + որ-հո-ղեմ + գայն-խա-րաւ-խար + հա-նե-ցիւն,
Ու եր-կիւն-էնց + ի-ջու-ցիւն + գայն-ցո-ղաւ-ցող + ամ-պաւ-ամպ,
Ու թաղ-ուե-ցան + ա-նոր-մեջ + հան-դար-տու-թեամբ + հե-զու-
թեամբ:

Հատած մը բաղկացած կ'ըլլայ սովորաբար նուազագոյն եր-
կու, եւ առաւելագոյն հինգ կամ վեց վանկէ: Հինգէ աւելի վանկ-
նոց հատած ունեցող ոտանաւորները ենթակայ են արձակունակ ըլ-
լալու վտանգին:

Հատածներու համաչափ կրկնութիւնն ու կանոնաւոր յաջոր-
դականութիւնը կը կոչուի չափ կամ կշռոյթ:

Ոտանաւորի մը չափին մասին խօսել կը նշանակէ ըսել թէ
այդ ոտանաւորին տողերը քանիակա՞ն հատած ունին եւ իւրաքան-
չիւր հատած քանի՞ վանկէ կը բաղկանայ: Այսպէս. վերի օրինակին
(«Եկեղեցին Հայկական») չափն է՝ 4-3-4-3: Այս կը նշանակէ թէ
բանաստեղծութեան իւրաքանչիւր տողը ունի 14 վանկ, այս 14
վանկերը բաժնուած են չորս հատածի, որոնցմէ առաջինը եւ եր-
րորդը ունին չորսական վանկ, երկրորդը եւ չորրորդը՝ երեքական
վանկ:

Ոտանաւորները կրնան ունենալ հետեւեալ չափերը.

3, 3-3, 3-3-3, 3-3-3-3, 3 3-3-3-3, 4, 4-4, 4-4-4, 4-4-4-4,
4-3, 4-3-4-3, 4-4-3, 4-4-4-3, 5, 5-5, 5-5-5, եւ այլն:

Ահա քանի մը նմուշ .

(3-3-3) Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգաւոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ յաւէտ .
Իմ ուղին միշտ մթին, մեհաւոր .
Կը գնամ իմ դժկամ ցաւի հետ : (Վ. Տ.)

(4-4) Վայրի ծաղիկ, անուղ ի՛նչ է .
Ըսէ՛, մասուր ու կանանչէ
Յանկապատին շուփին նստած
Վայրի ծաղիկ, անուղ ի՛նչ է : (Մ. Մ.)

(4-3-4-3) Լուսնի յոյսը ծառերէն ծաղիկի պէս էր կախուեր .
Ապրիմ մեռնիմ մը ձեռքիս՝ սիրոյ ճամբան ես ինկայ .
Ա՛հ, լսէի՛ր, տերեւին հովը ինչե՛ր կը հծծէր : (Մ. Մ.)

(5-5) Գիշերն անո՛ւշ է, գիշերն հեշտագի՛ն,
Հաշիշով օծուն ու բալասանով .
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով . . .
Գիշերն անո՛ւշ է, գիշերն հեշտագին . . . : (Մ. Մ.)

**

Իւրաքանչիւր հաստածի վերջին վանկը սովորաբար կ'ըլլայ շեշտաւոր : Օրինակ .

Պատուհանի՛ս - տակէն, ամէ՛ն - առաւօ՛տ,
Ուրուականի՛ - պէս կ'անցնի՛ս .
Եւ կուսագե՛ղ - գլխուդ վրա՛յ - կ'արտասուէ՛
Տերեւաթա՛փ - վարդեմի՛ս :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Շեշտաւոր կը նկատուին բացի Ը-է՛ միւս ձայնաւորները պա-
ռուականոյ վանկերը : (Անշեշտ են՝ էական բային հաստատականի
Սահմանական ներկան եւ Անցեալ Անկատարը, նաեւ երբ ծառայած
են կազմելու այլ բայերու բաղադրեալ ժամանակները (Յարակա-
տար, Գերակատար, Եւայլն) : Հետեւաբար հաստածի մը վերջին
վանկին ձայնաւորը «Ը» պէտք է ըլլայ՝ գրուող թէ անգիր «Ը» :

ձիշդ չէ նաեւ էական բային Հաստատական ձեւի Սահմանականի
Ներկայով եւ Անցեալ Անկատարով աւարտել հասած մը : Պէտք է
նայնպէս մոռնալ թէ բայերու ժխտականին մէջ՝ երբ էականի ժըխ-
տականով կազմուած են - «չէ խօսած», «չէ խօսեր», «չի խօսիր» - ,
շեշտը կը դրուի էական բային վրայ : Կ'ըսենք - «կը գրէ՛ր», բայց
«չի՛ գրեր», «կը գրէ՛ք», բայց՝ «չէ՛ք գրեր» :

Ճիշդ չէ գրել - «Տեսայ գիւղը / ու կանչեցի / որ գայ պար-
տէզ», (4 - 4 - 4) - : Զիւղը բառին վերջին «Ը» գիրը եկած է հա-
տածին վերջաւորութեան : Կարելի է սրբագրել այսպէս - «Զինքը
տեսայ / ու կանչեցի / որ գայ պարտէզ» :

Ճիշդ չէ գրել - «Բացած ափը / ան կը մուրաբ / մայթին
վրայ», (4 - 4 - 4) - : Ափը բառին «Ը» գիրը եկած է հաստածին վեր-
ջաւորութեան : Կարելի է սրբագրել այսպէս - «Ափը բացած՝ / ան
կը մուրաբ / մայթին վրայ» :

Ճիշդ չէ գրել - «Բացած ափդ / դուն մուրացիր / մայթին
վրայ», (4 - 4 - 4) : Ափդ բառին վերջին ձայնաւորը անգիր «Ը» մըն
է՛ ափըդ : Կարելի է սրբագրել այսպէս - «Ափդ բացած՝ / դուն
մուրացիր / մայթին վրայ» :

Ճիշդ չէ նոյնպէս գրել - «Ան վազած է / լեռներն իվեր, /
բայց չէ հասած / իր երագին», (4 - 4 - 4 - 4) : Վազած է բային
շեշտը «է»ին վրայ չէ . չէ հասած բային շեշտը «հասած»ին վրայ չէ :
Կարելի է սրբագրել այսպէս - «Վազած է ան / լեռներն իվեր, /
բայց հասած չէ / իր երագին» :

Արձակն ալ ունի չափ . բայց անկանոն է անոր չափը :

Բ. - ՅԱՆՊ. (Եւ ոսանաւորներու կազմը)

Ոտանաւորի մը համար կ'ըսենք յանգ ունի՛ երբ այդ ոտա-
նաւորին բոլոր տողերն ալ, երկու առ երկու առնուազն, կը վերջա-
նան նմանահունչ վանկերով : Տողերուն վերջաւորութեան կրկնուող
նմանահունչ վանկերը կը կոչուին յանգ : Օրինակ .

(4-3) Եւ կամ միթէ կը գմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոյ լուսափթիթ
Որք նմանին փրփուրիդ . . . (Պ. Դ.)

Յանդը ոտանաւորին կու տայ երաժշտականութիւն:

Յանդը պարտադիր չէ: Կան ոտանաւորներ որոնք ունին միայն չափ. զանոնք կը կոչենք անյանգ բանաստեղծութիւն: Օրինակ.

(4-4-3) Լոյսը մարմարն է երկնային հանքերուն,
Որով Արուեստն, անմահական երագով,
Կը քանդակէ ճիւղամարմին աստուածներ:
Իր ծոցին մէջ կը ծնին (4-3)
Մոայլ Տանդէներն ու Հուներները հսկայ,
Իր ծոցին մէջ իմաստութիւնը երգ մ'է
Ջոր գիշերուան մէջ խորին (4-3)
Քանաստեղծները կը խմեն աստղերէն
Որ նուագեն ցերեկուան մէջ՝ մարդերուն: (Դ. Վ.)

Ազատ բանաստեղծութիւնը այն է, որ ունի չափածոյի ձեւ... կտրատ տողեր, տուններ - բայց ո՛չ չափ եւ ո՛չ ալ յանգ: Օրինակ

Հարաւի մեղմ ու լիաշունչ հովին հետ, (4-4-3)
Որ վաղուց երագուած համբոյրի մը պէս, (6-5)
Իմ սիրակարօտ հոգիս հեշտանձով կը լիացնէ, (5-5-5)
Շողա՛, ո՛վ արեւ, շառափներովդ ոսկեծայր, (5-4-3)
Մտախիւսպատ Երկունքիս մէջ (4-4)
Ուր Մտածումը կը դեզերի ուղեմոյար, (5-4-4)
Շողա՛, շողա՛, բարի՛ բարեւ, հիւա՛նդ եմ...: (4-4-3)

Արձակ բանաստեղծութիւնը արձակ գրութիւն մըն է որ դեբազանցօրէն բանաստեղծական է. ընդհանրապէս նկարագրութիւն մըն է տրուած յուզիչ կերպով, քնքուչ եւ երաժշտական բառերով: Օրինակ.

«Ինչպէս գետ մը անհուն, հինաւուրց լեռներու անմատոյց բարձունքներէն ծնած, եւ որ անհաշուելի ժամանակներէ ի վեր արեւուն տակ կը պտըտցնէ իր մեծ քարմ կեանքը մշտապէս ու երգեցիկ, դուն կը վագես դարերուն մէջէն, ո՛վ գեղեցիկ ու քաղցր Լեզու Հայկական:

...Եկան մեծ աղէտի օրեր: Փառքն ու գորութիւնը հեռացան ավերէր: Թշուառութիւնը ծանրացաւ վրադ: Ծանր հովեր իրենց սեւ քեւերով ծոցդ բզբտեցին: Արբուհի անձրեւ մը տեղաց վրադ ու քեզ կարմրցուց: Դիակներու աղիւղորմ շեղջկոյտեր ալիքներուդ

վրայ ծփացին: ...Ու պահ մը մահուան աղբամուղջն զգացիր քու վերեւդ հոլաքեւ: Եւ սակայն քու ներքին կորովդ յաղթեց մահուան, եւ դուն վերակենդանացար՝ նորոգուած, աւելի քան երբեք երիտասարդ: Նոր գարուն մը նախանչեց, քու ջուրերդ մաքրեց, բիրեղի քափանցկութիւն եւ սատափի փայլ տուաւ անոնց. քննուչ քեւերով գեփիւտ մը քու ծոցդ ալ գովացուց. առտուան լոյս մը վարդ ու շուշան քափեց վրադ. ավերուդ վրայ այգիներ փքթեցան, ու սոխակներ եկան անոնց բարի ստուերներուն մէջ քափած՝ իրենց գորովոտ ու քաղցր խաղերը մըմնջելու...» (Ա. Զօպանեան, «Գեղօն ի պատիւ Հայ լեզուին»):

ԱՄՓՈՓԵԼՈՎ. ոտանաւորները կ'ունենան չորս գլխաւոր կազմ.

Սովորական, որ ունի՝	յանգ	չափ	կտրատ տող	(տուն)
Անյանգ	»	»	»	»
Ազատ	»	»	»	»
Արձակ	»	»	»	»

Գ.- ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Քնարերգական կը կոչուին այն բանաստեղծութիւնները, որոնք քնքուչ են, յուզիչ, երաժշտական, եւ ուր հեղինակը սովորաբար կը յայտնէ իր անձնական ցաւը, սէրը, յուզումը, վիշտը: Քնարերգութիւնը կ'ունենայ դերազանցօրէն անձնական նկարագիր: Քնարերգական կ'ըլլան, ի մասնաւորի՝

ա. - Եղերգը՝ որ ախար նիւթի մը մասին գրուած քնքուչ քերթուած մըն է:

բ. - Տաղը՝ որ այն բանաստեղծութիւնն է, ուր կ'երգուին դիմի, խնձոյքի, սիրոյ հաճոյքները:

գ. - Գեղօնը՝ որ քերթուած մըն է, ուր կը դովերգուին անձեր, պատահարներ, իրողութիւններ՝ զգացախառն բառերով:

դ. - Ողբը՝ որ բանաստեղծութիւն մըն է գրուած սգալու համար մահուան վիշտը սիրելիի մը կամ կարեւոր անձնաւորութեան մը:

ե.— Հնչեակը բանաստեղծութիւն մըն է, որ կ'ունենայ 14 տող, եւ բաղկացած կ'ըլլայ 4 տունէ, որոնցմէ առաջին երկուքը կազմուած կ'ըլլան չորսական տողէ, իսկ երրորդն ու չորրորդը՝ երեքական տողէ: Առհասարակ վերջին երկու կամ երեք տողերուն մէջ է, որ խտացուցած կ'ըլլայ բանաստեղծը իր բուն ըսելիքը: Հայկական գրականութեան մէջ հնչեակի վարպետն է Վ. Թէքէեանը: Հնչեակ գրած են Սիպիլը, Մ. Մեծարենցը, Գ. Վարուժանը եւ շատ մը այլ տաղանդաւոր բանաստեղծներ:

ԱՅՍՊԷՍ ՈՒՐԵՄՆ, ՏՂԱՔ

Այսպէս ուրեմն, տղաք,
Ամէն օր քիչ մ'աւելի
Վիհը մեր մէջ կը բացուի,
Տարիքի վիհն անյատակ...

Լեցնելու համար գայն,
Կամ ուզելու գայն մտնալ՝
Ամէն փափաք գո՛ւր է այլ,
Եւ ամէն ջանք՝ ընդունա՛յն:

Որդեկորոյս հօր մը պէս,
Որ ձեւ մ'ունի վարանոտ,
Կը տեսնէք մէկը ձեր մօտ...

Եւ չէք գիտեր թէ ինչպէ՞ս
Դուք իր կեանքն էք նախընթաց,
Ան ձեր եղբայրն է մեռած...:

Վ. Թ.

դ.— Վիպերը յարաբերաբար երկարաչունջ եւ չափածոյ պատմութիւն մըն է, ուր հեղինակը իր նիւթը կը պատմէ թէ՛ ուղղակիօրէն անձամբ եւ թէ՛ իր հերոսներուն բերանով, եւ ուր հեղինակը որոշ ատենը անգամ մը կը յայտնէ իր անձնական զգացումներն ու մտածումները պատկերացուող կեանքին, դէպքին կամ անձին նկատմամբ:

Քնարական-պատմողական բանաստեղծութիւնները, ուր դէպքերն ու դէմքերը կը ներկայացուին հեղինակին ապրումներուն եւ մտածումներուն հետ միատեղ՝ կը կոչուին վիպերգ: Օրինակ՝ Յ. Թումանեանի «Անուշը», «Թմկարերդի Առումը», եւայլն:

Ահա հատուածներ «Թմկարերդի Առումը» վիպերգէն.

Հէ՛յ, պարուններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահել տղերք,
Լաւ ուշ գրէք իմ խաղին:

Մենք ամէնքս հիւր ենք կեանքում,
Մեր ծննդեան փուշ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խնդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահիմը,
Մարգու գործն է միշտ անմահ:

...Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէ՛ծք նրա չար գործին՝
Որդիդ լինի, թէ հէրն ու մեր,
Թէ մուրազով սիրած կին...:

1

Նազիր Շահը գօրք հաւաքեց,
Զօրք հաւաքեց անհամար,
Եկաւ Թմկայ բերդը պատեց,
Ինչպէս գիշերն էն յաւար:

— Հէ՛յ, քաջ Թաթուլ, — կանչեց Շահը,
Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
Ի՞նչ ես քատել ամրոցում:

— Մի՛ պարծենա, գոռոգ Նազիր, —
Պատասխանեց էն հսկան.
— Գլխովը շա՛տ ամպեր կ'անցնեն,
Սարը միշտ կայ անսասան:

Ասաւ, կանչեց իր քաջերին,
Թուրը կապեց հալուսնի,
Թռաւ, հեծաւ նժոյգ իր ձին,
Դաշտը իջաւ արիւնի:

Ու քառուսն օր, քառասուն գիշեր
Կոխ տուին անդադար,
Ընկան քաջեր, անբիւ քաջեր,
Բերդի գլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաքուլն անյաղթ, աննկուն,
Ջօրքն ու բաքան խորտակուել են,
Նրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, յաղթանակով
Իր ամբոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սեւաչեայ...: (Եւայլն)

3. -- Ա Ր Ձ Ա Կ Ը

Ա. -- Վ Է Պ Ը

Վէպը ստորաբար՝

Ա. -- Արձակ,

Բ. -- Պատմողական (պատմութիւն մը պարունակող),

Գ. -- Երկար (125 էջէն աւելի) գրութիւն մըն է, ուր՝

Դ. -- Ընդհանրապէս կան խումբ մը հերոսներ,

Ե. -- Որոնք կը դործեն, կը խօսակցին, կը յարաբերին,

Զ. -- Ուր կը պատահին դէպքեր, կ'արծարծուին խնդիրներ,

Է. -- Ուր, սակայն, գործող անձերը յաճախ կ'ազդեն դէպքերուն վրայ եւ ուղղութիւն կու տան անոնց՝ իրենց նկարագրին, դադափարներուն, խառնուածքին համեմատ՝ փոխանակ իրենք անկամօրէն ենթարկուելու պատահող դէպքերուն:

Ը. -- Ուր դէպքերը իրարու չեն յաջորդեր ըստ բախտի, ուր կայ յաջորդական զարգացում դէպքերու: (Օրինակ. հետեւեալ դրուագը, որ իրապէս պատահած է, նմուշ մըն է, ուր ցոյց կը տրուի թէ ինչպէ՛ս անձ մը կրնայ, անկախ իր կամքէն՝ ենթարկուել դէպքերուն եւ թէ ինչպէ՛ս դէպքերը կրնան իրարու յաջորդել ըստ

բախտի. — «Օր մը, ճիշդ կէսօրուան մօտ, չէնքի մը հինգերորդ յարկին մէկ պատուհանը նորոգող բանուորի մը ոտքը կը սահի եւ ան կ'իջնայ վար. նախ կ'իջնայ երրորդ յարկին պատուհանին կերպասէ արեւոցին (ամպշուվանիին) վրայ. անկէ առաջին յարկի խանութին լայն արեւոցին վրայ, եւ ապա կ'իջնայ այդ վայրկեանին ատկէ անցնող եւ լուսացուելիք զդեատեղէններ փոխադրող բեռնատար բաց ինքնաշարժի մը մէջ, որ այդ զգեստեղէնները կը տանէր բանուորին տան կից դտնուող արդուկիչին խանութը: Այնպէս որ ինքնաշարժը կանգ կ'առնէ ճիշդ բանուորին տան դիմաց եւ բանուորը կ'իջնէ ու կը մտնէ իր տունը»:

Այս դրուագին մէջ դէպքերը ո՛չ միայն կապ չունին ենթակային, այսինքն բանուորին անձին հետ, այլեւ կապ չունին իրարու հետ. դէպքերը կը պատահին ըստ բախտի եւ իրարու կը յաջորդեն պարզ զուգարկութեամբ: Գրականութեան մէջ ուղուածը այս չէ՛):

Կան այլազան վէպեր. — «Պատմական»ը, որուն նիւթը առնուած կ'ըլլայ պատմութենէն (Մերենցի «Երկունք Թ. դարու»ն), փիլիսոփայականը, ուր շեշտը կը դրուի նաեւ փիլիսոփայական հարցերու վրայ (Նար-Դոսի «Մահը»), արկածախնդրականը, ուր արկածներու արագ եւ անակնկալ յաջորդականութիւնը կը ստեղծէ հետաքրքրականութիւն (Մատթէոս Մամուրեանի «Սեւ Լեռին Մարդը»), տարաշխարհիկը, ուր պատմութիւնը կը թաւալի հեռուոր, օտար եւ զարմանալի երկիրներու մէջ (Անգլիական դրականութենէն՝ «Ռոպինսոնի Քրուզոյի արկածները»), կենցաղայինը, ուր կը ներկայացուին առուելաբար մարդոց կենցաղը, բարքերը (Ե. Օտեանի «Պատիւ, ընտանիք, բարոյական»ը), սիրայինը, կրօնականը, քաղաքականը, հոգեբանականը, եւայլն:

Հայկական դրականութեան մէջ որպէս վիպագիր ծանօթ են. — Խ. Արովեանը («Վէրք Հայաստանի»), Մերենցը («Թորոս Լեւոնի», «Թէոդորոս Ռշտունի», «Երկունք Թ. դարու»), Ս. Տիւսափը («Մայտա», «Սիրանուշ», «Արաքսիա կամ Վարժուհին»), Ռաֆֆին («Խենդը», «Կայծեր», «Դաւիթ Պեկ»), Յ. Պարոնեանը («Մեծապատիւ Մուրացկաններ»), Ա. Արփիարեանը («Կարմիր ժամուց»), Տ. Կամսարականը («Վարժապետին աղջիկը»), Պերճ Պոռչեանը («Սօս եւ Վարդիթեր», «Կուսածաղիկ», «Հացի Խնդիր»), Ղ. Աղայեանը («Արուսիւն եւ Մանուէլ», «Երկու Քոյր»), Մուրացանը («Գէորդ Մարգարտունի», «Առաքելը»), Ե. Օտեանը («Ընկեր Փանջունի»,

«Թաղականին Կնիկը», «Ես դրսեցի չեմ առներ»), Երուխանը («Ամիրային Աղջիկը»), Զ. Եսայեանը («Շնորհքով Մարդիկ», «Սկիւտարի վերջալոյսներ»), Ինտրան («Ներաշխարհ»), Սիպիլը («Աղջկան մը սիրտը»), Լ. Շանթը («Հոգիները Ծարաւի», «Դուրսեցիները»), Օշականը («Մնացորդաց», «Ծակ Պտուկը»), Տ. Զէօկիւրեան («Հերոսը», «Վանք»), Կ. Զարեան («Նաւը Լեռան Վրայ», «Բանկօօպը եւ Մամուլի ոսկորները»), Նար-Դոսը («Մահը», «Պայքար»), Շիրվանդատէն («Նամուս», «Քաոս»), Ե. Զարենցը («Երկիր Նայիրի»), Ա. Ահարոնեանը («Իմ Գիրքը»), Ակսել Բակունց («Յովնաթան Մարջ»), Վ. Թոթովենցը («Կեանքը Հին Հոռոմէական ճանապարհի վրայ»), Գ. Մահարի («Երիտասարդութեան Սեմին»), Դ. Տեմիրճեան («Վարդանանք», «Մ. Մեսրոպ»), Ն. Զարեան («Հացաւան»), Ս. Զօրեան («Պապ Թագաւոր»), Ծ. Շահնուր («Նահանջը Առանց Երգի»), Վ. Շուշանեան («Օրերը Գեղեցիկ Չեն», «Ճերմակ Վարսենիկ»), Խ. Դաշտենց («Պողեղան»), եւ այլն:

Բ.- ՎԻՊԱԿԸ

Կարճ վէպ մըն է՝ շուրջ 60-էն 100 էջ: Բոլոր վիպագիրներն ալ սովորաբար ունին վիպակներ. ինչպէս՝ Երուխանը («Հարազատ Որդի»), Զ. Եսայեանը («Անձկութեան Ժամեր», «Երբ այլեւս չեն սիրեր»), Ա. Զօպանեանը («Թուղթին Փառքը»), Թլկատինցին («Մութ Անկիւններէ»), Ա. Արփիարեանը («Ոսկի Ապրջանը»), Ե. Օտեանը («Պատերազմ եւ Ողորդութիւն»), Նար-Դոսը («Սպաննուած Աղանին»), Ա. Բակունց («Սեւ Ցելերի Սերմնացանը»), Գ. Մահարին («Պատանեկութիւն եւ Երիտասարդութիւն»), եւ այլն:

Գ.- ՊԱՏՄՈՒԱԾՔԸ

Կարճ պատմում մըն է, մինչեւ 30-40 էջ, ուր հեղինակը կը պատկերէ պատահար մը կամ քանի մը պատահարներ, ընդհանրապէս առանց ներկայացնելու թէ ի՞նչ եղած է հերոսին կամ հերոսներուն կեանքը մինչեւ այդ պատահարը, եւ թէ ի՞նչ պիտի ըլլայ ատկէ ետք:

Պատմուածքին մէջ դործող անձերը կ'ըլլան յարաբերաբար փոքրաթիւ:

Հայկական գրականութեան մէջ որպէս պատմուածքի հեղինակ ծանօթ են. — Ա. Արփիարեանը, Գ. Զոհրապը, Ե. Օտեանը, Լ. Բաշալեանը, Ռ. Սեւակը, Զ. Եսայեանը, Վ. Փափաղեանը, Երուխանը, Հրանդը, Թլկատինցին, Յ. Թումանեանը, Մուրացանը, Ռ. Զարդարեանը, Շիրվանդատէն, Սիպիլը, Ս. Զօրեանը, Ա. Զօպանեանը, Դ. Տեմիրճեանը, Ծ. Շահնուրը, Համաստեղը, Օշականը, եւ այլն:

(Կարգացէ՛ք Գ. Զոհրապի «Ճիտին Պարտքը», «Պարիսիւր», Ե. Օտեանի «Լեռն Թագաւորին սուրը», «Պափիէն», Լ. Բաշալեանի «Նոր Զգեստը», Ռ. Սեւակի «Ստամոքսին Զոհը», Ա. Արփիարեանի «Հաճոյքի համարը», Երուխանի «Գարիտէգճին», Ռ. Զարդարեանի «Գամփօր», Ծ. Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ»ը, եւ այլն):

Կ.- ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

Թատերական երկի մը հիմնական յատկանիշը խօսակցութեան վրայ կառուցուած ըլլալն է:

Թատերագուծիւն մը բաղկացած կ'ըլլայ ա. — խօսակցութիւններէ, բ. — Մեքնախօսութիւններէ. (Երբ դերակատար մը՝ բեմին վրայ, մինակը՝ կը խօսի ինք իր անձին հետ, կամ խօսքը կ'ուղղէ բացակայ անձերու՝ կ'ըսենք թէ ըրածը «մեքնախօսութիւն» է), Կ. — Հեղինակին մատնանշումներէն (դիմախաղ, շարժուձեւ, նկարագրութիւն):

Անցեալին թատերագուծիւնները ընդհանրապէս գրուած են ոտանաւոր: Նոր ժամանակներու մէջ է, որ արձակը փոխարինած է չափածոն՝ թատերագուծեան մէջ:

Թատերական երկերը բաժնուած են գլխաւոր երեք տեսակի. — Ողբերգութիւն, Կատակերգութիւն եւ Տոամ:

1. — Ողբերգութիւն ներկայիս ընթացիկ սեռ մը չէ: Ողբերգութիւնը իր զարգացումի դադաթնակէտին հասած է Հին Յունաստանի մէջ, եւ յետագային Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ (Ժէ. դար): Յօյն նշանաւոր ողբերգակներն են Էսքիլեսը, Յւրպիտեսը, Սոփոկլեսը: Ֆրանսացիներէն նշանաւոր են Քորնէյլը, Ռասինը, Անգլիացիներէն՝ Շէքսպիրը:

Ողբերգութիւնը թատերագուծիւն մըն էր, որ սովորաբար կը սկսէր ուրախ, եւ կ'աւարտէր շատ դժբախտ վախճանով: Գլխաւոր

հերոսը, որ բարձր դիրքի տէր անձ մը կ'ըլլար (թագաւոր մը, իշխան մը) կը պարտուէր իրմէ զօրեղ ուժերու ազդեցութեան տակ. այդ ուժերն էին՝ ճակատագիրը, մարդկային կիրքերը, սէրը, մահը, եւայլն: Ողբերգութեան մէջ զգացումներն ու կացութիւնները ընդհանրապէս կ'ըլլային չափազանցեալ եւ ծայրայեղ: Հեղինակին գլխաւոր նպատակը իրականութիւնը ներկայացնելը չէր, այլ ներկայացնելն էր այնպիսի բաներ, որոնք կը ցնցեն հանդիսատեսը, զօրաւոր ազդեցութիւն կը գործեն անոր ջիւղերուն եւ երեւակայութեան վրայ:

Հայկական գրականութեան մէջ ողբերգութիւններ գրած են՝ Թովմաս Թերզեանը («Արշակ Բ.», «Յովսէփ Գեղեցիկ»), Պ. Դուրեանը («Անկումն Արշակունի Հարստութեան», «Տիգրան Բ.»), Մ. Պէշիկթաշեանը («Կոռնակ», «Վահան»), եւայլն: Ողբերգութիւն է Նայիրի Զարեանի «Արա Գեղեցիկ» չափածոյ թատերգութիւնը:

2.— ՏՌԱՄ-ին մէջ ալ հերոսը տիրապետուած կ'ըլլայ զօրաւոր զգացումներէ, բայց այդ զգացումները գինք մահի կամ աղէտի չեն առաջնորդեր անպայման, որովհետեւ նուազ սաստիկ են: Տոսմին նիւթը առնուած կ'ըլլայ իրական կեանքէն, թէեւ առաւելաբար կեանքին տխուր երեսներն են, որ կը ներկայացուին:

Տոսմին մէջ հեղինակը կը ձգտի պատկերել իրականութիւնը: Գրականութեան մէջ, գրեթէ միշտ՝ իրական է՝ ինչ որ նշմարտանալն է (այսինքն՝ համոզիչ է) եւ ո՛չ թէ ինչ որ նշմարիտ է (այսինքն՝ իսկապէս պատահած է): Ծճմարիտ՝ (այսինքն՝ իսկապէս պատահած) դէպք մը կրնայ համոզիչ կերպով չներկայացուիլ հեղինակին կողմէ. այդ պարագային՝ այդ դէպքը գրականօրէն իրական չ'ըլլար, որովհետեւ համոզիչ չ'ըլլար: Ուրեմն՝ պատահարի մը իրական ըլլալը կախում ունի այդ պատահարին ներկայացուելու կերպէն: Հեղինակը պէտք է համոզէ հանդիսատեսը (կամ ընթերցողը) թէ իր ներկայացուցածը իրական է:

Կայ աւելին. Կեանքին մէջ կը պատահին դէպքեր, որոնք՝ թէեւ իսկապէս պատահած են՝ բայց այնքան հազուադէպ են, որ համոզիչ, այսինքն՝ իրական չեն: Օրինակ. Հինգերորդ յարկէն ինկող բանուորին պատմութիւնը թէեւ ճճմարիտ, բայց իրական, այսինքն՝ համոզիչ, չէ՛: Մարդկային կեանքէն առնուած պատահար մը, գրականօրէն իրական (համոզիչ) կ'ըլլայ, երբ մարդոց արարքները հարազատ են իրենց հոգեբանութեան, երբ մարդոց արարքները, մտածումները եւ զգացումները կը բխին իրենց խառ-

նուածքէն իսկ. այլ խօսքով՝ երբ կեղծ, շինծու չեն այդ արարքները, մտածումները, զգացումները: Եւ որպէսզի այս բանը կարելի ըլլայ՝ պէտք է որ մարդկային տիպարները — բարին ու չարը, վսեմն ու ծիծաղելին — հանդիպին իրարու, պայքարին իրարու դէմ, առանց որ սակայն անոնցմէ մէկը դիւրութեամբ տանի յաղթանակը: Իրական ըլլալու պայմաններէն մէկն է պահել հաւասարակշռութիւնը կեանքը կազմող դրական (բարի, վսեմ) եւ բացասական (չար, ծիծաղելի) իրողութիւններուն, դէպքերուն եւ տիպարներուն միջեւ: Օրինակ. հետաքրքրական չ'ըլլար մրցում մը, որ տեղի կ'ունենայ այնպիսի երկու խումբերու միջեւ, որոնցմէ մէկը զգալիօրէն աւելի տկար է միւսէն: Հետաքրքրական չ'ըլլար՝ որովհետեւ լուրջ պայքար տեղի չ'ունենար կողմերուն միջեւ եւ սկիզբէն իսկ յայտնի կ'ըլլայ թէ ո՛վ պիտի յաղթէ: Ու մենք՝ հանդիսատեսներս, կը կորսնցնենք մեր շահագրգռութիւնը մրցումին նկատմամբ, եւ մրցումը կը դադրի իրապէս գոյութիւն ունենալէ, այլ խօսքով՝ կը դադրի այլեւս իրական ըլլալէ՝ մեզի համար: Եւ ա՛յս է պատճառը, որ մենք յաճախ մեր ծափերով կը քաջալերենք տկար կողմին խաղացողները՝ որպէսզի անոնք աւելի լա՛ւ խաղարկութիւն ցոյց տան, պայքարող կողմերուն ուժերը հաւասարին, եւ մրցումը ըլլայ իրական եւ հետեւաբար՝ հետաքրքրական:

Տոսմի հեղինակ հայ թատերագիրներն են.— Գ. Սունդուկեանը («Պեպո»), Ծիրվանդատէն («Պատուի Համար»), Թլկատինցին («Զալում Տղան»), Սիպիւր («Որբուհին»), Լ. Շանթը («Ուրիշին Համար»), Ս. Պարթեւեանը («Անմահ Բոցը»), Վ. Փափաղեանը («Ժայռը»), եւայլն:

3.— ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ երգիծական թատերգութիւն մըն է:

Երգիծական է այն երկը, ուր հեղինակը կը հեզնէ իր ներկայացուցած անձերը, դէպքերը կամ երեւոյթները՝ ամբողջութեամբ կամ մասամբ, շեշտելով կամ չափազանցելով անոնց բացասական կողմերը: Երգիծանքը՝ հեզնանքի եւ ծաղրանքի միջոցով կը քննադատէ եւ կը ձգտի ուղղել:

Կատակերգութեան մէջ իրարու չեն բախիր ուժեղ կիրքեր. աղէտներ չեն պատահիր: Կատակերգութեան նիւթը առնուած կ'ըլլայ առաւելաբար ներկայի կեանքէն: Կատակը, զուարթութիւնը, սրամտութիւնը, հեզնանքը՝ բաղկացուցիչ տարրերն են կատակերգութեան:

Միծաղաչարժութիւնը, որ հիմնական յատկանիշն է երգի-
ծանքին՝ ունի չորս գլխաւոր կերպեր. — 1) Շարժումների, 2) Բառի,
3) Վիճակի եւ 4) Մտածումի:

Շարժումների ծիծաղաչարժութիւնը կը ստացուի, երբ դերա-
կատարը անդամներու թէ մարմնի ոչ-սովորական բայց յատկանշա-
կան շարժումներով, եւ կամ դիմագիծի ծամածռութեամբ՝ ժպիտ
կամ խնդուք կը յառաջացնէ հանդիսատեսներուն մօտ: Օրինակ. ա-
նուշադրութեամբ կը նստի ինք-իր գլխարկին վրայ եւ ընդոստ կը
ցատկէ տեղէն:

Բառի ծիծաղաչարժութիւնը կը ստացուի երբ հերոսը դիտ-
մամբ կամ ոչ՝ բառ մը սխալ կ'արտասանէ, կամ բառ մը ուրիշ բառի
մը տեղ կը գործածէ, կամ կ'արտայայտուի անակնկալ բառով մը
կամ բացատրութեամբ մը: Օրինակ. «Շողոքորթ»-ին մէջ՝ երբ տղէտ
ծառայի մը կը հարցուի թէ ո՞ր «ղէմքով» կը խօսի ինք՝ իր տէրե-
րուն կամ յարգելի հիւրերուն հետ կ'ըսէ «Այս ղէմքով»՝ ցուցնե-
լով ինք-իր երեսը, փոխանակ ըսելու «յոգնակի Բ. ղէմքով»:

Վիճակի ծիծաղաչարժութիւնը կը ստացուի երբ հերոսը կը
գտնուի ծիծաղելի կացութեան մը մէջ: Օրինակ. երբ առանց դիտ-
նալու թէ իր խօսակիցը իր անծանօթ բարերարն է՝ հեղնանքով կը
խօսի իր բարերարին մասին:

Մտածումի ծիծաղաչարժութիւնը կը ստացուի երբ հերոսը
սրամիտ գաղափարներ կը յայտնէ: Օրինակ. Անհամբեր ճաշի սպա-
սող անօթի Աբիսողոմ Աղային երբ կը հարցուի տանտիկինին կողմէ
թէ սուրճը կաթով կ'ուղէ թէ առանց կաթի, կը պատասխանէ.
«Կա'թ կ'ուղեմ առա'նց սուրճի». (Պէտք է ի մտի ունենալ որ 1)
սուրճի գաւաթը փոքր կ'ըլլայ կաթի գաւաթէն, 2) որ կաթը սննդե-
ղէն է, մինչ սուրճը՝ չէ). (Այս օրինակին մէջ սրամտութիւնը հիմ-
նուած է բառախաղի ալ վրայ):

Հայկական գրականութեան կատակերգակ թատերագիրներն
են. — Գ. Սունդուկեանը («Խաթաբալա»), Յ. Պարոնեանը («Շողո-
քորթը»), Ե. Օտեանը («Զարչըլը Արթին Աղա»):

Երգիծական գրականութիւն մշակած են նաեւ՝ Ա. Արփիար-
եանը («Ազգիս Բարերարները»), Ակսել Բակունցը («Յովնաթան
Մարջ»), Լեո-Կամսարը («Գրարար Մարգիկ»), Առանձարը («Վշտի
Միծաղ»), եւ այլն:

Բ. ՄԱՍ

ՁԵՒ ԵՒ ԽՈՐՔ

1.- ՍՈՒՏՔ

Կտորի մը մէջ, հեղինակին ըսել ուզածը այդ կտորին Խորքն
է, ըսելու կերպը՝ Ձեւն է:

Երբ կը խօսինք գրողի մը ձեւին մասին՝ խօսած կ'ըլլանք գրո-
ղին՝ իր մտածումներն ու ապրումները լեզուի միջոցով արտայայ-
տելու կերպին մասին: Երբ կը խօսինք գրողի մը խորքին մասին՝
խօսած կ'ըլլանք այդ գրողին մտածումներուն եւ ապրումներուն մա-
սին:

Խորքն ու ձեւը սակայն չենք կրնար իրարմէ անջատել: Ա-
նոնք միաձուլուած են, կ'ամբողջացնեն իրար:

Մեծ են այն գործերը, որոնց թէ՛ խորքը, եւ թէ՛ ձեւը արժե-
քաւոր են: «Լաւ» խորք բայց «գէշ» ձեւ ունեցող ստեղծագործու-
թիւն մը չի կրնար մնայուն արժէք ունենալ: Նոյնպէս արժէքաւոր
չէ այն երկը, որուն խորքը «գէշ» է, բայց ձեւը՝ «լաւ»:

Որպէսզի գործ մը մեծ ըլլայ, չի բաւեր որ հեղինակը մեծ
ճշմարտութիւններ յայտնէ. պէտք է որ այդ մեծ ճշմարտութիւն-
ները այնպէս մը արտայայտէ՝ որ մենք հասկնա'նք այդ ճշմարտու-
թիւնները, համոզուի'նք անոնց մեծ ըլլալուն, հետաքրքրուի'նք ա-
նոնցմով եւ գեղարուեստական հաճոյք զգանք անոնցմէ:

Ամէն խորք կը պահանջէ իրեն համեմատ ձեւ մը: Օրինակ.
Միասը Մեծարենցի եւ Սիւսանթոյի քերթուածներուն ձեւերը մե-
ծապէս տարբեր են իրարմէ, որովհետեւ տարբեր են նաեւ անոնց
խորքերը:

Խորքն ու ձեւը նոյնքան կարեւոր են երկի մը համար: Մէկը
միւսէն գերադաս չէ:

Խորքը՝ գաղափարներն ու ապրումներն են. Ձեւը՝ այն ար-
ուեստն է որով գրականութեան կը վերածուին գաղափարներն ու
ապրումները: Առանց Ձեւի չկայ Խորք, առանց Խորքի չկայ Ձեւ:

**

Գրական ստեղծադործութեան մը մէջ հեղինակին Ձեւը երեւան կու գայ երկու երեսներով.— 1) Իր լեզուն գործածելու ձեւը, 2) Իր Խորքը (գաղափարները, պատմած պատմութիւնը) դասաւորելու ձեւը:

Այսպէս. Նոյն պատմութիւնը կարելի է պատմել՝ 1.— Տարբեր բառերով ու խօսքերով. (ամէն հեղինակ ունի լեզուն գործածելու իր իւրայատուկ կերպն ու ճաշակը): 2.— Տարբեր շարքով. (Օրինակ. հեղինակ մը կրնայ սկսիլ իր հերոսին ծնունդէն ու ներկայացնել մինչեւ մահը՝ կարգով: Ուրիշ հեղինակ մը կրնայ սկսիլ նոյն հերոսին մահէն եւ պատմութիւնը ետ-ետ քակելով հասնիլ մինչեւ անոր ծնունդը, եւայլն):

Ուրեմն Ձեւը մաս կը կազմէ գրական գործի մը թէ՛ Լեզուին եւ թէ՛ Խորքին: Գրողի մը Լեզուին ձեւը, այսինքն՝ լեզուն գործածելու կերպը այդ գրողին Ոճն է: Խորքին ձեւը՝ գրութեան Կառոյցն է:

2.- ԼԵԶՈՒ ԵՒ ՈՃ

Լեզուն եւ ոճը տարրեր բաներ են: Գրող մը իր լեզուն կը ժառանգէ իր նախահայրերէն: Լեզուն կ'ունենայ իր կանոնները, որոնք պէտք է յարգուին գրողին կողմէ: Լեզուն, որ կազմուած է ձայներէ, բառերէ, նախադասութիւններէ, խօսքերէ — արտայայտութեան միջոցն է, ինչպէս որ, օրինակ, մարմարը արտայայտութեան միջոցն է քանդակագործին, ձայնը՝ երաժիշտին, գոյնն ու գիծը՝ նկարիչին:

Ոճը՝ լեզուն, մարմարը, ձայնանիշերը, գոյները գործածելու անհատական կերպն է՝ արուեստագէտին:

Ինչպէս որ, օրինակ, քանդակագործը պէտք է հասկնայ մարմարէ, որպէսզի իւրաքանչիւր արձանի համար ընտրէ ճիշդ այն մարմարի կտորը, որ լաւագոյնս կը ծառայէ այդ արձանը շինելու, այնպէս ալ գրողը պէտք է լաւ գիտնայ իր լեզուն, որպէսզի կարողանայ ընտրել այն բառերն ու խօսքերը, որոնք լաւագոյնս կրնան արտայայտել իր մտածումներն ու զգացումները:

Արուեստագէտը կը ժառանգէ իր լեզուն, որ կը պատկանի բոլորին եւ նոյնն է բոլորին համար, բայց կը պարտի ունենալ իւրա-

յատուկ ոճ, որ կը պատկանի միմիայն իրեն: Անշուշտ կան մեծ գրողներ, որոնք որոշ փոփոխութիւններ կը մտցնեն իրենց գործածած լեզուին մէջ, եւ կան նաեւ անտաղանդ գրողներ, որոնք կը կապկեն ուրիշներու ոճը:

3.- ՈՃԸ (*)

Լաւ ոճի մը գլխաւոր յատկանիշներն են.

Ա.— ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Գրողը պէտք է գործածէ ա՛յն բառերն ու ասացուածքները միայն, որոնք լեզուին քերականական օրէնքներուն դէմ չեն, եւ հաշտ են սովորութեան հետ:

Ոճի մաքրութեան դէմ թերացումներ են.

1) Խժաբանութիւնը, որ բառագիտութեան դէմ գործուած սխալ մըն է: Օրինակ. ա.— Օտար բառերու գործածում. («Խեր չկայ անկէ»․ «Սիվիլիզէ մէկը չէ ան»), բ.— Օտար բառերով ածանցումներ կամ բարդումներ. («Ծնկաչոգ կ'աղաչէր», «Կիսարբուլեար հրատարակութիւններ»), գ.— Ռամկական կամ հինցած բառերու անտեղի գործածում. («Շլիֆէն (վիզէն) կապեցին», «Կ'ուզես նէ», «Յայնժամ (այն ատեն) ըսաւ»), դ.— Աղաւաղեալ հնչում ունեցող բառերու անտեղի գործածում. («Հայրուր անգամ ըսի», «Անկաճը կը ցաւէր»):

2) Քերականական վրէպը բառի մը քերականօրէն սխալ ձեւով գործածուելն է: Օրինակ. «Ան ինձի (զիս) կը փնտռէր», «Չպէտք է (պէտք չէ) երթալ», «Այդ աշակերտի (աշակերտին) գիրքը առի» («աշակերտի» բառը յատկացուցիչ է):

3) Նարբանութիւնը բառի մը օտար եւ խորթ իմաստով գործածումն է: Օրինակ. «Ուրբան յոգնութիւն քաշեր էք (կրեր էք)», «Աղամանը ինձի անցուր (փոխանցէ)», «Ձեր խինդը կը բաժնեմ (կը խնդակցիմ)», «Սրնեցիմ (սուրճ խմեցիմ) քիչ առաջ»:

*) Տե՛ս նաեւ. «Գրագիտութիւն Տեսական եւ Գործնական», Մ. Ասքանազեան, Պոլիս, 1884:

ՎԱՐՎՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Գտէ՛ք ոճի մաքրութեան դէմ գործուած թերիները, ըսէ՛ք թէ ի՞նչ կարգի թերիներ են անոնք, եւ սրբազրեցէ՛ք զանոնք:

Ո՛վ գիտէ ի՛նչ միբրոպներ կան այդ աղտոտ եղունգներուդ մէջ: Օտքս կը ցաւեր: Նասիոնալիսք է ինք: Իւր որոշումը հազարդեց իւր ծնողաց: Գոյից պատասխանատու նշանակուեցաւ: Խերսըզ մէկն է անոր տղան: Աքումական ռումբեր արձակեցին: Թրեմով գացինք գիւղ: Կլախս մի՛ արդուկեր: Ուգես նէ կրնաս: Քեզի կը կանչէին անոնք: Քառսուն օսկի վնարեր է: Չպիտի երթանք պարտէզ: Ցարչափ հոն մնաս՝ պիտի չարչարուիս: Հետաքրքիր պատմութիւն մըն էր այդ: Բանաստեղծութեան հատոր մը գնեցի, անուըն՝ «Ինտիմ Երգեր»: Այս մարդու տուի իր տղու գիրքերը: Այս տպարանը տասնեակներով գիրքեր կը կախէ: Կը բաժնեմ ձեր վիշտը: Պատշգամ ելանք օդառութեան համար: Հացին ամանը ինծի կ'անցընե՞ս: Քլիւպ չպիտի հանդիպինք: Յվերջ այդպէս պիտի մնայ: Մինչեւ ցարդ հայրուր էջ միայն կարդացեր է: Ժողովրդային մասսաները դժգոհ մնացին: Հայրս քեզ նայեցաւ: Չպէտք է ընդունէիք: ...Հանոյքը ունին ձեզ հրաւիրել իրենց գաւակաց պսակին: Ես իրենց տեսայ իրենց պարտէզը: Այս քերթի դիրածը երկու հագար է: Բարլըմանը ժողով գումարեր է: Նորս մը առտու-իրիկուն հսկեց հիւանդին վըրայ: Ծնկաչոգ կ'աղօթէր: Ֆաքթիւրը հե՛տդ առ: Այս նոր իւղին հետ տապկեց հինգ հաւկիթ, իր գարմիկին հետ կերաւ ամբողջը եւ յետոյ անոր ինքնաշարժին հետ լեռ գացին:

Բ.- ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ

Գրողին ըսածը պէտք է լաւապէս հասկցուի՝ առանց անտեղի ճիգի: Այս կը նշանակէ թէ 1) Գրողը պէտք է բառերը գործածէ իրենց բուն (ճիշդ) իմաստով, 2) Պէտք է բռնազբօսիկ կերպով շարէ բառերը, 3) Պէտք է երկարածդէ խօսքերը, 4) Պէտք է զարգացած եւ նրբաճաշակ երեւելու համար՝ «ընտիր» բառեր եւ զարձուածքներ գործածէ միայն, 5) Պէտք է գաղափարները լաւ դասաւորած ըլլայ:

(Ըսել թէ ոճը պէտք է յստակ եւ հասկնալի ըլլայ՝ չի նշանակեր թէ գրութիւն մը այնպէս մը գրուած ըլլալու է որ ամէն կարդացող հասկնայ. ամէն կարդացող ընթերցող չէ. ամէն կարդացող չունի կարողութիւնը, պատրաստութիւնը եւ ճաշակը ամէն

գրութիւն հասկնալու: Եստ յստակ եւ հասկնալի ոճով գրուած գործ մը կրնայ չհասկցուիլ զայն կարդացողին կողմէ՝ եթէ ան չունի բաւարար զարգացում, գրականութիւն կարդալու վարժութիւն եւ ճաշակ: Օրինակ. որպէսզի կարդացող մը իրապէս հասկնայ եւ վայելէ գեղեցկութիւնները Դ. Վարուժանի «Մեռած Աստուածներուն» բանաստեղծութեան՝ պէտք է բաւարար ծանօթութիւն ունենայ յունական դիցարանութեան մասին: Որպէսզի կարդացող մը կարենայ հասկնալ եւ ըմբռնել Եղիշէ Սրբազան Դուրեանի այնքան գեղեցիկ «Անտառկը» քերթուածը՝ ո՛չ միայն պէտք է լաւ հայերէն գիտնայ, ո՛չ միայն պէտք է բանաստեղծութիւն շատ կարդացած ըլլայ, այլեւ՝ պէտք է «Անտառկ Որդիին առակը» լաւ գիտնայ: Դեւ կան բաղմաթիւ բանաստեղծութիւններ հայ թէ ոչ-հայ գրականութիւններուն մէջ, որոնք ըմբռնել կարենալու համար անհրաժեշտ է բաւարար ծանօթութիւն ունենալ նաեւ փիլիսոփայութեան, գիտութեան, պատմութեան, եւ միւս բոլոր ուսումներուն մասին:

Ամփոփելով.— Ընթերցողը (իրական ընթերցողը) այն է որ 1) Ունի բաւարար ընդհանուր պարզացում, 2) Լաւապէս զիտէ լեզու մը (եւ նախընտրաբար այլ լեզուներ ալ), 3) Գրականութիւն շատ կարդացած է, եւ 4) Ունի արուեստի գործ մը հասկնալու եւ սիրելու բնական կարողութիւնն ու խառնուածքը):

ՎԱՐՎՈՒԹԻՒՆՆԵՐ

2.- Կարդացէ՛ք հետեւեալ հատուածները (Դուրեանի «Տրտուեջք»էն), ուր կայ խտութիւն (ո՛չ մէկ բառ կարելի է վերցնել: Երբ կը կրկնէ «տժողոյն» ածականը՝ ըսել կ'ուզէ «չառ տժողոյն» . նոյնն է պարագան կրկնուող «կայծ տուէք» բացատրութեան:), ուր կայ յստակութիւն, բառերու ճշգրիտ գործածում, գաղափարներու հիւսնալի դասաւորում:

Ո՛հ, կը դողդոջեմ, տժգո՛յն եմ, տժգո՛յն,
Կը փրփրի ներսս դժոխփի մ'հանգոյն...:
Հառաչ մ'եմ հեծող նոսրու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:
Ո՛հ, կա՛յծ տուէք ինձ, կա՛յծ տուէք, ապրի՛մ...
Ի՛նչ, երագէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...:

Այս ֆակտագիրն ի՛նչ սեւ է, Աստուած՝
Արդեօֆ դամբանի մբուրնով է գծուած...

Գարունն ո՛չ մէկ վարդ ֆակտիս դակահար՝
Ո՛չ երկնի շոգերն ժպիտ մ'ինձ չեն տար.
Գիշերն է դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն յար կու լայ, խուզարկէ վիհեր:
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար Նա դբաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան, —
Նախ կեանքը, ապա՝ լացող մ'իբ վրան:

3.— Գտէ՛ք Հետեւեալներէն իւրաքանչիւրին յատուկ եղող ձայնը:

Ձիւն կը ... , օճը կը ... , գայլը կը ... , կապիկը կը ... ,
տոխակը կը ... , թուփակը կը ... , վառեակը կը ... , ճնճուկը կը
... , հաւը կը ... , արջը կը ... , գանգակը կը ... , թմբուկը կը
... , առուակը կը ... , տերեւները կը ... , ծովը կը ... , սիրտը
կը ... կամ կը ... , ախանջը կը ... :

4.— Հետեւեալ երեք խումբերուն բառերէն դասեցէ՛ք անոնք, որոնք հոմանիչ են իրարու: Գտէ՛ք անոնց իմաստը:

Ա.— Ապստամբիլ, անողորմ, սին, կշտամբել, մուք, թոյր, շիրիմ, կոչում, անուանի, գթալ, գամ, յուռթի, փողփողիլ, պաքել, կայլակ, հովիտ, ցելս, ուղէշ, կատաղի, շատախօս, կոծ, նոգկալ, ապստամբ, թակարդ:

Բ.— Ունայն, յանդիմանել, գոյն, երեւելի, բեւեռ, բերրի, կայքել, ընդվզիլ, անգութ, խաւար, խրախճանք, կարեկցիլ, գեքեգման, շողալ, կաթիլ, տիղմ, բարունակ, ծործոր, կական, ըմբոստ, շողակրատ, գանիլ, ծուղակ, մոյեգին:

Գ.— Անագորոյն, աղջամուղջ, դամբան, խնոյն, արգահատիլ, ծառանալ, դատարկ, պախարակել, երփ, հոչակաւոր, սեպ, արգասաւոր, ծմակ, գայռ, փայլիլ, կախաւել, շիթ, ոստ, հետտ, որոգայթ, ջայլ, վայրագ, շողփաղփ, պծգալ:

5.— Գտէ՛ք թէ շեղադիր բառերը իրենց բո՛ւն տեղը դրուած են: Եթէ՛ ոչ, փոխեցէ՛ք անոնց տեղերը:

1) Իբ ծախեբը իբ եկամուտին համեմատ ընելը անխելութիւն է. իբ ամբողջ եկամուտը ծախսելը իմաստութիւն է. եկամու-

տէն աւելի ծախսելը անխոհեմութիւն է: 2) Մարմինը կրնայ հաճոյք պարգեւել, հոգի՛ն է միայն որ կրնայ երջանկութիւն պարգեւել: 3) Երբ պիտի քամբողքս հետդ առ սուլար Ֆրանսայի համար, լիբ՝ Անգլիոյ համար, ուուլլի՛ իտալիոյ համար, Ֆրանսէ՛ Ռուսիոյ համար, շիլին՝ Միացեալ Նահանգներու համար, տրախմի՛ Գերմանիոյ համար, մարք՝ Յունաստանի համար: 4) Տկար մարդը կը վախնայ մահէն, թշուառը կ'արհամարհէ գայն, քաջը կը կանչէ գայն, իմաստունը կը սպասէ անոր: 5) Մանուկները կ'ըսեն ինչ որ ըրած են, ծերերը՝ ինչ որ կ'ընեն, իսկ անմիտները՝ ինչ որ կ'ուզեն ընել: 6) Գեղեցիկը կը գատորշեմ տգեղէն դաստամով, ճիշդը սխալէն՝ ճաշակով: 7) Խանութպանները կ'ըսեն. «Մի՛ բններ բայց դնէ՛», կրօնականները կ'ըսեն. «Մի՛ բններ բայց հետեւէ՛»: 8) Ագփատութիւնը գործ մըն է, մուրացկանութիւնը՝ վիճակ: 9) Գաղափարները գիրքի մը ճարտարագետութիւնն են, ձեր անոր ստաղծն է: 10) Երեկոյին կը սպասէ կեանքը գովելու համար, մահուան կը սպասէ ցերեկը գովելու համար: 11) Խօսիլը հնձել է, ունկնդրելը՝ սերմանել: 12) «Ոսկին կը բանայ ամէն դժուարութիւն, կը հարթէ ամէն դուռ, անխելին կու տայ դիտութիւն, տգէտին՝ խելք, վախկոտին՝ քաջութիւն»: 13) Մանուկներու վիշտերը վաղանցիկ են. ծիծաղը շուտով կը փայլի անոնց արցունքներուն մէջէն, ինչպէս արեւին մահանչները՝ գարնանային ամպերուն մէջէն: 14) Հանելի է հովանին այն ծառին որ մարդս ի՛նք ոտողած է, բոյրը այն ծաղիկներուն, որոնք ի՛նք հասունցուցած է, համը այն պտուղներուն, որոնք ի՛նք տնկած է:

6.— Գտէ՛ք թէ շեղադիր բառերուն շարքը կը համապատասխանէ՞ խօսքերուն իմաստին: Եթէ՛ ոչ, փոխեցէ՛ք:

Եկան գարուն եւ աշուն, եկան պտուղ եւ ծաղիկ: Մարդիկ կը կործանեն ի՛նչ որ կանգնած են, կը պաշտեն ինչ որ այրած են: Փռք բաներէ յառաջ կու գան մեծ բաներ, ինչպէ՛ս առուակներէ դետեր: Գիրքերը հայելիի պէս են. եթէ հայելին ջինջ է՝ հաւասար ճշմարտացիութեամբ կը ցոլացնէ պալատն ու խրճիթը, գեղջկուհին եւ իշխանուհին: Ան լաւտես է կամ յոռտես, նայած թէ դրամ չունի՞ր թէ ունի: Երախտագիտութիւնը զօդ մը պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ շոքայ մը. գայն պէտք է ներշնչել եւ ո՛չ թէ որպէ՛ս պարտադրանք դնել ուրիներու վրայ:

7.- *Փոխեցէ՛ք զազափարներուն շարքը՝ ուր որ պէտք է:*

Գացի, յաղթեցի, տեսայ: Թշնամի բանակը կործանեց, պաշարեց եւ գրաւեց քաղաքը: Առողջ միտքը նախ կը բաղդատէ, ապա՝ կը դատէ: Մարդ կը ծնի, կը մեռնի, կը տառապի: Ոնրագործը բռնեցին, դատապարտեցին, դատեցին եւ գլխատեցին: Քնանալուն պէս պառկեցաւ: Անձրեւ տեղաց, երկինքը քանձր ամպերով ծածկուեցաւ: Հայրենի՛ք, պատրաստ եմ քեզի տալու կեանքս, հարստութիւնս, տաղանդս: Ամէն տարի ծառերը կը ծածկուին տերեւներով, պտուղներով, ծաղիկներով, կոկոններով:

Գ.- *ՃՇԳՐՏՈՒԹԻՒՆ*

Գրողը պէտք է զգուշանայ թէ՛ աւելորդ բառ գործածելէ եւ թէ՛ կարեւոր բառ զանց առնելէ: Ճշգրտութեան դէմ մեղանչում է երկարաբանութիւնը, որ «չառ բառերով քիչ բան ըսելն» է: Օրինակ. փոխանակ ըսելու «Միտքը յաճախ կ'առաջնորդուի սիրտէն», գրող մը կրնայ ըսած ըլլալ՝ «Մէրը, որ ունինք անձի մը կամ բանի մը հանդէպ, յաճախ յարգել կու տայ մեզի զայն իր արժանիքէն աւելի»: Ճշգրտութեան դէմ մեղանչում է նաեւ աւելորդաբանութիւնը, որ «անտեղի մանրամասնութիւններ տալն» է: Օրինակ. աւելորդաբանութիւն է՝ փոխանակ «գրամը վճարեցի եւ վաճառատունէն դուրս ելայ» ըսելու՝ «Ձեռքս գրպանս խոթեցի, հանեցի գրամներս, որոնց մէջէն առի որքան որ պէտք էր, տուի վաճառորդին, եւ ապա քալեցի դէպի դուռ եւ դուրս ելայ» ըսելը:

Վ.Ա.ՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

8.- *Հետեւեալ խօսքերը ըսէ՛ք ճշգրտօրէն՝ յապաւելով աւելորդ բառերը: «Մարդիկ չեն գիտեր ի՛նչ պիտի պատահի ապագային. միայն Աստուած գիտէ», կ'ըլլայ՝ «Աստուած միայն գիտէ ապագան»:*

Երբ մէկը գայրացած է եւ գայրացած վիճակի մէջ պատիժ կը տնօրինէ, ըրածը պատժել չ'ըլլար, վրէժ լուծել կ'ըլլայ: Մարդ կըրնայ ամէն տեսակ մոլութեան մէջ իյնալ, որովհետեւ մոլութիւններու սերմը իր սրտին մէջ է. կրնայ եւ ամէն տեսակ առաքինութիւն ունենալ, որովհետեւ առաքինութիւններու ալ սերմը իր սրտին մէջ է: Որքատունկը չորս տեսակ «պտուղ» կու տայ, որոնցմէ առաջինն է խաղաղը, երկրորդը՝ գինին, երրորդը՝ արբեցումը, չորրորդը՝

զոգումը: Որքան ալ յարգենք ուրիշ մը, դարձեալ ալ մեր յարգանքը անոր ուզածին չափ չ'ըլլար: Ազահ մարդիկ միշտ կը տանջուին ռսկի դիզելու տենչանքով. բայց կայ աւելին.՝ իրենց ունեցածը կորսնցնելու վայն ալ կը տանջէ գիրենք: Մարդ ա՛յն ատեն միայն կատարեալ քաղցրութիւն կը զգայ իր վայելած հանոյէն՝ երբ այդ հանոյէր իր աշխատանքին արդիւնքն է: Պիտի լռեմ ու պիտի չխօսիմ: Ըսի իրեն թէ ինչ կ'ուզէի, եւ ինք բերաւ ուզածս եւ ես դրամը վճարելէ ետք՝ առի եւ տուն եկայ: Եթէ կ'ուզէք երդում ընել՝ պէտք է որ անապարէ՛ք, բայց եթէ երդում ըրած է՛ք՝ պէտք է փութաք գայն կատարելու:

Դ.- *ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ*

Ոճի Բնականութիւնը կը կայանայ անճիւղ եւ անսեթեւեթ արտայայտուելուն մէջ: Բնականութեան դէմ մեղանչում է «արուեստականութիւնը», որ ուռուցիկ ասութիւններ, բռնաղբօսիկ ձեւեր գործածելն է: Օրինակ. «Այս ծառին տուէ՛ք՝ իր շուքը ձեր վրայ ձգելու կարելիութիւնը» արուեստական ոճի նմուշ մըն է. բնական ոճով կարելի էր ըսել՝ «Այս ծառին շուքին կեցէ՛ք»:

Վ.Ա.ՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

9.- *Հետեւեալ արուեստակեալ ոճով պրուած խօսքերը բնական ոճով արտայայտեցէ՛ք:*

Ո՛վ պիտի իջնէ երբեւիցէ հոգիիս անդունդներուն խորը եւ պիտի ունկնդրէ հոն արձագանգօղ երգը իմ տառապանքներուս: Արցունքներս այնքան տաք էին որ մէկ կաթիլը անոնց կրնար սառնալն մը հալեցնել: Իմ կարօտիս յորանապտոյտ մշուշները այնքան մոլեգնօրէն խոյացան դէպի քեզ՝ որ սասանեցաւ հոգիիս երկինքը: Ձեր մերժումը հիմնայատակ կործանեց յոյսերուս դրօշակը եւ անբակով լեցուց ապագան իմ երագներուս:

Ե.- *ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆ*

Ոճի այլազանութիւնը՝ խօսքին ձեւերուն եւ արտայայտութեան կերպերուն միօրինակ չ'ըլլալն է, անոնց փոխուիլն է պարա-

դաներուն համաձայն: Օրինակ. հետեւեալ պարբերութեան մէջ իմաստի շեշտը նախ անկաններու վրայ է. — չփառօր, առատածե՛նն, վտանգի մէ՞ջ (= վտանգաւոր կացութեան մէջ), սզե՞տ: Ապա շեշտը բայերու վրայ է. — կը խաբե՞ն, ոչմարի՛տն ըսէ, կը վշտացնե՞ն, մխիթարէ՛: Ապա անուններու վրայ է իմաստի շեշտը. — բնակարա՞ն, զգե՞ստ, հա՞ց: Կայ այլազանութիւն բերող ուրիշ պարսպայ մըն ալ. — ատիկա՛ մէյ մը հարցանիչի եւ մէյ մը շեշտի զործածումն է, նախ մէկ հարցանիչէ ետք մէկ շեշտ, ապա, երեք հարցանիչէ ետք՝ երեք շեշտ: Ու վերջապէս՝ «բնակարան», «հագուստ» եւ «հաց» բառերուն չկրկնուիլն է, որ կու տայ այլազանութիւն:

«Չփառօր է բարեկամդ՝ դուն առատածե՛նն եղիք. վտանգի մէ՞ջ է՝ օգնէ՛ անոր. տգե՞տ է՝ լուսաւորէ՛ գայն. ուրիշներ կը խաբե՞ն գինի՛՞ դուն ոչմարի՛տն ըսէ իրեն. ուրիշներ կը վշտացնե՞ն գայն՝ դուն մխիթարէ՛. բնակարա՞ն, հագո՞ւստ, հա՞ց չունի՛՞ բաժի՛ն հանէ՛ անոր քու տունէ՛դ, զգեստէ՛դ եւ սեղանէ՛դ...»:

Վ.Ա.Ր.Ժ.ՈՒԹ.Ի.Կ.Ն.ԵՐ

10. — Ուսուցիչին օգնութեամբ գտէ՛ք թէ ի՛նչ միջոցներու դիմուած է՝ հետեւեալ խօսքերուն ոճի այլազանութիւն տալու համար:

Ի՛նչ կուրուքիւն, — միշտ փափաքիլ այն՝ որ չունիս, եւ չգոհանալ անա՛վ՝ որ ունիս: Վա՛յ դաւանանիւն, որ յաղթանակ ու փառք կ'ուզէ ձեռք ձգել իր հայրենակիցներուն պարտութեան եւ անպատուութիւն գինով: Քանի՛ քաղցրութիւններէ գուրկ է հոգիւն անոր՝ որ հաւատք չունի, ինչպիսի՛ դառնութիւններով լի պէտք է ըլլայ հոգի՛ն անոր՝ որ ո՛չ միայն հաւատք չունի, այլ եւ կը խախտէ ուրիշներու՛ հաւատքը: Յոյսը մեծագոյն մխիթարութիւնն է. ան կը սրբէ արտասուքը եւ կը բերէ ժպիտ, կը վանէ վախը եւ կը ներշնչէ քաջութիւն, կը փարատէ անստուգութիւնը եւ կը լուսաւորէ նոր համբաներ: Թշնամի՛ եղէք ստութեան, եւ ոչմարտութեան՝ լեզուով միայն խօսեցէ՛ք մարդոց: Եթէ սեղմես տունկ մը՝ չ'անիր, կը բոշմանի. եթէ կապես նորածինի մը անդամները՝ տխեղծ կը մնայ ան. եթէ ոնշես, կաշկանդես մարդկային հոգի՛ն՝ տունկին պէս կը խամբի, փոխանակ ծլարձակ բարձրանալու, մանուկին պէս խեղանդամ կ'ըլլայ՝ փոխանակ գեղեցիկ եւ գորեղ ըլլալու:

Զ. — ՀԱՐԱԶԱՏՈՒԹ.Ի.Ն

Ոճի հարազատութիւնը՝ գրութեան մը նիւթին համաձայն՝ ոճական ձեւերուն փոխուիլն է. ոճին յարմարիլն է խորքին:

Նիւթի իւրաքանչիւր տեսակ իր յատուկ ոճը կը պահանջէ: Օրինակ. գիտական նիւթի մը մասին գրուած ուսումնասիրութեան մը ոճը մեծապէս տարբեր կ'ըլլայ բանաստեղծական ոճէն. դիտանական ու բանաստեղծը նոյն կերպերով չեն արտայայտուիր, օրինակ՝ արեւին մասին: Յաճախ բառերն իսկ նոյն իմաստը չեն ունենար: Գրողը պէտք է գիտնայ, երբ նիւթը պարզ է՝ պարզ ոճ գործածել, երբ բարդ է՝ բարդ. երբ պիտի արտայայտէ բուն յուզում մը՝ բուն ոճով գրել, երբ մեղմ յուզում մըն է որ կ'ուզէ փոխանցել ընթերցողներուն՝ արտայայտուիլ մեղմ ոճով մը: Պէտք է գիտնայ իւրաքանչիւր իմաստի եւ զգացումի համար ընտրել յարմարագոյն բառերն ու ոճական ձեւերը: Ու նաեւ՝ պէտք է իւրաքանչիւր անձի բերնին մէջ դնէ անոր գիրքին ու վիճակին յարմար լեզու, այսինքն՝ պէտք է «անձնականացնէ» լեզուն: Օրինակ. պարզ դոնապան մը եւ զարպացած անձ մը նոյն ոճով չեն խօսիր:

Վերադարձները (որակական անկանները) կարելոր դեր կըրնան խաղալ ոճերու կազմութեան մէջ: Տաղանդաւոր գրողը այն է, որ գիտէ վերադիրներէն զործածել անո՛նք միայն, որոնք կը ծառայեն աւելի յստակ, աւելի շնորհալի կամ աւելի տպաւորիչ դարձնելու ըստածը: Անհրաժեշտ են ա՛յն վերադիրները միայն, որոնք եթէ վերցուին՝ գրութեան յստակութիւնը, գեղեցկութիւնը եւ տպաւորչութիւնը կը նուազին:

Վ.Ա.Ր.Ժ.ՈՒԹ.Ի.Կ.Ն.ԵՐ

11. — Մէկական յարմար վերադիր գրէ՛ք գիծերուն տեղ, եւ ըսէ՛ք թէ անոնց ներկայութիւնը ոճային նպաստ մը կը բերէ՞: Պաշտպանեցէ՛ք ձեր կարծիքը:

Գարնանային — առաւօտ մըն էր՝ երբ որսի գացիւնք դէպի — անտառները: Հեռուէն, — ծովին վրայ ծիփացող — նաւակները կէտերու կը նմանէին: —, —, — աշակերտ մը կը սիրուի իր ուսուցիչներէն: Բանականութիւնը — ջահ մըն է, գոր բնութիւնը տուած է մեզի, եւ մեր պարտականութիւնն է միշտ վառ պահել անոր — լոյսը: Սէրը — և — ուժ մըն է, առանց որուն ո՛չ — ըլլալ, և ո՛չ ալ

— ըլլալ պիտի կարենայինք: Պարտկերուն —, — ու — երգը լե-
ցուցած էր շուրջի — ու — տարածութիւնը: — գիշերը պատած էր
— գիւղը. միայն քանի մը — աստղեր կը փայլէին — երկինքին մէջ:
— գառակ մը կը յարգէ իր ծնողքը նոյնիսկ երբ անոնք — եւ — չեն:

12.— *Որոշեցէ՛ք թէ հետեւեալ խօսքերէն որո՞նք անձնականա-
ցած ո՞ճ ունին եւ որո՞նք՝ չունին: Փոփոխութիւններ մտցուցէք ուր
որ պէտք է:*

Գիւղացին ըսաւ. «Կուշտն անօթուն մայր (մանր) կը փրթէ»: Մսավաճառին աշկերտը ըսաւ. «Ահեղ վիշտ մը հոգիս կը յուզէ»: Իննսպանը ըսաւ. «Բաւական գլուխ արդուկեցիր. ա՛լ կ'ընակդ ցու-
ցուր մեզի»: Ուսուցիչը ըսաւ. «Պէտք է լրջօրէն անդրադառնաս
սխալներուդ եւ ջանաս սրբագրել զանոնք»: «Օ՛, ե՛րբ ինքզինքդ
պիտի շտկես, ե՛րբ մարդ պիտի ըլլաս», ըսաւ բանուորը իր տղուն:
Դասախօսը ըսաւ. «Փարայ չ'արժեք այդ վէպը»: Ծառան ըսաւ.
«Տէր իմ, տիկինը վերադարձած է վարսայարդարէն, եւ կ'ակնկալէ
որ փութով իրեն ներկայանա՛մ»: Պարոն Ասատուրը ինքիբմէ ելած,
խելակորոյս պռոց. «Նկատի ունենալով այն բոլոր պարագանե-
րը, որոնք կապ ունին այդ կարեւոր խնդրին հետ, եւ իմտի ունե-
նալով ենթակային բնական տկարութիւնները, խոհեմութիւն է որեւէ
լուրջ որոշում չ'առնել եւ իհարկին այդ պաշտօնը չ'տալ իրեն»:

Է.— ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ոճի երաժշտականութիւնը՝ *դրութեան մը՝ ընթերցողին կամ
ունկնդիրին ականջին հաճելի հնչելն է. բառերու եւ խօսքերու ներ-
գաշնակութիւնն է: Երաժշտականութիւնը գործածումն է այնպիսի
բառերու եւ խօսքերու, որոնք իրենց հնչումով ալ կ'օգնեն որ խորքը
աւելի տպաւորիչ ըլլայ: Օրինակ. «Վա՛յ այն ազգերուն, որոնք
տգիտութեան խոր խաւարին մէջ կը խարխափեն անվերջ» կամ «Ու-
կի ծապեր, ծիածան, ծփում, ձայներ, միսքիք վարդ...»:*

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

13.— *Կարդացէ՛ք հետեւեալ երաժշտական խօսքերը եւ ցոյց
տուէք թէ ե՛րբ կրկնուող ձայները կը ձգտին արտայայտել նկա-
րագրուող բանին բնական ձայնն ալ:*

«Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ յիշիր, ինձ այդպէս, քոջ
պէս մի՛ գրա»: «Չունչէ նպուռն ի նղին, ննուեն նննդուկփ նուուղա-

կանք»: «Ջահերն հիմակ կ'երագեն համակ գիւմբիք ու քարշիշ»: «Պիղնձօք շողան, գոռան ոգիք, լանջօք ընդ հագագս գրոց շնչին, ի
հրաշունչ ի փրփրերախ երկվարաց դոռթեն դրնդին, Յատակփ
երկրին խուլ դրդին, քնդան, դողան սանդարամետօք»: «Քամի՛ն,
աշնան քամի՛ն, Հոնդո՛ւմ է, Փնչո՛ւմ, Ահեղացանց ցնցում ցուցա-
նակները չոր. Ջրնգում են ահից պատուհաններն հնչուն. Ու քըն-
չում է քամին, — երկաթաքեւ քոչուն, — Ջարհուրելի, զագիր փո-
ղոցների միջով...»: «Աղուորն անո՛նք են միայն, որ տենչանքիդ
ընդմէջէն՝ Անցան, գացին ու հիմա քեզ հեռուէն կը կանչեն»: «...Ի-
րեն ըսի թէ լուսնին տակ մարդ կը մսի. Յետոյ հեռուն գացի, լա-
ցի...»: (Կարդացէ՛ք նաեւ Ա. Չոպանեանի «Գեղօն ի պատիւ Հայ
Հեզուին» դրութիւնը, ինչպէս նաեւ Ռ. Չարդարեանի «Գամփուր»
որպէս նմուշ երաժշտական ոճի):

Ը.— ՊԱՏԿԵՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Ոճի պատկերաւորութիւնը՝ *պատկերներու միջոցով արտա-
յայտուելու կերպն է: Օրինակ. փոխանակ ըսելու՝ «Ամէն հաճելի
բան իր անհաճոյ կողմն ալ ունի», կրնանք պատկերաւոր ձեւով մը
ըսել՝ «Չկայ վարդ առանց փուշի». («Վարդի» պատկերը դրուած է
«հաճելի բաներու» տեղ, «փուշի» պատկերը՝ անհաճոյ):*

Պատկերներու գործածութիւնը կրնայ ս'չ միայն աւելի գե-
ղեցիկ դարձնել ոճը, այլեւ աւելի՛ տպաւորիչ եւ հասկնալի՛ ըս-
ւածը:

Պատկերաւոր արտայայտութիւններ են.— «Պարապ տակառը
շատ ձայն կը հանէ», «Մեր ընկերոջ աչքին մէջ շի շիւղը կը տեսնենք,
բայց չենք տեսներ մեր աչքին մէջ ի գերանը», «Մեծ պաշտօնները
բարձր ժայռերու կը նմանին. արծիւներն ու սողունները կրնան
չուտով հասնիլ հոն», «Մաղ մը որքան ալ նուրբ ըլլայ՝ դարձեալ
ստուեր կը ձգէ», «Սարոյկներու լոյսով միտքերը չեն լուսաւորուիր»,
«(Եթէ հնչէ տխուր կոչնակ)՝ Թրթռուն ծիծաղ մահու դժխեմ»,
«Բայց լոյսն իմ հոգուոյս քիչ-քիչ կը մաշի», «Լուսնի լոյսը ծառե-
րէն ծաղիկի պէս էր կախուեր»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

14.— *Հետեւեալ պատկերաւոր խօսքերուն իմաստը ըսէ՛ք սո-
վորական եւ առանց պատկերի լեզուով մը:*

Մատաղ տունկը դիրբաւ կը շտկուի: Արդարութիւնը կազ է: Ծոյլը կ'ուզէ ուտել նուշը, բայց չ'ուզեր կտորել կուտը: Մորփեաի գիրկը գնաց: Շատ մը մարդիկ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ կը սիրեն: Ձեր ստացած նախատիւնք գրեցէ՛ք աւագի վրայ, բարիքը՝ պղինձի: Դրամը բարի ծառայ մը եւ չար տէր մըն է: Մի՛ թողուր որ ուսիդ վրայ նստին, որպէսզի չնստին գլխո՛ւդ ալ վրայ: Չարին բարձր փուշով լի է: Դիրաբորբոք մարդուն եռանդը յարդի բոցի պէս է: Ամէնէն բարձր հասկերը ամէնէն լեցունները չեն: Հասուն եւ համեղ պտուղներն են, որ թռչունները կը կտցեն ամէնէն առաջ: Պէտք է զանազանել որումը ցորենէն: Ծուլութիւնը այնքան դանդաղ կ'ընթանայ, որ անօթութիւնը իսկայն կը հասնի հտուէն:

15.— Պատկերաւոր ոճով արտայայտեցէ՛ք հետեւեալները: Օրինակ. փոխանակ ըսելու՝ «Շատ ազտոտ էր», կրնանք ըսել՝ «Աղտոտութեան տիղմին մէջ կը լողար»:

Ան անմեղ հոգի մը ունէր: Շատ մտահոգուած էի: Վարդը ամէնէն գեղեցիկ ծաղիկն է: Ես մեր ընտանիքին կրտսերագոյն անդամն եմ: Ան շատ երիտասարդ էր երբ մեռաւ: Մահամերձը չմեռաւ: Տասնըվեց տարեկան է: Աշխատասէր մարդը անօթի չի մնար: Ձիւնով ծածկուեցան դաշտերը: Աստղերը կը փայլէին երկինքին մէջ: Մտածէ՛ նաեւ ուրիշներո՛ւ շահին մասին: Վստահելի չէ ան: Եթէ քաղցրութեամբ վարուիս՝ կրնաս ամէնէն չար մարդիկն իսկ սիրաշահիլ:

Թ.— ԻՆՔՆԱՏՊՈՒԹԻՒՆ

Ոճի ինքնատպութիւնը՝ ոճի նորութիւնն է. դրողի մը ոճին՝ ուրիշ դրողներու ոճին չնմանիլն է: Արուեստագէտ դրողը պէտք է ունենայ արտայայտուելու իւրայատուկ կերպ, որ ըլլայ նոր՝ առանց արտառոց ըլլալու. (արտառոցութիւնը՝ ուշադրաւ ըլլալու սիրոյն ծայրայեղութիւններու, չափազանցութիւններու մէջ իյնալն է): Օրինակ. «Առանց փուշի վարդ չկայ» բացատրութիւնը՝ թէ՛ եւ պատկերալից է, կուռ եւ ճշմարիտ, բայց այնքա՛ն դործածուած է, որ այլեւս դարձած է սովորական եւ սկսած է կորսնցնել իր տպաւորելու կարողութիւնը: Մինչ նոր եւ ինքնատիպ բացատրութիւններ են, երբ Շ. Շահնուր՝ ըսելու համար թէ «սենեակ մը շատ փոքր է», կը գրէ՝ «գրպանի չափ էր ան (սենեակը)», կամ «հոն ոճիք իսկ թօթուելու տեղ չկար...»:

Ինքնատիպ ոճ ունեցող դրողի մը դործը կարելի է ճանչնալ յաճախ՝ առանց տեսնելու ստորագրութիւնը: Օրինակ. կարելի չէ չփոթել Գ. Վարուժանի ջերթուածները՝ Մ. Մեծարենցի, Սիւմանթոյի կամ Թէքէեանի ջերթուածներուն հետ, եւ փոխադարձաբար: Նոյնպէս՝ Գ. Զոհրապի արձակը՝ Ինտրայի կամ Հ. Զարգարեանի արձակներուն հետ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16.— Բարձրաձայն կարգացէ՛ք հետեւեալ հատուածները, որոնք իբրարմէ մեծապէս տարբեր են իրենց ոճերով:

— Հին օրերու դրացիներ՝, եւ ուխտաւորներ աշխատանքի, Օրհնեա՛լ ըլլա՛ք, երգեցէ՛ք, օրհնեալ ըլլա՛ք բոլորդ ալ, եւ հաւատացէ՛ք աւետիսիս, գարուններու ձեր նոր գինին Արդարութեան եւ ձեր կամփին օրէնքին տակ Այսուհետեւ ձեր սափարէն կամ արծաթէ դաշխուրանէն Հաւատացէ՛ք, առանց արեան պիտի խմէք... (Սիւմանթո)

Գիշերն անո՛ւշ է, գիշերն հեշտագի՛ն, Հաշիշով օծուն ու բալասանով. Լուսեղէն քամբէն կ'անցնիմ ես գինով, Գիշերն անո՛ւշ է, գիշերն հեշտագի՛ն... (Մ. Մեծարենց)

Ո՛ր, կայծ տուէ՛ք ինձ, կայծ տուէ՛ք, ապրիմ... Ի՛նչ, երագէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ... Այս նակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուա՛ծ, Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած... (Պ. Դուրեան)

Երկնի անթիւ աստղերէն մե՛րն է միայն անիկա... Ամէն գիշեր, վերը, հո՛ն՝ Արագածի գլխուն վրայ, Ան կը շողայ առանձին, այնքա՛ն անջատ միւսներէ՛ն՝ Որ ուրիշ ձեռք մը կարծես զանի վառեց գազտնօրէն... (Թէքէեան)

Անկոպ ուղիներէ, օճի քամբաներէ՝ քարերուն վրայէն, այծեամ մը կը փախչի. անցած տեղերէն կարմիր արիւն կաթկթած է ու քարերը դեռ թաց են. կը փայլէ՛, կը հեռանայ. կոտոշները քարեր կը գլտորեն դարվար... (Հ. Զարգարեան):

... Մէկէնիւմէկ Համբիկ քօթուրեցաւ պտուկած տեղէն, աչ-
ւրները բացաւ խոշոր-խոշոր, ելաւ նստաւ, չորսդին նայելով՝ ան-
ծանօթ վտանգի մը երկիրդէն կարծես: Ձայն մը զարկած էր ական-
ջին, բոլորովին տարբեր՝ սայլավարներու կոպիտ պոռչտուէն:
Ճամբուն եզերքէն կու գար, հոն, վերը, շատ մօտ...: (Երուխան)

... Սենեակին խեղճ իրերը ճառագայթին կը նային՝ ցուրտ,
երկչոտ հրնուսնաճով մը. պատուհանը երկբայոյզ գուարթուքեամբ
մը կը մեխանաճոտի: Ո՛չ, չի՛ կրնար տեսլ. որքան պղտոր է եր-
կինքէն իջնող ճառագայթը, հիմա պիտի նուաղի: Խենդ եմ. որչա՛փ
խեղճ եմ, միթէ կրնա՞յ տեսլ: (Ինարա):

Տէ՛ր իմ, պարգեւատու Տէր, ի բնէ բարի, ամէնուն հաւասա-
րապէս տիրող, ոչինչէն ամէն ինչ ստեղծող, փառաւորուած. ան-
քնին, անհեղ, անարկու, սասկալի, հօօր, սաստիկ, անբովանդակելի,
անմերձեանալի, անըմբռնելի, անիմանալի, անշօշափելի, անուրակե-
լի, անսկիզբ, անժամանակ: (Նարեկացի):

... Որովհետեւ (այժմ) կայ բան մը աւելի՛ ճակատագրա-
կան, աւելի աններող, կայ բան մը անհեղ, անդիմադրելի, որ իր ա-
նունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը,
նահանջը հայերուն: Կոխը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն
նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած
կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ:
Բայց նահանջը հոգիներու, գլխու պոռչտ տուող գառիթափին վրայ
սա նահանջը՝ կը ջնջէ. կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան...

Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն
բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նա-
հանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մեծք դեռ կը նահանջենք
բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտու-
թեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին (Շ. Շահնուր):

4.- ԽՈՐՔԸ

Արուեստի պորժի մը խորքը անոր բովանդակութիւնն է:

Լաւ խորքի մը գլխաւոր յատկանիշներն են.

Ա.- Ին՝ՔՆԱՏՊՈՒԹԻՒՆ

Ինքնատիպ է այն խորքը, որ նոր է, որ չի յիշեցներ ուրիշ
խորքեր, որ կը ներկայացնէ այնպիսի երեւոյթներ, կացութիւններ,

պատմութիւններ՝ որոնք եթէ ամբողջովին նորատեսակ չեն, առ-
նուազն կը դիտուին նոր լոյսի մը տակ, նոր անկիւնէ մը: Օրինակ.
«Սէր», «մահ», «Աստուած», «Հայրենասիրութիւն» այնպիսի նիւ-
թեր են, որոնց մասին դարերով գրուած են բազմաթիւ արուեստա-
գէտներու կողմէ: Բայց եթէ քննենք մեծ արուեստագէտներու գոր-
ծերը, պիտի գտնենք որ անոնք կըրցած են այս «Հին» նիւթերուն մօ-
տենալ նոր անկիւնէ մը, այս Հին նիւթերուն մասին նոր բան մը՝
ըսել: Այսպէս. Վ. Թէքէեանի «Ես Սիրեցի» բանաստեղծութիւնը,
որ չհասկցուած ու գաղտնի սիրոյ մասին է, ինքնատիպ խորքի յա-
ջող նմուշ մըն է: Մահի եւ Աստուծոյ դաղափարներուն նուիրուած
բացառիկ քերթուած մըն է Պ. Դուրեանի «Տրտունջը», որ մեծա-
պէս ինքնատիպ է իր խորքով ալ: Դ. Վարուժանի «Կարմիր Հողը»
Հայրենիքի սէրը ինքնատիպ մերձեցումով փառաբանող բանաստեղ-
ծութիւն մըն է:

Արձակի մէջ, որպէս ինքնատիպ խորքով գործեր՝ կարելի է
յիշատակել Ռ. Սեւակի «Ստամբուլի Չոհր», Ե. Օտեանի «Պա-
ֆիէն», Ռ. Չարդարեանի «Ո՛վ որ Սուլթան մը ունի իր հոգիին
մէջը», Ա. Արփիարեանի «Հաճոյքի համար», Շ. Շահնուրի «Նա-
հանջը Առանց Երգի», Եւայլն, Եւայլն:

Բ.- ԼՐՁՈՒԹԻՒՆ

Լրջութիւնը խոթողութիւն չէ: Պայման չէ ծանր նիւթերու
մասին դրել լուրջ ըլլալու համար: Լուրջ կրնայ ըլլալ ամէնէն թե-
թեւ նիւթի մը մասին գրուած երկ մը՝ եթէ հեղինակը յաջողած է
իր նիւթը որպէս առիթ եւ միջոց գործածել՝ արտայայտելու հա-
մար խորունկ զգացումներ կամ գաղափարներ, ընելու համար ճիշդ
քննադատութիւններ: Երգիծական գրութիւնները յաճախ ունին
շատ լուրջ նիւթ եւ կը շօշափեն հիմնական կարեւորութիւն ներ-
կայացնող հարցեր:

Լրջութեան տեսակէտէն յատկանշական կտոր մըն է Դ. Տե-
միրճեանի հետեւեալ մանրապատումը, որ «ճանճ»ի մը մասին է.

Նա վերջինն է իմ բնակարանում: Ինչպէ՛ս է նա կեանքը պահ-
պանում այս դժնի Յունուարին՝ անհաւատալի է: Բայց նա ապրում
է եւ թռչում սենեակից-սենեակ, պատուհանից-պատուհան: Մէկ
նստում է գրքիս վրայ, թեւիս, մէկ նախքան է օդում: Բայց մէկ էլ
որ չի՛ գալիս ականջիս տակով սուր, բարակ բզգում ու անցնում, —

խկոյն երեւակայութեան մէջ պատկերանում է ամառը, անտառի մի ոսկեխոյս բացատ, ծառերի շշուկը, մեղունների բզբիւններ, գետի խշշոցը եւ հեռաւոր կանչը չգիտե՛ս հովուի՞ թէ հօտաղի:

Խոտերում օրօրում եմ ծաղիկները, վերելից ժպտում է երկնքի խոր թաւշէ կապոյտը:

Եւ այդքան պատկերներ գարթեցնում է իմ մէջ մի փա՛նն...

— Ո՛չ, ճանարալի չէ, չի՛ նեղացնում նա, թող ապրի՛ այդ փաննը:

Գ. — ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Առողջ է այն խորքը, որ ո՛չ՝ հիւանդագին, պարտուողական եւ մոլութեանց առաջնորդող արամազրութիւն կը ստեղծէ ընթերցողին մէջ, եւ ո՛չ ալ՝ կը ձգտի ընթերցողին փոխանցել պոռոտ, անհիմ եւ հիւանդագին լաւատեսութիւն մը: Առողջ է այն խորքը որ չի վախնար ներկայացնել իրականութիւնը, եթէ նոյնիսկ այդ իրականութիւնը տխուր է, մտահոգիչ եւ ազեղ. բայց նոյն ատեն՝ չ՛անտեսեր այդ տխուր, մտահոգիչ եւ ազեղ կացութենէն դուրս գալու յոյսը, կարելիութիւնը, իղձը:

Այլ խօսքով՝ առողջ է այն խորքը, որ անկեղծ է, որ չինծու չէ, որ իրականութիւնները չի ձեւազեղծեր: Այն հեղինակը, որ փոխանակ ներկայացնելու կեանքի իրականութիւնները այնպէս ինչպէս որ են՝ զանոնք կը ձեւափոխէ՝ այնպէս ինչպէս ինք զիտակցօրէ՛ն կ'ուզէ, չի կրնար առողջ խորքով գործեր արտադրել: Արուեստի գործ մը սրբանում է. եւ ոչի՛նչ կը գտնէ այն արուեստագէտը, որ սկիզբէն «որոշած է» թէ ի՛նչ պիտի գտնէ: Ոչի՛նչ կը գտնէ նաեւ ա՛յն արուեստագէտը, որ սկիզբէն որոշած է ոչի՛նչ գտնել:

Ոորքի առողջութիւնը հաւասարակշռութիւն մըն է իրականութեան եւ երազին միջեւ, բնական օրէնքներու եւ մարդկային իղձերու միջեւ, տիրութեան եւ ուրախութեան միջեւ, չարին եւ բարին միջեւ, մահին եւ կեանքին միջեւ:

Առողջ խորքի նմուշներ են գործերը բոլոր մեծ արուեստագէտներուն: Հայկական գրականութենէն յիշենք — Պ. Դուրեանի «Տրտունջ»ը, Ռ. Սեւակի «Կոռնիկը», Երուսանի «Առջի Մայրիկը», Գ. Զոհրապի «Փոթորիկը», Լ. Բաշալեանի «Նոր Զգեստը», Վ. Թէքէեանի «Արզի Հայաստանին»ը, Նար-Դոսի «Մահը», եւ այլն:

Գ. — ՀԱՄԱՄԱՐԳԿԱՅՆՈՒԹԻՒՆ

Համամարդկային է այն խորքը, որ անհատականէն կը հասնի մարդկայինին, ուր ներկայացուող հերոսները թէ՛ անհատներ են եւ թէ՛ մարդեր, ուր ամէն հերոս ինքզինք ըլլալով հանդերձ, է՛ նաեւ մարդ՝ իր մէջ երեւան եկող մարդկային զգացումներով ու մտածումներով, իր արարքներով:

Օրինակ. Գ. Զոհրապի «Սարիսիւր» պատմուածքին կեդրոնական հերոսուհին՝ Սոֆիկ Հանրմը, այլեւս միայն Սոֆիկ Հանրմ մը չէ, այլ նաեւ ներկայացուցիչն է բոլոր Սոֆիկ Հանրմներուն՝ ո՛ւր ալ գտնուին անոնք: Գ. Զոհրապ յաջողած է Սոֆիկ Հանրմի մը անձին մէջ մէկտեղել հոգեբանութեան եւ խառնուածքի ա՛յն հիմնական դիժերը, որոնք յատուկ են բոլոր Սոֆիկ Հանրմներուն, եւ մնայուն են:

Նոյնպէս՝ Յ. Պարոնեան յաջողած է իր «Մեծապատիւ Մուրացիկանները» դործին հերոսներէն շատերը վերածել տիպարներու. Աբիսողոմ Աղան ներկայացուցիչն է «Աբիսողոմ-Աղայութեան», Մանուկ-Աղան՝ «Մանուկ-Աղայութեան»:

Նոյնն է պարագան Ե. Օտեանի «Ընկեր Փանջունի»ին: Արզաբեւ, ո՛վ չէ հանդիպած տակաւին սպրող փանջունիներու... Աբիսողոմ Աղաներու...:

Բանաստեղծութեան պարագային, որ պատմութենէ աւելի՛ երեւակայութիւն, յուզում, մտորում է, խորքը համամարդկային կ'ըլլայ երբ բանաստեղծը կը ներկայացնէ այնպիսի երեւակայութիւններ, յուզումներ, մտորումներ, որոնք իրենց իսկականութեամբ, հարազատութեամբ, խորութեամբ այլեւս յատուկ են բազմաթիւ մարդոց հոգիին: Բանաստեղծ մը իր անձնական մէկ յուզումը կրնայ երգել այնպիսի երեւակայութեամբ, հարազատութեամբ եւ խորութեամբ, որ այդ «անձնական» յուզումը կը դադրի միայն իրը ըլլալէ, եւ կ'ըլլայ բոլորի՛նը, այսինքն՝ համամարդկային:

Օրինակ. Գ. Պէշկէօթիւրեանի «Սրինդը», Պ. Դուրեանի «Ի՛նչ կ'ըսեն»ը, Մ. Մեծարեանցի «Հիւղը», Գ. Վարուժանի «Ծեր Կոռնիկը», Սիամանթոյի «Գիւտին Փառքը», Վ. Թէքէեանի «Մէկ Հատիկ» քերթուածը, Մ. Զարիֆեանի «Սենդը», Ե. Զարեանցի «Քամին», Վ. Տէրեանի «Հրաժեշտի Գազէլ»ը, եւ այլ բազմաթիւ բանաստեղծներու ստեղծագործութիւններէն շատերը ունին համամարդկային խորք:

Որպէսզի ստեղծագործութեան մը խորքը համամարդկային ըլլայ՝ անհրաժեշտ չէ որ նիւթը «համամարդկային» (այսինքն, օրինակ՝ համաշխարհային եղբայրութեան, կամ յեղափոխութեան, Աստուծոյ) մասին ըլլայ: Կան Աստուծոյ եւ համաշխարհային եղբայրութեան մասին գրուած բազմաթիւ գործեր, որոնք շատ հեռու են համամարդկային ըլլալէ, որովհետեւ գուրկ են իսկականութենէ, հարազատութենէ, խորութենէ: Մինչ կան «փոքր», անհատական նիւթերու մասին գրուած բազմաթիւ ստեղծագործութիւններ, որոնք համամարդկային են, որովհետեւ անոնց հեղինակները յաջողած են այդ փոքր, անհատական նիւթերը միջոց գործածել՝ երեւան բերելու եւ խոր հարազատութեամբ նկարագրելու համար մարդկային հոգիին մէկ նոր երեսը:

Ե.- ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արժէք չունին ինքնատպութիւնը, լրջութիւնը, առողջութիւնը եւ համամարդկայնութիւնը՝ եթէ արուեստի գործ մը հետաքրքրական չէ: Երկ մը հետաքրքրական կ'ըլլայ, երբ զէպօքերու շղթան ընթերցողը առաջնորդէ «հաւատարի անակնկալներու», անոր միտքն ու երեւակայութիւնը գրգռէ, յուզէ անոր սիրտը, անոր մէջ արթնցնէ փափաքը գիրքը կարդալու եւ աւարտելու: Անշուշտ ձեւը (լեզուն, ոճը, կառոյցը) մեծ դեր ունի երկ մը հետաքրքրական դարձնելու գործին մէջ, բայց պէտք է որ խորքը ինքնին ալ ըլլայ հետաքրքրական, շահեկան:

Բնականաբար շատ բան կախուած է ընթերցողին հասկնալու կարողութենէն, տարիքէն, ճաշակէն: Կան նիւթեր, որոնք կը հետաքրքրեն առաւելաբար պատանիները (օրինակ. արկածախնդրական պատմութիւնները. — «Թորոս Լեւոնի», «Սենդը», «Պապ Թազաուր», «Գէորգ Մարգպետունի», եւայլն): Չափահաս եւ զարգացած ընթերցողները կը հետաքրքրուին յատկապէս հոգեբանական եւ ընկերային խորք ունեցող պատմութիւններով (Օրինակ. «Անձկութեան Ժամեր»ը, «Ներաշխարհ»ը, «Ամիրային Աղջիկը», «Կարմիր Ժամուկ»ը, «Հացաւան»ը, «Մակ Պտուկը», «Նաւը Լեռան Վրան», եւայլն):

Բանաստեղծութեան պարագային, սովորաբար, կարելի չէ հետաքրքրականութեան մասին խօսիլ, որովհետեւ բանաստեղծութիւնները, ընդհանրապէս, պատմութիւն մը չեն պարունակեր, եւ

առաւելաբար յուզումի մը, մտածումի մը, գեղեցկութեան մը նկարագրութիւնն են: Անշուշտ կան բանաստեղծութիւններ (վիպերգ, դիւցազններգութիւն, եւայլն), որոնք պատմումներ են եւ հետեւաբար կարելի է խօսիլ անոնց հետաքրքրականութեան մասին: Օրինակ հետաքրքրական է Յ. Թումանեանի «Անուշ» վիպերգը:

5.- ԽՕՍՔԻ ՁԵԻԵՐ, — «ՈՃԵՐ»

Ա.- ՏԱՌԱՅԻ ԵՒ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԲԱՌԵՐՈՒ

Երբ բառ մը գործածուած ըլլայ իր բուն, սովորական իմաստով՝ կ'ըսենք թէ գործածուած է տառացի առումով: Երբ գործածուած ըլլայ իր սովորական իմաստէն տարրեր իմաստով՝ կ'ըսենք թէ գործածուած է փոխաբերական առումով: Օրինակ. երբ ըսենք «պաղ կերակուր», «պաղ» բառը գործածուած կ'ըլլայ տառացի առումով, որովհետեւ պարզապէս կը նշանակէ «տաք չեղող»: Բայց եթէ ըսենք «պաղ խօսուածք», կը հասկնանք «անհամակրելի» խօսուածք. «պաղ» բառը հոս գործածուած կ'ըլլայ փոխաբերական առումով:

Վ.Ա.Բ.ՈՒԹԻՒՆՆԵՐ

17.- Որոշեցէ՛ք թէ չեղազիր բառերէն որո՞նք տառացի առումով գործածուած են, որո՞նք՝ փոխաբերական:

Այս թուրք քաղցր է: Քաղցր խօսակցութիւն մը ունի: Խորունկ փոս մը: Խորունկ գաղափարներ: Քոյրս մաքուր սիրտ ունի: Մաքուր են ձեռքերդ: Պարապ գլուխները՝ պարապ հասկերու պէս վեր կը կանգնին: Ուռեցուցի փուչիկը: Հպարտութիւնը կ'ուռեցնէ անմիտները: Խորշակը խամբեցուց ծաղիկները: Թշուառութիւնը կը խամբեցնէ հոգին: Մեր աշխատանքին պտուղը չբաղեցինք: Պտուղները տակաւին հասուն չեն: Հասուն գաղափարներ յայտնեց ան: Սուր չէ անոր միտքը: Դանակը սո՞ւր է: Օգուտ մը քողեցի՞ք անոր քսածներէն:

18.- Հետեւեալ բառերը գործածեցէ՛ք երկուքական անդամ, մէյ մը՝ տառացի, եւ մը՝ փոխաբերական առումով:

Խաւար, սեւ, թռչիլ, խեղդել, բութ, ծոյլ, լոյս, հալիլ, ցած, առողջ, երկինք, տափ:

Բ.— ՓՈՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ (MÉTAPHORE - METAPHOR)

Փոխաբերութիւնը խօսքի ձեւ մըն է, որով առարկայ մը, անձ մը, կենդանի մը, երեւոյթ մը կը նմանցնենք ուրիշ բանի մը՝ առանց ըսելու թէ ինչի՛: Օրինակ. եթէ ըսենք՝ «Արեւը ամպերուն ընդմէջէն մեզի կը նայէր ժպտաղէմ», արեւը նմանցուցած կ'ըլլանք մարդու. «ժպտաղէմ նայիլը» մարդկային յատկանիշ մըն է:

«Արեւը ամպերուն ընդմէջէն մեզի կը նայէր ժպտաղէմ» խօսքը փոխաբերութիւն մըն է, որովհետեւ հոն՝ մարդկային յատկանիշ մը վերադրուած է արեւին՝ առանց որ յիշատակուի մարդը:

Գ.— ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ (COMPARAISON - SIMILE)

Համեմատութիւնը խօսքի ձեւ մըն է, որով առարկայի մը, անձի մը, կենդանիի մը, երեւոյթի մը յատկանիշներէն ոմանք կը վերադրենք ուրիշ բանի մը, եւ կ'ըսենք թէ ինչի: Օրինակ. «Արեւը, մանուկի մը պէս, ամպերուն ընդմէջէն մեզի կը նայէր ժպտաղէմ» խօսքը Համեմատութիւն մըն է, որովհետեւ հոն կ'ըսուի՝ թէ ինչի նմանցուած է արեւը:

Համեմատութիւնը փոխաբերութենէն կը տարբերի անով որ Համեմատութեան մէջ ըսուած կ'ըլլան բաղդատութեան երկու եզրերն ալ՝ «Արեւ»-«մանուկ», մինչ փոխաբերութեան մէջ տրուած կ'ըլլայ միայն մէկ եզրը:

Համեմատութիւնը կը կառուցուի սովորաբար ինչպէս, նման, պէս, գերք, որպէս բառերուն գործածութեամբ: Օրինակ. «Մեծ մարդիկ մեծ լեռներու պէս են. պէտք է հեռուէն նայիլ՝ անոնց մեծութիւնը դնահասակ կարենալու համար»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

19.— Որոշեցէ՛ք թէ հետեւեալ խօսքերը փոխաբերութի՞ւն թէ Համեմատութիւն են: Գտէ՛ք փոխաբերութիւններուն երկրորդ եզրերը:

Ծովը կատաղած կը գարնուէր ասիբուն: Մուկի Լման վախկտառ է: Կեանքը կարեատես ուղեորութիւն մըն է: Շուշանի պէս ձեռքեր ունի: Աղօթքը հոգիին հացն է: Ձեփիւռը ծաղիկներուն ինչե՛ր պատմեց այդ օր: Հովը կու լար ծառին մէջ: «Աստղերն ի՛նչ են որ,

եթէ ոչ՝ անբիծ եւ քշուառ հոգւոց անէժօ ողբագին, որք քռին այրել նակատն երկնփին»: «Բայլ մը նայուածք, փունջ մը ժպիտ, գուրայ մը խօսք դիւքեց իմ սիրտ»: «Ինչո՛ւ պաշած ես լնակ, ու չե՛ն խայտար քու պեակի...»: «Ա՛յ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածաՎառ դու լապտեր»: Առիժի պէս, քաջաբար, յարձակեցաւ քշնամիին վրայ: Կեանքս անցաւ օճառածին գերդ պղպղակ...: Քիչ մնաց որ քռէ՛ր ուրախութենէն: Կարօտը զինք հալեցուց:

Գ.— ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ (ALLÉGORIE - ALLEGORY)

Այլաբանութիւնը փոխաբերութիւն մըն է որ կը տեւէ պատմումի մը ամբողջ տեւողութեան: Առակները, օրինակ, այլաբանութիւններ են. առակներուն մէջ փոխաբերութիւնը կը տեւէ մինչեւ առակին աւարտումը: Օրինակ. «Ճպուռն ու Մըլիւնը» առակին մէջ՝ Ճպուռը կը ներկայացնէ անհոգ ու ծոյլ մարդերը, մըլիւնը՝ աշխատասէր մարդերը, եւ այս՝ պատմումին ամբողջ տեւողութեան:

Այլաբանական է այն գրութիւնը, որուն հերոսները իրենք զիրենք չեն ներկայացներ, այլ գրուած են տարբեր բաներու տեղ: Հեքիաթները յաճախ այլաբանութիւններ են.— Դեւը չար մարդն է, Իշխանը՝ բարի հերոսը, Աղբիւրը, որուն ջուրը դոցած կ'ըլլայ գեւը՝ Երջանկութիւնն է:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

20.— Գտէ՛ք թէ ինչի՛ խորհրդանշան են հետեւեալները:

Կաղնի, շուշան, ձրեմի, մանիշակը, մեղուն, աղուէր, կրիան, օձը, աղանիւն, տատրակը, գառնուկը, արծիւ, բուն, էշը, առիժը, սփինգսը, (գոյներէն՝) ներմակը, դեղինը, սեւը, կապոյտը, կարմիրը, կանաչը, ծիրանին, (գործի՛ներէն՝) քնարը, խաչը, կշիռ եւ սուրը, փշապսակը, փետուրը:

21.— Պատմեցէ՛ք առակներ եւ ցոյց տուէ՛ք այլաբանութեան բուն իմաստը:

Ե.— ՓՈՆԱՆՑՈՒՄ (MÉTONYMIE - METONYMY)

Այս ոճը կը ստացուի, երբ երկու տարբեր բաներէ եկած սպաւորութիւններ իրարու կը կապուին մեր միտքին մէջ, եւ մենք

այդ բաներէն մէկուն յատուկ եղող մակդիր մը կը փոխանցենք միւսին, եւ կամ մէկ բանը կը զնենք միւսին տեղ: Օրինակ. «Ճաշակաւոր զրիչ ունի այս զրողը» խօսքին մէջ՝ փառապատիւ մակդիրը տրուած է «զրիչ»ին, մինչ զրողն է որ ճաշակաւոր է եւ ոչ թէ զրիչը: «Սաղաւարտը ձգեց, կնգուղ առաւ» կը նշանակէ՝ «Զինուորական էր՝ կրօնական եղաւ»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

22.- Յոյց տուէք հետեւեալ խօսքերուն «փոխանցում»ները եւ ապա ջնջեցէ՛ք զանոնք՝ կատարելով անհրաժեշտ փոփոխութիւնները:

Մեծարեցը հետո դպրոց տարի: Ճաշէն ետք, ուրախ փորով բազմած էր թիկնաթռոնին մէջ: Այս բաժակը կը խմեմ ձեր կեանքը: Գրիչը ձգեց, սուր առաւ: Անօթի աչքերով կը նայէր փառապատիւ: Քանի՛ պնակ կրնաս ուտել: Ես Պախ չեմ հասկնար: Նարեկացին կը սիրե՞ս: Հացի մը համար կ'աշխատիմք բոլորս ալ: Ծարաւ շրթները մօտեցուց բաժակին: Վախկոտ քայլերով յառաջացաւ դէպի դուռ: Ծովը չի՛ խօսիր ինձի: Ֆորտ մը (ինքնաշարժի վաճառանիշ) գներ է: «Համկէք»ին ներկայ եղանք: Այդ շիշը ի՛նք խմեր է: Զգայուն վրձին ունի այս նկարիչը: Զուարթ հագուստ մը հագած էր քոյրդ: Անոր լեզուն խայթող է:

Զ.- ԴԵՐԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ (ANTONOMASE)

Պօսքի այս ձեւը կը ստացուի՝ երբ յատուկ անուն մը զործածուի հասարակ անունի տեղ, եւ հասարակ անուն մը՝ յատուկի: Օրինակ. «Աշխարհի վրայ միշտ ալ պիտի գտնուին Ներսէսներ (Ներսէսը Գ. Զոհրայի «Ներսէս»ը պատմուածքին հերոսն է, որբանոց զբուրած պատանի մը, որ որբանոցին բանտին մէջ կը մեռնի՝ դոհ հակիչ-ուսուցիչին անդթութեան եւ անխելքութեան): Հոս «Ներսէս» կը նշանակէ անմեղ զոհ:

Կամ՝ «Պ. Դուրեան Սկիւտարի Սոխակը կոչուած է»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

23.- Որոշեցէ՛ք թէ հետեւեալ ղերանունութիւններուն մէջ յատուկ անունները զործածուած են որպէս հասարակ, թէ հասարակները՝

որպէս յատուկ: Ապա բացատրեցէ՛ք որպէս հասարակ զործածուած յատուկ անուններուն նշանակութիւնը:

Պատմահայր կոչած են Մ. Խորենացին: Բոլոր ժողովուրդներն ալ ունեցած են իրենց Վարդաններն ու Վասակները: Այս բնաստեղծին մուսաները ժլատ են: Գիրքիս համար մեկնեսա մը կը փնտռեմ: Աւարայրի Արծիւր պիտի յիշուի դարե-դար: Պարգապէս Պիղատոս մըն էս դուն: Սուրբ Քաղաք գացած էս բնաւ: Ամէն ժողովուրդ Նարեկացիներ եւ Քուչակներ չ'ունենար: Դժբախտաբար, ամէն Արէլի քով կայէն մը կայ: Հայ ժողովուրդը ունեցած է բազմաթիւ Գողգոթաներ: Փանջունի դարձեր է այս մարդը: Ըրածը, ըստ ինձի՛ Քաջ-Նազարուքիւն էր: Մերուժաններն ու Վասակները իրար շուտ կը գտնեն: Ամենայն Հայոց Բանաստեղծը իրապէս արժանի է այս մակդիրին: Յոբի համբերութիւն պէտք է:

Է.- ԲԱՅԱԳԻԱՐՁՈՒԹԻՒՆ (APOSTROPHE)

Այս ոճը կը ստացուի երբ զրողը կը դադրի իր խօսքը ուղղելէ ընթացողին, եւ կը սկսի խօսիլ այն անձին, առարկային կամ երեւոյթին հետ որ զբաւած է իր միտքը, որպէս թէ իր դիմացը գտնուէր ան, եւ կարենար հասկնալ զինք: Օրինակ. «Աստղեր, կեանք տուէ՛ք ձեր սիրահարին հէք»։ «Ո՛վ վիշտ, ալ խնայէ՛ ինձի»։ «Հայրենի՛ք, ամէն տեղ քեզ հետս պիտի տանիմ...»։ «Արդարութիւն, ի՛նչ անարդարութիւններ կը գործուին քու անունովդ...»:

Ը.- ԴԻՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ (PROSOPOPEE - PROSOPOPEIA)

Դիմանութիւնը խօսքի ձեւ մըն է, որով զործել եւ խօսիլ կու տանք իրական թէ մտացածին էակներու, անշունչ իրերու, մեռեալներու՝ անոնց զգացում եւ մտածում վերագրելով: Օրինակ. «Լուսինը ամօթէն ամպերուն ետին պահուրտեցաւ»։ «Հողը մերժեց ընդունիլ Վասակի դիակը»։ «Տերեւները իրենց ուրախութենէն ծափ զարկին»։ «Ծովերու ոգին ա՛լ չդիմացաւ. փրփրազէզ ալիքներ խուժեցին դէպի ցամաք»։ «Քարերն իսկ լացին»։ «Նրկինք ու երկիր ճակատեցան իրարու դէմ»։ «Օր մը, որոմը ըսաւ ցորենին. — Ինչո՞վ տարբեր ես ինձմէ...: — Զեմ զարմանար որ չտեսնե՛ս մեր տարբերութիւնը, — պատասխանեց ցորենը»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

24.- Բացադարձութիւններ եւ դիմառնութիւններ գտէ՛ք հայկական գրականութենէն: Ձեր կողմէ կազմեցէ՛ք նորեր:

Թ.- ՀԵՔՆԱՆՔ (IRONIE - IRONY)

Այս ոճով դրողը իր ըսել ուզածին հակառակը կ'ըսէ, բայց չ'ակնկալեր որ իր բառերը տառացիօրէն ըմբռնուին: Ան իր ըսելու ձեւովն ու շեշտովը կը հասկնայ արդէն իր բուն համոզումը: Օրինակ. «Ձիւս այնքա՛ն կը սիրէ, որ եթէ կարենայ՝ իր սի՛րտն իսկ կուրծքէն կը հանէ եւ ինծի կու տայ»: (մինչ մենք գիտնեք կամ կը հասկնանք թէ այդ անձը զինք կ'ատէ): կամ՝ «Պատուական հայ մըն է այդ պարոնը»: (մինչ մենք գիտենք թէ անոր պաւակները օտար վարժարան կը յաճախեն): կամ՝ «Խեղճը, բնաւ սուտ չէ խօսած կեանքին մէջ»: «Իրաւունք ունի՛ պարոնը, - վարդանին եւ վասակին միջեւ տարբերութիւն չկա՛յ բնաւ»: «Իրական գիտնականը ա՛ն է, որ ի՛ր որպէս ճիշդ ընդունածը կը գտնէ, եւ ո՛չ թէ գտածը կ'ընդունի որպէս ճիշդ...»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

25.- Յոյց տուէ՛ք հետեւեալ խօսքերուն պարունակած հեղանջը, եւ անոնց նմանողութեամբ նորեր կազմեցէ՛ք:

Գաղութարար պետութիւններուն նպատակը գրաւեալ երկիրներուն ժողովուրդներուն օգնել է, որ անոնց կեանքի մակարդակը բարձրանայ: Այդ հարուստը կողոպտելով՝ գայն ազատեց իր դրամին վրայ անբնական հսկելու հոգին: Այդ գործատէրը կ'ուզէ իր գործաւորները վարժեցնել ժուժկաութեան, ահա թէ ինչո՛ւ բարար չի վճարել անոնց: Ղուկասեանները (մեծահարուստ ընտանիք մը) այս ամառ ալ օգափոխութեան չգացին՝ որպէսզի շոյալութեան օրինակ չըլլան ուրիշներու: Այդ ժողովուրդը քանակեց ուր որ մտաւ՝ տեղացիներուն առիթ տալու համար որ նոր եւ անլի գեղեցիկ բաներ շինեն: Բարեպաշտ անձ մըն է ան.- ամէն տարի կանոնադրաբար կը վճարէ իր եկեղեցական տուրքը: Վստահելի մարդ է ան.- գողութեան վրայ չէ բռնուած բնաւ: Իրաւունք ունի ինկզիմ մեծ գրող կարծելու, - իր հայրը մե՛ծ գրող էր: Խելացի՛ է, - տասը-յարկանի երեք շէնք ունի:

Ժ.- ԿՅՈՒ-ՀԵՔՆԱՆՔ (SARCASME - SARCASM)

Հեղնանքի պարագային, դրողը իր ըսել ուզածին հակառակը կ'ըսէ, մինչ կծու-հեղնանքի պարագային, կ'ըսէ՛ իր ըսել ուզածը, բայց ծիծաղ, անհամամտութիւն կամ արհամարհանք պարունակող ձեւով մը: Օրինակ. «Եթէ վկայական ունենալը զարգացած ըլլալ նշանակէր՝ քանիներո՛ւն ձեռքէն իրենց վկայականները պէտք է ետ առնուէին»: «Եթէ մեր գաղափարներն ու համոզումները ընդօժին (մեզմէ՛ ծնած եւ ո՛չ թէ ուրիշներէ փոխ առնուած) ըլլային՝ որքա՛ն յոգնութիւն եւ հոգ ինայուած պիտի ըլլար շատ մը դրողներու եւ մտաւորականներու»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

26.- Յոյց տուէ՛ք հետեւեալ խօսքերուն պարունակած կծու-հեղնանքը, եւ անոնց նմանողութեամբ նորեր կազմեցէ՛ք:

Հինգ ժամ տեւող փոքորկալից ժողովէ մը վերջ՝ վարչութիւնը որոշեց դռնապանին ամսական վրայ երկու քիթոսկիի յաւելում մը ընել: Մուկերը կը պարեն՝ երբ կատուն բացակայ է: Ընկղմող նաւէն առաջին փախչողները մուկերն ու առնետները կ'ըլլան: Եթէ դրամ ունենալը իտեացի ըլլալ նշանակէր՝ քանի՛ հարուստներ մեծ հարստութիւններ պիտի է տրուէին, եւ քանի՛ հարուստներ պիտի է առնուէին իրենց դրամները: Միւսը մարդս քանակայ չընել, եւ ոչ ալ գինուորական զգեստը՝ քայ: Էշը էշ է՝ վրան ոսկեգօծ համէտ ալ դնես: Ըսուած խօսքի մը արժէքը ուղիղ կը համեմատուի՝ ունկնդրողին հասկնալու կարողութեան հետ: Լաւ կ'ընես՝ եթէ մէջ մը դուռ-բեզ դիտես հայելիին մէջ՝ ուրիշներուն տեսքը քննադատել տալ:

ԺԱ.- ԱՍՏԻՃԱՆՈՒՄ (GRADATION - CLIMAX)

Աստիճանումը խօսքի ձեւ մըն է, որով կը ներկայացուի շարք մը զգացումներու, մտածումներու, պատկերներու, որոնք յաջորդաբար կը զարգանան, կը զօրանան: Օրինակ. «Եկայ, տեսայ, յաղթեցի»: «Գիրքեր կան՝ որոնց պէտք է հպիս, ուրիշներ՝ որոնք պէտք է ձեռք առնես, ուրիշներ՝ որոնք պէտք է անութիդ տակ դնես, եւ սակաւաթիւ ուրիշներ՝ որոնք պէտք է կուրծքիդ սեղմես»: «Ուզեցի օգնել իրեն, իր բարեկամը ըլլալ, իր եղբայրը դառնալ, զոհուիլ իրեն համար»:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

27.- Գիծերուն տեղ դրէ՛ք յարմար շեղադիր բառերը՝ կաղ-
մելով աստիճանումներ :

Եթէ արժանիքի աւելի բարձրացած ես՝ այդ բարձունքէն —
— (կ'իյնաս, չես իջներ) : Զի բաւեր —, պէտք է նաեւ — (նախա-
տեսել, տեսնել) : Ամայացած էին —, — ու — (քաղաք, աւան,
գիւղ) : — տեղէն, —, — գայն եւ — ներս (ցատկեց, բռնեց, բե-
րաւ, վաղեց) : Մարդիկ —, —, — (կը տառապին, կը ծնին, կը
մեռնին) : Նախ խորհեցայ թէ —, ատեն մը ետք կարծեցի թէ ան-
ընդհատ —, բայց հետզհետէ — իրականութեան հետ, եւ օր մը,
արդէն — վիշտս (պիտի մեռնիմ, հաշտուեցայ, պիտի լամ, մոռցած
էի) : Մոլութիւնները կ'անին աստիճանաբար. նախ —, յետոյ —,
ապա — (կը բռնադատեն, կը խնդրեն, կը պահանջեն) : Շունը —,
—, — (խածաւ, հաջեց, նետուեցաւ) : Եղբայրս —, —, —, —
(պաղ առաւ, քրտնեցաւ, մեռաւ, հիւանդացաւ) :

ԺԲ.— ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ (ANTITHÈSE - ANTITHESIS)

Պատահար մը, իրողութիւն մը, պատկեր մը՝ աւելի ցայտուն
դարձնելու համար երբ զայն զետեղենք իր հակապատկերը ներկա-
յացնող շրջապատի մը մէջ՝ կը ստանանք Հակադրութիւն : Օրինակ.
«Եթէ աշխատած ըլլայիր՝ պիտի ստանայիր փայլուն նիշեր եւ պի-
տի ըլլայիր ուրախ՝ մինչ ներկայիս ընկնուած ես, պիտի ըլլայիր
խանդավառ՝ մինչ ներկայիս յուսալքուած ես» : Կամ՝ «Հայր մը,
որ իր զաւակը կը ծեծէ հայհոյած ըլլալուն համար, եւ ինքն ալ կը
հայհոյէ զայն ծեծելու ատեն, աւելի վնասակար եղած կ'ըլլայ իր
անձնական օրինակովը, քան օգտակար՝ իր պատիժովը» :

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

28.- Որոշեցէ՛ք հետեւեալ հակադրութիւններուն հակադիր
զաղափարները՝ ցոյց տալէ ետք հակադիր բառերը :

«Ժամանակն է որ երթանք, ես՝ մեռնելու, դուք՝ ապրելու»
(Սուկրատ) : Պէյքըն ըսած է. «Ան որ քիչ ծանօթ է փիլիսոփայու-
թեան՝ կը հեռանայ Աստուծմէ. ան որ շատ ծանօթ է՝ կը մտենայ

Աստուծոյ» : Պուայօ ըսած է՝ խօսքը ուղղելով գրողներուն. «Զեր
գործերուն վրայ յաւելումներ ըրէք երբեմն միայն, բայց զանոնք
կրնատեցէ՛ք յանախ» : Ամէն նշմարտութիւն կարելի չէ ըսել, բայց
կարելի է լսել : Քաղաքավարութիւնը մարդս կը ներկայացնէ՝ ար-
տաճուստ այնպէս ինչպէս կը պարտէր ըլլալ ներքնապէս : Իշխանա-
ւորները կը սկսին տկարանալ երբ ուզեն աւելի գօրեղ ըլլալ քան օ-
րէնքը : Ան որ չի գիտեր հնազանդիլ՝ չի կրնար հրամայել : Երջան-
կութիւնը ունենալն է ինչ որ անհրաժեշտ է եւ ո՛չ թէ ինչ որ ան-
լարդ է : Մարդս նուազ ծաղրելի է այն քերութեան համար որ ունի,
քան այն բարեմասնութեան, որ կը կարծէ թէ ունի : Մոռցի՛ր բա-
րիքը, որ ըրիք . յիշէ բարիքը, որ ըրինք քեզի : Ճշմարիտ բարեկամնե-
րը անո՛նք են, որոնք հրաւերով կու գան տունդ՝ երբ յաջողութեան
մէջ ես, անհրաւեր կը ներկայանան՝ երբ ձայնորդութեան մէջ ես :

ԺԳ.— ՅԵՏԱՀՐՁՈՒՄ (RÉGRESSION)

Յետաշրջում կը ստացուի՝ երբ շրջենք բառերու շարքը՝ տար-
բեր իմաստ մը արտայայտելու համար : Օրինակ. «Պէտք է ուտել
ապրելու համար, եւ ոչ թէ ապրիլ՝ ուտելու» :

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

29.- Բացատրեցէ՛ք հետեւեալ յետաշրջումները ցոյց տալէ
ետք շարք փոխող բառերը :

Աշխարհի հիւլէ մըն է, հիւլէն՝ աշխարհ մը : Եթէ շատ վախ-
նաս մեռնելէ, կրնաս օր մըն ալ մեռնիլ վախէ : Ազաւեր չէ որ կը տի-
րէ իր ոսկիին, այլ ոսկին է, որ կը տիրէ ազահին : Կը նախընտրեմ
առանց դրամի մարդը, քան առանց մարդու դրամը : Ժողովուրդնե-
րը չեն ստեղծուած քազաւորներուն համար, այլ քազաւորները՝
ժողովուրդներուն : Յարգէ՛ ուրիշները, որ ուրիշներն ալ յարգեն
քեզ : Եթէ դուն խանութիդ հոգ տանիս, խանութդ ալ քեզի հոգ կը
տանի : Աշխարհիս վրայէն չարիքը պիտի ջնջուի ա՛յն ատեն միայն,
երբ փիլիսոփաները ըլլան քազաւոր, կամ քազաւորները՝ փիլի-
սոփայ : Ապուշը կ'ըսէ ինչ որ կը մտածէ, անկեղծը՝ կը մտածէ՝ ինչ
որ կ'ըսէ : Առանց գօրութեան արդարութիւն չկայ, առանց արդա-
րութեան՝ գօրութիւն :

ԺԳ. — ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ (ALLUSION - INNUENDO)

Այս ոճը գործածած կ'ըլլայ գրող մը, երբ իր միտքը ուղղա-
կիօրէն չարտայայտէ, այլ մէջբերէ այնպիսի խօսք մը, յիշատակէ
այնպիսի իրողութիւն մը կամ անձ մը, որոնք նմանութիւն եւ կապ
ունին խնդրոյ առարկայ նիւթին հետ եւ կարելի կը դարձնեն որ
ընթերցողը հետեւութիւններ հանէ: Օրինակ. «Հօրեղբայրս կըրցաւ
մեռնիլ առանց բժիշկի երթալու». (ըսել կ'ուզուի — բժիշկները բու-
ժելու տեղ կը մեռցնեն հիւանդները): Կամ՝ «Շատ դիւրին է՝ ինձմէ
ետք քոյ ջրհեղեղ ըլլայ՝ ըսելը». (Այս մէջբերուած խօսքը կը վե-
րագրեն Ֆրանսայի Լուզովիկոս ԺԵ. Թագաւորին, որ կ'ուզէր ար-
տայայտել իր անտարբերութիւնը հանդէպ այն աղէտներուն, որոնք
կընային սպառնալ երկրին՝ իր մահէն ետք՝ որպէս հետեւանք իր
յոռի կառավարումին):

ՎԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ

30. — Սորվեցէ՛ք իմաստը հետեւեալներուն եւ գործածեցէ՛ք
զանոնք ակնարկութիւն պարունակող մէկական խօսքի մէջ: Գտէ՛ք
ուրիշներ:

Պանտոքայի տուփը (=աղետալի դէպքերու պատճառ), Ի-
կարեան քեւեր (=երիտասարդական յաւակնոտ յանդգնութիւն),
Գացի, տեսայ, յաղթեցի (=արագ եւ յաջող կարգադրութիւն), Եւ
սակայն կը դառնայ (=կալիլէ գիտնականին վերագրուած խօսք. կը
գործածուի հաստատելու համար նշմարութիւն մը որ ստիպուած
ենք հրապարակով չյայտնել): Կը սիրեմ Պղատունը, բայց նշմար-
ութիւնը կը սիրեմ Պղատունէն աւելի (կը գործածուի՝ երբ չենք
ուզեր բացէն դէմ արտայայտուիլ յարգելի անձի մը որ կ'ըն-
դունի մեր մէկ չընդունած նշմարութիւնը): Ձեր մարգարիտները
խոզերուն առջեւ մի՛ նետէք (=պէտք չէ տգէտի մը խօսիլ այնպիսի
բաներ, որոնք չի կրնար հասկնալ):

31. — Բացատրեցէ՛ք իմաստը հետեւեալ ակնարկութիւննե-
րուն՝ ցոյց տալով անուղղակիօրէն արտայայտուած միտքերը:

Ան երկու թշնամի միայն ունի. իր լեզուն եւ «եզակի առաջին
դէմքը»: «Ղձ՛կաս, — կ'ըսէ վարպետը աշկերտին, — փոքր եղբայրդ
եկաւ եւ անցաւ քեզ». «Այո, վա՛րպետ, — կը պատասխանէ Ղձ-

կաս, — ան տակաւին միայն շարաք մըն է որ կ'աշխատի ձեռքիդ
տակ»: Թերթին տուած իր բաց նամակը այնքան ճիշդ եւ խորունկ
գաղափարներ կը պարունակէր, որ ես չգարմացայ երբ իմացայ քէ
հանրութեան վրայ բնաւ ազդեցութիւն չէ գործած: «Ժառանգութե-
նէս բա՛ն չեմ ձգեր կնոջս, — գրած է մէկը իր կտակին մէջ, — տրուած
ըլլալով որ հետս ապրած է քսան-հինգ տարի ամբողջ»: Քսան տարի
բանտի կը դատապարտուի քաղաքացի մը՝ նախարար մը ապուշ կո-
չած ըլլալուն համար, — առաջին հինգ տարին՝ մեծաւոր մը անար-
գած ըլլալուն համար, վերջին տասնը-հինգ տարին՝ պետական
գաղտնիք մը դուրս տուած ըլլալուն համար: Հոգեբուժութեան բա-
րիքներէն պէտք է օգտուէր ան:

ԺԵ. — ՄԵՂՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ (EUPHÉMISME - EUPHEMISM)

Այս ոճով՝ անհաճոյ արտայայտութենէ մը կը զգուշանանք
եւ նուազ անհաճոյ արտայայտութիւն մը կը գործածենք անոր տեղ՝
միշտ մեր ըսելիքը ըսելով հանդերձ: Օրինակ. «Իր երեւակայու-
թեան շատ զօրաւոր ըլլալուն պատճառով՝ իր ըսածներուն ճշմար-
տութեան միշտ չէ որ կ'անդրադառնայ», (փոխանակ ըսելու՝ ստա-
խօս է): «Ըսելիքներ շատ ունի» (փոխանակ ըսելու՝ շատախօս է):
«Ջղային անհանդստութեանց բուժարանը մնաց ան երկու տարի»
(փոխանակ ըսելու՝ յիմարանոց մնաց):

ՎԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ

31. — Կարդացէ՛ք հետեւեալ մեղմարանութիւնները, եւ ու-
նոնց նմանողութեամբ նորեր կազմեցէ՛ք:

Չափագանց բարի է ան (միամիտ է): Շատ զգուշաւոր է (վախ-
կոտ է): Իր հետաքրքրութիւնները առաւելաբար դէպի առետուրն
են (արուեստներով չէ հետաքրքրուած բնաւ): Տախարիւն է ան
(չզային է): Գեղեցիկ չէ (տգեղ է): Պէտք է կեդրոնանալ իր ըսած-
ները լաւ հասկնալու համար (ըսածները անհասկնալի են): Երանի՛
թէ գիտնար թէ ինչ պէտք չէ՛ ըսել, ինք՝ որ գիտէ թէ ինչ պէ՛տք է
ըսել (անտեղի բաներ կ'ըսէ): Եթէ հինգ սանթիմ մըն ալ բարձր ըլ-
լար հասակը՝ անթրի արտաքինով անձ մը պիտի ըլլար ան (հա-
սակը կարճ է): Այնքա՛ն յորդարուիս են այդ բանաստեղծին յուզում-
ները, որ իրապէս դժուար է իրեն համար չտարուիլ անոնց սաստ-

կուրծնէն (իր յուզումները չափազանցուած են) : Ան շատ բարձր կը գնահատէ ժուժկայութիւնը (կծծի է) : Աւելի՛ ի՛նք կը փնտռէ իր ընկերները, քան իր ընկերները՝ զինք (չէ սիրուած) :

ԺԶ.- ՎԵՐՏԱՌՈՒՄ (ÉPIGRAMME - EPIGRAM)

Խօսքի ձեւ մըն է, ուր կայ հակասութիւն մը, որ ժամանակաւոր ցնցում մը պատճառելով մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ թաքուն արտայայտուող գաղափարի մը վրայ : Օրինակ . «Մեր պատմութեան ամէնէն իմաստուն խենդն է ան» . (թէ՛ իմաստուն, թէ՛ խենդ) : «Փաստարանը այն անձն է, որ յաճախ առանց փաստի կ'ապացուցանէ իր ըսածներուն ճշդութիւնը» . (կը փաստէ առանց փաստի) :

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

32.- Բացատրեցէ՛ք հետեւեալները՝ ցոյց տալով վերտառումները : Կազմեցէ՛ք նոր վերտառումներ :

Կենդանի մեռել մըն է ան : Կիներուն տկարութիւնը իրենց գօրութիւնն է : Արուեստը կը կայանայ արուեստը քաճցնելուն մէջ : Ամենամեծ խորամանկութիւնը պարկեշտութիւնն է : «Այսպիսի մէ՛կ յաղթանակ եւս, եւ արդէն կորսուած ենք», յայտարարած է հրամանատար մը՝ յաղթական ճակատամարտէ մը ետք : Վիճակագրութիւնները թիւերով սուտ խօսելու կերպեր են : Ան (Պ. Դուրեան) ամէնէն փոքրն է հանգարներուն մէջ, բայց ոչ ամէնէն փոքրը՝ իր հանգարով : Կակուղ փուշ է ան : Հսկայ ոչնչութիւն մըն է ան : Նախընտրելի է պոտիկ մեծութիւն մը ըլլալ, քան՝ մեծ պոտիկութիւն մը : Անխելութիւնն ալ մէկ մասն է խելացութեան : Չարին մէջ միշտ կայ բարին : Երբ հեռանաս չափէ մը անդին՝ կը սկսիս մօտենալ :

ԺԷ.- ԲՆԱԶՍՅՆՈՅԹ (ONOMATOPEE - ONOMATOPEIA)

Այս ոճը կը ստացուի՝ երբ առաւելաբար բնաձայն բառերու գործածումով հեղինակը կը փափաքի թելադրել իր նիւթը՝ ձայններու միջոցով ալ : Օրինակ . «Ի՛նչ կը Ֆլլլաս ու կը սուլլես օձի պէս . . .» :

Կանչում ես անվերջ	Թփերն ես շարժում
Կապոյտ հեռից,	Շրջում անուշ
Շշուկով անուշ	Շշուկով պայծառ
Կանչում ես ինձ :	Ու փաղափուշ . . . (Վ. Տ.)

Դոփում են, դոփում են, դոփում են ձիերը,
Մթի մէջ դոփում են, խփում են պայտերը . . . (Չարենց)

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

33.- Որոշեցէ՛ք հետեւեալ խօսքերուն բնաձայնոյթները, եւ գտէ՛ք թէ անոնք ինչ կ'աւելցնեն խօսքերուն իմաստին վրայ, եւ ի՛նչ միջոցով : Ապա ճշդեցէ՛ք հեղինակները եւ անոնց գործերէն գտէ՛ք այլ բնաձայնոյթներ :

«Իմ սրտի մէջ միչ են մշում, իմ սրտի մէջ հեկեկում» : «Ձուրը ցայտփէն ծաղիկ-ծաղիկ կը կաթէ, Վճիտ՝ ինչպէս լոյսէ արցունքը մանկան, Նուագն անոր կը հեծեծէ հեշտական» : «Խոնջ իրիկունն արագօրէն կը խոնարհի դէպի խաւար, Բուրմունքներու հաշիշն հոգուոյս մէջ կը ցանէ հեշտանք մը թոյլ» : «Ձէնքերու շաշիւնն իր շուրջն է ծնծոյ . . .» : «Յատակէ երկրին խուլ դղրդին, քնդան, դողան սանդարամետք» : «Եկեղեցին Հայկական հայ հոգիին եւ մարմնոյն Ջրահանդերձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն, եւ զանգակներն են բումբին եւ երգն է մի՛շտ յաղթութիւն . . .» : «Ծառերը ծե՛ր, հիւա՛նդ, Ծառերը ծուռ ու չոր, Մուրացկանի մման ծառերը խեղն ու մերկ . Քամին ծեծում է ծեր գլուխները նրանց Ու մշում է մահուան շարագուշակ միջով . . .» : «Գիշեր մը երբեք այսպէս լուռ ու լուրջ Ձէ դիգուած, հսկա՛ծ բանակի մը շուրջ» :

ԺԸ.- ՆՄԱՆԱԶՍՅՆՈՒԹԻՒՆ (ALLITÉRATION)

Այս ոճը կը ստացուի երբ հեղինակը կը ձգտի նոյն գիրերուն կամ վանկերուն կրկնումով յառաջ բերել երաժշտականութիւն : Այս երաժշտականութիւնը պարզապէս միջոց մըն է տպաւորութիւն գործելու յիշողութեան վրայ կամ հաճելի թուելու ակտիւն : Օրինակ .

Աշուն է, անձրեւ... Ստուերներն անձեւ
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
Անձրեւ ու անձրեւ... (Վ. Տ.)

Նաւակներ մեկնեցան ամէնքն ալ, բաղձանքով աղաղձուն.
Հեռացան ամէնքն ալ՝ ծփանուտ երազիս ափունքէն.
Անձուկին բոցը զիս պաշարե՛ց, Ըսպասման հիւա՛նդն եմ...
(Մ. Մ.)

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

34.- Որոշեցէ՛ք նմանաձայնութիւն յառաջ բերող ձայներն ու վանկերը. ապա հեղինակները՝ հետեւեալ նմանաձայնութիւններուն: Գտէ՛ք ուրիշներ հայկական գրականութենէն:

«Լոյսն էր մեռնում, օրը մթնում, Մուքը տնից-տուն էր մտնում»: «Արի՛, եղբայր, փառաբանե՛նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն, Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն»: «Իմ վերել թռչ արեւ շիւնդայ. Լոկ երկունք, լոկ արցունք թռչ լինի...»: «Քանի կ'ուզէ քամին տանէ՝ ծովերէն աւազ չի պակսի. Թեկուզ ըլլիմ, թեկուզ չըլլիմ՝ մեշիսներուն սազ չի պակսի. Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարհիս մէ մազ չի պակսի...»: «Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփեցից: Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային»: «Մարգարտաշար իմ յուշերին, իմ գիշերին, իմ փշերին...»:

Գ. ՄԱՍ

ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ա.- ՍԱՀՄԱՆՈՒՄ

Գրողները՝ արուեստի, կեանքի, փիլիսոփայական եւ ընկերային հարցերու մասին ցոյց տուած իրենց ըմբռնումներուն համաձայն կը բաժնուին խումբերու. այս խումբերը կը կոչուին Գրական Դպրոցներ:

Դարերու ընթացքին յառաջ եկած են յաղմաթիւ գրական դպրոցներ: Այսպէս. Դասական (Քլասիք), Վիպայայտ (Ռոմանթիք), Իրապաշտ (Ռէալիսթ), Բնապաշտ (Նաթիւրալիսթ), Բառնասեան (Բառնասիէն), Խորհրդանշապաշտ (Սեմպոլիսթ), Տպաւորապաշտ (Էմբրեսիոնիսթ), Գերիքապաշտ (Սիւրռէալիսթ) դպրոցները, եւայլն:

Բ.- ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ «ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1.- Գրական դպրոցները կը կազմուին ժամանակի ընթացքին՝ որպէս հետեւանք ընկերային, փիլիսոփայական, արուեստադիտական յեղաշրջումներու, եւ շրջանի մը՝ մեծ գրողներու ստեղծագործութիւններուն մէջ կը գտնեն իրենց ղեղարուեստական արտայայտութիւնը:

2.- Փոքր ժողովուրդներու մօտ գրական շարժում մը կրնայ փոխ առնուիլ մեծ գրականութիւն ունեցող աղքեցիկ ժողովուրդէ մը:

3.- Գրական նոյն դպրոցները նոյն շրջաններուն չէ, որ դոյութիւն կ'ունենան ամէն ժողովուրդի մօտ: Գրական շարժումներ կան՝ որոնք ծանօթ են մէկէ աւելի ժողովուրդներու, տարբեր ժամանակներու մէջ:

4.- Գրական շարժումներ անպայման նոյն յաջորդականութեամբ չեն հետեւիր իրարու, եւ ժողովուրդ մը անպայման չ'ունենար բոլոր շարժումներն ալ:

5.- Գրական դպրոց մը՝ յստակ, հաստատուն, կազմակերպուած շարժում մը չէ, եւ նոյն դպրոցին մէջ գետեղուող բոլոր գրողներն ալ անպայման համաձայն չեն իրարու հետ՝ իրենց դպրոցին յատուկ ելող բոլոր ըմբռնումներուն շուրջ: Նոյն դպրոցին մէջ դրուող գրողներ կրնան իրարմէ տարբեր ըլլալ շատ մը կէտերու մէջ: Ինչ որ մեզ կ'առաջնորդէ զիրենք դնելու նոյն խումբէն ներս՝ իրենց գործերուն մէջ երեւան եկող ընդհանուր տրամադրութեան նոյնութիւնն է:

6.- Գրական դպրոցները յաճախ կը հակադրուին իրարու եւ մերթ կ'ամբողջացնեն կամ կը շարունակեն իրար:

7.- Պէտք չէ խորհիլ թէ կան գրական դպրոցներ, որոնք յաւիտենական են, եւ նոյնպէս՝ պէտք չէ կարծել թէ գրական դպրոց մը կրնայ ամբողջովին եւ վերջնականօրէն կորսուիլ: Կը պատահի որ գրական շարժումներ վերստին կեանքի կոչուին, ինչպէս եղած է պարագան դասականութեան, կամ շարունակեն ապրիլ ալլապան ձեւերու տակ՝ ինչպէս է պարագան վիպապաշտութեան: Պէտք չէ սակայն մոռնալ թէ վերստին կեանքի կոչուող Դասականութիւնը՝ Նոր Դասականութիւնը, յար եւ նման չէ հին Դասականութեան. իր մէջ կը ցոլացնէ զինք կերտող նոր մարդերն ու անոնց ժամանակը:

8.- Գրող մը, սովորաբար, ընտրելով չէ՛, որ կը մասնակցի գրական շարժումի մը. ինք կը գրէ իր խառնուածքին, համոզումներուն, ճաշակին համաձայն, եւ իր արտադրած գործերէն դատելով է, որ զինք կը գետեղենք այս կամ այն դպրոցին մէջ:

9.- Կրնայ պատահիլ որ խումբ մը գրողներ որոշեն հիմնել նոր դպրոց մը: Երիտասարդներ կ'ըլլան ասոնք յաճախ, որոնք ընդհանրապէս կը գատուին յետոյ՝ իւրաքանչիւրը ի'ր կերպով շարունակելու համար իր նախկին ճամբան կամ սկսելու համար նոր ճամբայ մը:

10.- Գրող մը կրնայ մէկէ աւելի դպրոցներու յատկանիշներէն մէկտեղել իր երկերուն մէջ ու չպատկանիլ որոշ դպրոցի մը, կամ՝ իր տարբեր ստեղծագործութիւններուն մէջ պատկանիլ տարբեր դպրոցներու:

11.- Այս կամ այն դպրոցին պատկանիլը ինքնին արժանիք մը չէ՛: Գրող մը արժէքաւոր է որովհետեւ տաղանդաւոր է, եւ ո՛չ թէ որովհետեւ կը պատկանի այս կամ այն դպրոցին:

Գ.- ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

1.- ԴԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դասական կը կոչուին հին Յունական եւ Հռոմէական գրականութիւնները:

Ժէ. դարուն, մասնաւորաբար Ֆրանսայի մէջ, ալդեցիկ դարձաւ գրական նոր շարժում մը՝ Նոր Դասականութիւնը, որ իր ներշնչումն ու ուղղութիւնը կը ստանար հին Յունական եւ Հռոմէական գրականութեանց գլուխ-գործոցներէն: Նոր Դասականութեան տեսաբանները կը խորհէին թէ եթէ նոր գրողները իրենց գործերը արտադրէին հին Յունական եւ Հռոմէական գլուխ-գործոցներուն մէջ կիրարկուած կանոններուն, օրէնքներուն եւ ձեւերուն համաձայն՝ իրենց գործերն ալ կրնային ըլլալ մեծ: Արդարեւ, այդ տեսաբանները գրականութեան համար սահմանեցին կանոններ, օրէնքներ ու ձեւեր՝ զանոնք քաղելով հին Յունական եւ Հռոմէական գրականութեանց գլուխ-գործոցներէն: Անոնք կը խորհէին թէ այս կանոնները յաւերժական են, այսինքն՝ կարելի է այս կանոններուն հետեւելով մեծ գործեր արտադրել միշտ եւ ամէն տեղ:

Այսպէս. Թատերական կտորներու համար, օրինակ, սահմանած էին Տեղի, Ժամանակի եւ Գործողութեան Միասնութեան կանոնները. (Տեղի.- Թատերգութեան պատմութիւնը կազմող բոլոր դէպքերը տեղի պէտք է ունենային նոյն վայրին մէջ, այսինքն՝ նոյն քաղաքին, նոյն թաղին, եւ՝ եթէ կարելի է՝ նոյն սենեակին մէջ: Ժամանակի.- Բեմին վրայ ներկայացուող պատմութիւնը կազմող դէպքերը պէտք է ընդգրկէին քսան-չորս ժամի շրջան մը միայն. այլ խօսքով՝ Թատերգութեան հանդիպող պէտք է լուծուէր, առ առաւելն մէկ ցերեկ եւ մէկ գիշերուան ընթացքին: Գործողութեան Միասնութեան.- Թատերգութեան հիմքը պէտք է կազմուած ըլլար մէկ միասնական գործողութենէ. այսինքն՝ պատմութիւնը մէկ կեդրոնական շղթայ պէտք է ունենար մինչեւ Թատերգութեան վերջը. քովստի, երկրորդական, փոքր պատմութիւններ պէտք չէ հանդիսատեսին ուղարկութիւնը չեղեցնէին պատմութեան մայր գիծէն):

Կանոններ սահմանուած էին նաեւ գրականութեան միւս սեռերուն համար. իւրայատուկ սկզբունքներ ունէր Բանաստեղծութիւնը. — լեզուն պէտք է ըլլար ճշգրիտ բայց եւ հարուստ, բառերը՝ ընտիր, ոճը՝ բարձրասլաց, նիւթը՝ ոչ-հասարակ, եւայլն:

ԴԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԻՈՐ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ա.— Դասականութիւնը կ'արտայայտէ վեհ, ազնուական դա-
շափարներ. կը հետապնդէ բարոյական նպատակներ: Առաւելաբար
կը ներկայացնէ մարդոց բարձրագոյն, ազնուագոյն արարքները:
(Այս պատճառով է, որ դասական կտորներու մէջ, հերոսները կ'ըլ-
լային բարձր դիրքի տէր անձեր.— թագաւորներ, իշխաններ, զօրա-
կաններ, իշխանուհիներ: Դասական գրողները կը խորհէին թէ բարձր
գլխի տէր անձերու մօտ կարելի էր գտնել բարոյական բարձր յատ-
կանիչներ):

Բ.— Կը ջանայ բանականութեան (միտքին) տիրապետութեան
տակ պահել զգացումն ու երեւակայութիւնը: Դասականներուն հա-
մար կարեւորը միտքն է, ո'չ թէ զգացումը: Զգացումը անվստահե-
լի է, — կրնայ մարդս չափազանցութեան եւ ուրեմն՝ սխալի առաջ-
նորդել: Պէտք է կապանքի տակ առնել զգացումը, զսպել դայն,
ուղղութիւն տալ անոր՝ միտքին (տրամաբանութեան) միջոցով:

Գ.— Արուեստի գործի մը ձեւը չափազանց կարեւոր է, որով-
հետեւ երբ արուեստագէտը մեծ կարեւորութիւն տայ ձեւին (այ-
սինքն՝ գործածէ նաեւ իր միտքը եւ գրէ կանոններու եւ օրէնքներու
համաձայն), այս բանը պատճառ կ'ըլլայ որ զսպուին ու որոշ կա-
ղապարի մը մէջ գորուին իր զգացումներն ու երեւակայութիւնը:
Ահա թէ ինչո՞ւ Դասականութիւնը մասնաւոր շեշտ կը դնէ գրու-
թեան մը նիւթին կառուցման եւ զարգացումին վրայ: Քովնտի ման-
րամասնութիւններն ու զարդերը կարեւոր չեն. կարեւորը ներկա-
յացուող պատմութեան կեդրոնական գործողութիւնն է, այդ գոր-
ծողութեան զարգացումն է: Եւ հաւանաբար ա՛յս է պատճառը, որ
դասական հեղինակը իր հերոսներուն ընել կամ ըսել կու տայ մերթ
այս կամ այն բանը՝ ո'չ թէ որովհետեւ այդ բա՛նը կը բխի անոնց
խառնուածքէն եւ կացութենէն, այլ որովհետեւ իր գրութեան «ձեւը»
կամ իր տրամաբանութիւնը այդ կը թելադրեն իրեն:

Դ.— Դասական գրողին համար լեզուն միջոց մըն է, որով յա-
ռաջ կը տարուի պատմութեան գործողութիւնը. նպատակը՝ պատ-
մութեան կառույցն է: Յանցանք է ընդհատել պատմութեան շղթան
եւ տարուիլ ոճային եւ լեզուական գեղեցկութիւններէ: Լեզուն կը
պարտի ըլլալ ճշգրիտ, լուրջ, պաշտօնական, վեհագնաց, մանա-
ւանդ որ մարդոց վեհագոյն եւ բարձրագոյն մտածումներն ու ա-
րարքներն են որ կը ներկայացուին: Ժողովրդային ասոյթներու,

դարձուածքներու, բառերու գործածումը արտօնուած չէ: Դրողը
պէտք է խասօրէն հնազանդի ընդունուած լեզուական կանոններուն:

Ե.— Դասականներուն համար մարդ արարածին մէջ ուշադրու-
թեան պէտք է արժանանայ ինչ որ համամարդկային (ինչ որ տի-
եղերական) է, եւ ո'չ թէ ինչ որ անհատական է: Անոնք կը զբաղին
«տիպար»ներով եւ ո'չ թէ «անհատ»ներով: Անոնք մարդուն մէջ կը
փնտռեն ինչ որ կը խորհին թէ տիեզերական է, այսինքն՝ յատուկ է
(կամ՝ պէտք է որ յատուկ եղած ըլլայ) բոլոր մարդոց, որովհետեւ
անհատականը մնայուն չէ, անձէ-անձ կրնայ փոխուիլ, մինչ տի-
եղերականը անփոփոխ է, ունի իր կանոնները, որոնք յաւիտենական
են եւ ճիշդ՝ ամէն տեղ եւ միշտ:

Զ.— Դասական գրողին համար Բնութիւնը (լեռ, ձոր, ծով,
երկինք, բուսականութիւն, կենդանիներ, եւայլն) ուրիշ բան չէ՝
եթէ ոչ կարգ ու կանոն: Բնութիւնը տիեզերական կանոններու ար-
տայայտութիւնն է դասականին համար:

Է.— Դիցարանական (հին Յունական եւ Հռոմէական) եւ
պատմական անուններու եւ փոխաբերութիւններու գործածութիւ-
նը ընթացիկ սովորութիւն մը եղած է դասական գրողներուն հա-
մար:

Ը.— Դասական գրողին համար Իրականութիւնը կը կայանայ
գտնելուն եւ ներկայացնելուն մէջ այն բնական եւ յաւերժական օ-
րէնքները, որոնք յատուկ են կեանքին, ինչպէս նաեւ մարդկային
հոգիին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Հայերը չեն ունեցած Հին Դասական եւ ո'չ այլ նոր Դասական
գրականութիւն՝ բառին իրական առումով. այսպէ՛ս ուզած է իրենց
պատմութիւնը:

Դասականութիւնը սովորաբար զարգացած է այն երկիրներուն
մէջ, ուր գոյութիւն ունեցած է որոշ չափով կայուն ու կազմակեր-
պուած կեանք եւ զօրաւոր կեդրոնական իշխանութիւն: Ֆրանսայի
մէջ, օրինակ, նոր Դասականութեան բարձրագոյն շրջանը կը գու-
գադիլի միապետութեա՛ն զօրաւորագոյն շրջանին:

Հայոց հին պատմութեան մէջ Տիգրան Մեծի շրջանը, որ
միապետական իշխանութեան գագաթնակէտն է, «չէ արտադրած»
հայկական դասական գրականութիւն, որովհետեւ հայերը այդ ժա-
մանակ դեռ «չունէին» իրենց սեփական դիրն ու գրականութիւնը,

եւ որովհետեւ՝ Հայաստանը յաճախ պատերազմներու մէջ էր եւ հետեւաբար չէր կրնար ունենալ այնքան մը կայուն եւ կազմակերպեալ կեանք, որ այդ կեանքը իր կանոնները պարտադրէր նաեւ արւեաստներուն: Եւ արդէն շատ մը տեղեկութիւններ կը պակսին մեղի այդ դարերուն մասին: Ամէն պարագայի, Տիգրանի եւ Արտաւազդի արքունիքներէն ներս կը ներկայացուէին Յունական դասական կտորներ, եւ Արտաւազդի ինքնագիր թատրերգութիւնները յօրինւած էին Յունական դասական արտադրութիւններու նմանողութեամբ:

Յետագային, ԺԵ. դարէն ետք, երբ զօրաւոր միապետութիւններ երեւան դալ սկսան Եւրոպայի մէջ՝ Ֆրանսան, Անգլիան եւ այլ երկիրներ ունեցան իրենց Նոր Դասական գրականութիւնները: Հայկական պետականութիւնը, որ արդէն բնաւ ալ չէր հասած կայունացման բարձր աստիճանի, տապալած էր ԺԴ. դարուն: Հետեւաբար ակնկալելի չէր որ հայերը ունենային դասական գրականութիւն՝ առանց կազմակերպեալ ու կայուն կեանքի, առանց կեդրոնական զօրաւոր իշխանութեան. ուրեմն, չունեցան նաեւ Նոր Դասականութիւն: Մխիթարեաններն են միայն որ փորձած են գրականութիւն մշակել Եւրոպական դասականութեան հետեւողութեամբ. (Հայր Ա. Բագրատունի եւ ուրիշներ): Նորագոյն շրջանին՝ Մ. Պէշիկթաշլեանի, Պ. Դուրեանի, Թ. Թերզեանի, Դ. Վարուժանի եւ այլ գրողներու արտադրութիւններէն ոմանց վրայ նշմարելի են Մխիթարեաններու խողովակով փոխանցուող դասականութեան մը հետքերը:

Դասականութեան աղբեցութեան տակ գրուած են Թերզեանի, Պէշիկթաշլեանի, Դուրեանի ողբերգութիւնները: Դասականութեան աղբեցութիւնն է հեթանոսական եւ հին Հայաստանի եւ յունական ու հայկական դիցաբանութեանց ոգեկոչումը Վարուժանի գործերուն մէջ, ինչպէս նաեւ ընտիր բառերու գործածումը եւ վեհազնաց ոճը:

Ներկայիս, անկախաբար Հին Դասականութենէն եւ Նոր Դասականութենէն, դասական կը կոչուին այն գրողները, որոնց գործերը դիմացած են ժամանակին, առարկայ են տակաւին ուսումնասիրութեան եւ գնահատանքի ու կ'աւանդուին դպրոցներու մէջ: Այսպէս. դասական են Նարեկացին, Պ. Դուրեանը, Պարոնեանը, Զոհրապը, Թէքէեանը, Մեծարեանցը եւ ուրիշներ, հակառակ որ ո՛չ նոյն ժամանակին կը պատկանին եւ ո՛չ ալ նոյն դպրոցին:

2.- ՎԻՊԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Վիպապաշտ կոչուեցան այն գրողները, որոնք ըմբոստացան դասականներուն դրած կանոններուն ու պայմաններուն դէմ եւ ուզեցին ազատել արուեստագէտը անոնց կապանքներէն: Անոնք յաշրջեցին գրեթէ ամէն բան, — գրական ճաշակը, լեզուն, կանոնները, տաղաչափութիւնը, սեռերու ըմբռնումը:

Վիպապաշտութիւնը, որ ծաղկեցաւ ԺԹ. դարու առաջին կէսին, որպէս պատճառ ունէր նաեւ Ֆրանսական Յեղափոխութիւնը, որ յառաջ բերած էր մտաւորական և ընկերային մեծ յեղաշրջում: Տապալած էր միապետութիւնը, ազատագրուած էր անհատը կեդրոնացեալ իշխանութեան մը ճնշիչ օրէնքներէն: Անհատը, որ երէկ պարզապէս մէկ բաղկացուցիչ եւ հպատակ մասնիկը կը նկատուէր Ամբողջին (այսինքն՝ միապետութեան) եւ կը պարտէր ծառայել անոր՝ այսօր դարձած էր ուշադրութեան կեդրոնական առարկայ: Անհատին ազատութիւնը օրուան նիւթն էր:

Վիպապաշտները երգիչները դարձան մասնաւորաբար ազատագրուած անհատականութեան: Հեղինակին անհատական «ես»ը եւ Բնութիւնը (լեռ, ծառ, ջուրեր, երկինք, եւայլն), որոնք գրեթէ ամբողջովին կը բացակայէին դասականներու գործերէն, վիպապաշտներուն մօտ առարկայ դարձան մասնաւոր ուշադրութեան: Բանականութիւնը եղաւ գահընկեց եւ իր տեղը տուաւ Զգացումին:

Վիպապաշտները չէին բացատրեր՝ այլ կը զգային, չէին վերլուծեր՝ այլ կը ներկայացնէին կեանքն ու իրողութիւնները այնպէս ինչպէս որ իրենք կը փափաքէին որ եղած ըլլային անոնք: Երեւակայութիւնը իրենց գլխաւոր յատկանիշներէն մէկն էր: Յաճախ մեղամաղձոտ էին անոնք:

ՎԻՊԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ա.— Վիպապաշտները կ'երգէին անհատը, անհատին «ես»ը, անհատին անձնական ու մտերմիկ զգացումները, ապրումները, զգացումները:

Բ.— Միտք, տրամաբանութիւն կը նկատուէին երկրորդական: Զգացում, երեւակայութիւն եւ հաւատք (զգացումի վրայ հիմնուած համոզում), — ահա այն ուժերը, որոնց կը վստահէին

վիպասալաշտները: Անոնք ենթակայական էին (հակառակը՝ «առարկայական»ին), այսինքն՝ աշխարհը կը դիտէին իրենց անհատական գղացումներուն, ապրումներուն, համոզումներուն, տեսիլքներուն ընդմէջէն:

Գ.— Քանի որ զգացում եւ երեւակայութիւն տիրական էին այնքան՝ բնական էր որ վիպասալաշտները իյնային չափազանցութիւններու մէջ: Անոնց մօտ խինդն ու վիշտը, սէրն ու ատելութիւնը, հաւատարապէս, չափազանցեալ աստիճանով մը երեւան կու գային. անոնք ծայրայեղ էին իրենց թէ՛ հրճուանքին եւ թէ՛ տառապանքին մէջ, թէ՛ երազներուն եւ թէ՛ ակնկալութիւններուն մէջ: Եւ զարմանալի չէր որ փափաքէին հիմէն վերակառուցանել ամբողջ մարդկային կեանքը՝ իրենց երազներուն եւ երեւակայութեան համաձայն, եւ կամ՝ որոնելու ելլէին մերիւնէն տարբեր ու լաւագոյն աշխարհներ, ուր մարդիկ երջանիկ էին:

Դ.— Չարմանալի չէր, նոյնպէս, որ վիպասալաշտները ըմբոստանային տիրող կարգուսարքին դէմ, եւ կամ՝ ճիշդ հակառակը՝ ուզէին փախչիլ ներկայէն դէպի երազային աշխարհներ, ուր օրէնքները կը բխէին Սիրտէն եւ ո՛չ թէ Միտքէն, ու մեկուսանային իրենց անհատական առանձնութեան մէջ, խզուէին ներկայէն: Այս փախուստը կ'ըլլար երեք ուղղութեամբ, — կամ՝ դէպի Բնութեան ծոցը (ուր ամէն բան բարի, պարզ, բնական էր), կամ՝ դէպի Անցեալ (ուր ամէն բան գեղեցիկ, մաքուր, վեհ էր), եւ կամ՝ դէպի Արկածախնդրական կեանք (ուր կարելի էր մեծ եւ աննախընթաց իրագործումներով ծառայել մարդկութեան, ի հարկին՝ զոհուիլ անոր երջանկութեան համար):

Վիպասալաշտները, որոնք մեծ դժգոհներ եւ ըմբոստներ էին, յաճախ եղան նաեւ յուստեսներ՝ երբ չկրցան փոխել ընկերային կեանքը եւ երջանկութիւն բերել մարդկութեան:

Ե.— Վիպասալաշտներուն գործերուն մէջ Բնութիւնը կը գրաւէր կարեւոր տեղ: Յաճախ կ'եղբայրանային Բնութեան հետ. ինչ որ բնական էր՝ աղնիւ էր. եւ Բնութիւնը արդէն «մայր» մըն էր յաճախ՝ գորովագութ եւ ամենաբոյժ, որ իր դիրքը լայն բացած՝ կը սպասէր իր զաւակներուն, անոնց ցաւերը ամոքելու եւ վէրքերը բուժելու: Բայց նաեւ «անտարբեր» եւ «անողորմ» ուժ մըն էր Բնութիւնը իրենց համար՝ երբ գոհացում չէր տար իրենց ակնկալութիւններուն:

Զ.— Վիպասալաշտներուն համար մարդկային հոգին աւելի ընդարձակ եւ բազմակողմանի էր քան դասականներուն, որոնք գտած ըլլալ կը կարծէին նաեւ այն յաւիտենական օրէնքները, որոնք յատուկ էին մարդկային հոգիին: Վիպասալաշտները, որոնք չէին հաւատար յաւիտենական օրէնքներու, պեղեցին մարդկային ներաշխարհը (հոգին) նորանոր կողմերէ եւ զայն, այսպէսով, ընդարձակեցին, հարստացուցին:

Է.— Շատ բնական էր, որ զգացող եւ անկաշկանդօրէն երեւակայող վիպասալաշտները ըլլային ազատ ընտրելու այն ոճն ու լեզուն, որոնք աւելի հարազատ էին իրենց անհատական խանութեանքին եւ համոզումներուն: Այնպէս որ, ոճը, որ այնքան ճշգրիտ, յղկուած, կանոնաւոր եւ անանձնական էր դասականներուն մօտ՝ դարձաւ անձնական, կանոններէ ազատ, այլազան: Անմիջականութիւնը, յուզականութիւնը եւ երեւակայութիւնը առաջնագոյն յատկանիշներն էին ոճին:

Ը.— Մինչ դասականները որպէս տիպար կ'ընդունէին հին դասական գրականութիւնները, վիպասալաշտները որպէս նմուշ առին Միջին Դարու, ինչպէս նաեւ այլ ժողովուրդներու գրականութիւնները:

Թ.— Վիպասալաշտին համար իրական էր, ինչ որ անհատը կը զգար, կ'երագէր. ինչի որ անհատը կը հաւատար իր հոգիով:

Հայ գրականութեան մէջ որպէս վիպասալաշտ ծանօթ են Հայր Զ. Ալիշանը, Պ. Դուրեանը, Մ. Պէշիկթաշեանը, եւ ուրիշներ:

Պ. Դուրեանի «Տրտունջ»էն առնուած հետեւեալ հատուածը կը պարունակէ վիպասալաշտութեան յատկանիշներէն շատերը, — 1) Դուրեան կ'երգէ իր անհատական ցաւը, 2) Կայ յորդարուիս յուզում, 3) Կայ անզուսպ երեւակայութիւն («Կը փրփրի ներսս դժոխքի մ'հանգոյն»), 4) Բնութիւնը ներկայ է ամէն տունի մէջ («սեւ նոճ», «աշնան տերեւ», «աստղեր», «վարդ», «լուսին», «վիհ»), 5) Բնութեան կը դիմէ իր ցաւերուն ամոքումին համար («երկնքի աստղեր, կայծ ու կեանք տուէք», «լուսինն յար կու լայ», «եւ արդէն լուսինը ստեղծուած է լալու համար անոնց վրայ, որոնք լացող չունին»), ու թէեւ Բնութիւնը «վարդ ու շող չի տար իրեն», բայց եւ այնպէս կը մասնակցի մարդկային ցաւին՝ իր լուսինով եւ աստղերով: 6) Լեզուն ճոխ է, յուզական. կայ առատ պատկեր. ոճը

Թաւալուն է եւ անկաշիւանդ: 7) Տիրույ տրամադրութիւնը տիրութիւնն է: 8) «Տրտունջք»ը, երբ նկատի ունենանք ամբողջութիւնը, բողոք մըն է, ծառայում մը: 9) Այս հատուածին վերջին չորս տողերը հակառակ իրենց խորութեան՝ զբուսած են այնպիսի պարզ, սովորական լեզուով մը, որ ընդունելի չի կրնար ըլլալ դասականներուն համար: Եւ արդէն ոճի այս ազատ այլազանութիւնը յատկանիչներէն մէկն է վիպապաշտութեան:

... Ո՛հ, կը դողդոջեմ, տոգո՛յն եմ, տոգոյն,
կը փրփրի ներսս դժոխքի մ'հանգոյն...
Հառաչ մ'եմ հեծող նսնորու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...

Ո՛հ, կա՛յծ տուէ՛ք ինձ, կա՛յծ տուէ՛ք, ապրի՛մ...
Ի՛նչ, երագէ վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ֆակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մբուրո՞վ է գծուած...

Ո՛հ, տուէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ, ապրի՛լ ու ապրի՛լ:
Երկֆնի աստղեր, հոգւոյս մէջ ընկե՛ք,
կա՛յծ տուէ՛ք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէ՛ք:

Գարունն ոչ մէկ վարդ ֆակտիս դակահար,
Ո՛չ երկնի շողերն ժպիտ մ'ինձ չեն տար.
Գիշերն է դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն յար կու լայ, խուզարկէ վիհեր:

Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար Նա դրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան, —
Նախ կեանքը, վերջը՝ լացող մ'իբ վրան:

3.- ԲԱՌՆԱՍԵԱՆՆԵՐ

Բառնասեան հոսանքը յառաջ եկաւ որպէս հակադրութիւն վիպապաշտութեան: Բառնասեանները դէմ էին վիպապաշտներուն մեթոմադոնութեան, զգայնութեան, «ես»ի ցուցադրումին: Անոնք կը պահանջէին որ գրականութիւնը (եւ յատկապէս՝ բանաս-

տեղծութիւնը) ըլլար նուազ անձնական, ի հօրիին՝ անանձնական, բայց եւ ըլլար աւելի իմացական, այսինքն՝ մտային, վերացական: Բառնասեաններուն զլիաւոր նորաստեղծութիւնը արուեստի կատարելութիւնն էր, — յանդի ճոխութիւն, տաղաչափական ճարտարութիւն, երաժշտականութիւն: Անոնց նշանաբանն էր, — «Արուեստը արուեստին համար», այսինքն՝ անտարբեր էին խորքին նկատմամբ. էականը՝ արուեստով արտայայտուելն էր, հոյ չէ թէ արտայայտուածը անկարեւոր բան մը ըլլար: Էականը՝ «Բաժակին զեղեցկութիւնն էր, հոյ չէ թէ պարտապ ըլլար ան»:

Բառնասեաններուն համար իրական էր ինչ որ արտայայտուած էր կատարելալ արուեստով եւ անանձնական մօտեցումով:

Բառնասեաններն ալ, իրենց կարգին, ինկան ծայրայեղութիւններու մէջ. իրենց արտայայտութիւնները եղան նրբին, նկարչապէղ, երաժշտական բայց տառապեցան կեանքի, յուզումի պակասէ. եղան պաղ, անկենդան, թէեւ յաճախ՝ վերլուծող:

Հայկական դրականութեան մէջ Ա. Չոպանեանը յատկապէս, իր կարգ մը բանաստեղծութիւններով եղած է հետեւորդ Բառնասեան զպրոցին՝ հակադրուելի փորձելով զուրեանական մեթոմադոնութեան եւ զգայնութեան:

Ահա Ա. Չոպանեանի «Լուսնին Տակ» ստանաւորը, որ ունի զլիաւոր յատկանիչները Բառնասեան զպրոցին.— 1) Մասնաւոր խնամքով կազմուած են յանդերը — շրջին, առաջին, հառաջին, չնչին, քոչին, աղբամղջին, կոչին, կառչին. մեղմավար, ոգեւար, հեւար, խաւար, ի վար: Ամբողջ ստանաւորը երկու տեսակ հիմնական յանդ ունի միայն, եւ երաժշտական է: 2) Ոտանաւորին բառերը նուրբ են եւ ընտիր, — նուրբ, անգայտ, տոգոյն, ոգեւար, քովք, կոչ, եւայլն: 3) Բայց հակառակ յանդերուն ճոխութեան, բառերուն ընտիր եւ երաժշտական ըլլալուն՝ ոտանաւորը յուզում չի յառաջացներ ընթերցողէն ներս: Պէտք եղածէն աւելի կսկուած ու ինամուած է: 4) Հեղինակին անձր բացակայ է իր դործին մէջէն. ինք չկա՛յ «լուսնին տակ». ինք պարզապէս կը նկարագրէ տեսարան մը, որ կարծէք կապ չունի իրեն հետ. չ'զգար իր նկարագրածը, միայն իր միտքով կը տեսնէ դայն, այսինքն՝ կը մտածէ անոր մասին: Հակառակ որ նկարագրուած տեսարանն ու պահը տխուր են՝ ոտանաւորը տիրութիւն չի պատճառեր ընթերցողին:

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Ամպերուն մէջ, որք շրջին,
Նուրբ, անգայտ ու մեղմավար,
Լուսինն իր շողն առաջին
Կաթէ՛ տժգոյն, ոգեւար,
Տարտամութեամբն հառաչին:

Ճնշեալ մտքէն որ չնչին
Ու սին խոռով մը հեւար,
Երազք հիմա կը թռչին
Լուսնին տակ:

Մեռելներն աղջամղջին
Զարթնուն հողին մէջ խաւար:
Սէրն աղջկանց ունկն ի վար
Կը հոսէ թովմն իր կոչին,
Բառերով որք կը կառչին,
Լուսնին տակ:

4.- ԽՈՐՀՐԴԱՆՇԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Խորհրդանշապաշտներն ալ, իրենց կարգին, հակադրուեցան Բառնասեաններուն, որոնց համար ձեւն էր կարեւորը, — յստակ, ճշգրիտ, վերջնական, կատարեալ ձեւը:

Խորհրդանշապաշտները կ'ուզէին Բառնասեաններուն մէկըի ձգած մարդկային հոգին ու զգացումները ետ բերել բանաստեղծութեան, առանց սակայն զգացումն ալ հասցնելու ծայրայեղութեան, ինչպէս ըրած էին վիպապաշտները:

Խորհրդանշապաշտներն ալ վիպապաշտներ էին, այն գլխաւոր տարբերութեամբ որ ասոնց վիպապաշտութիւնը կը յատկանշուէր խորհրդանշաններու գործածութեամբ. (խորհրդանշանը այն խորհրդաւոր կապն է, որ կայ արուեստի ձեւերու, բառերու, եւ կարգ մը չարտայայտուած զգայնութիւններու միջեւ: Օրինակ. կապոյտ գոյնը խորհրդանշանն է երջանկութեան, այսինքն՝ խորհրդաւոր կապ մը ունի ան երջանկութեան հետ, եւ երբ մէկը տեսնէ կամ երեւակայէ կապոյտ գոյնը՝ կրնայ այդ կապոյտը զգալով՝ զգալ նաեւ թէ ի՞նչ է երջանկութիւնը):

Խորհրդանշապաշտները իրենց արտայայտել ուղած զգացումը, իմաստը կը ծածկէին այլարանութիւններու եւ մասնայատուկ բառերու ետին ու կը ջանային զայն փոխանցել ընթերցողին՝ կըչոսթի, գոյներու եւ պատկերներու միջոցով: Իրենց եւ ընթերցողին միջեւ կը ղետեղէին խորհրդանշաններով զարդարուն շարժեալ «վարադոյր» մը. ընթերցողը կը պարտէր թափանցել այդ վարադոյրէն ներս եւ հասնիլ անոր ետին պահուած իմաստին: Առանց այս վարադոյրին յոռաջ բերած անորոշութեան եւ խորհրդաւոր մշուշայնութեան՝ կարելի չէր հասնիլ որեւէ բանի բուն իմաստին, խսկութեան: Խորհրդանշապաշտներուն համար իրերուն եւ երեւոյթներուն արտաքինը չէր որ կարեւոր էր, այլ անոնց ներքին, թաքուն էութիւնը. եւ որովհետեւ այդ էութիւնը տարտամ, անորոշ եւ խորհրդաւոր էր՝ զայն արտայայտելու լուսագոյն կերպը այլ չէր՝ եթէ ոչ՝ արտայայտուիլ տարտամ, անորոշ, խորհրդաւոր, բայց՝ թելադրական ձեւերով:

Խորհրդանշապաշտները կողմնակից էին անորոշին, տարտամին՝ թէ՛ ոճի մէջ եւ թէ՛ խորքի, որովհետեւ անոնք կը խորհէին թէ ամէն բան խորհուրդ մը, թաքուն իմաստ մը, վերլուծումէ խուսափող նշանակութիւն մը, ողեկան էութիւն մը ունի, եւ բանաստեղծին գերը պէտք է ըլլայ ճիշդ այդ թաքուն, խուսափուկ, խորհրդաւոր ու ողեկան էութիւնը թարգմանել: Անոնք ճշմարտութեանն եւ կեանքին աւելի՛ հետաքրքրուած էին՝ ճշմարտութեան եւ կեանքին՝ մարդկային հոգիին վրայ ձգած ազդեցութեամբ: Անոնք երեւոյթ մը, գաղափար մը, իր մը ներկայացնելու համար կը ներկայացնէին ո՛չ թէ այդ երեւոյթը, գաղափարը կամ իրը՝ այլ՝ անոնց ձգած ազդեցութիւնը (յուզում, մտածում, ապրում) իրենց հոգիին վրայ: Անոնք իրականութիւն մը նկարագրելու տեղ՝ կը նկարագրէին այն ազդեցութիւնը, որ այդ իրականութիւնը կը ձգէր իրենց հոգիին վրայ: Օրինակ. Միամանթօն փոխանակ ըսելու «Այն ստեղծ երջանկութիւն պիտի ըլլայ աշխարհի վրայ եւ մարդիկ պիտի ըլլան բարի», կ'ըսէ՝ «Պառնուկներ պիտի ծնին առուակին եզերքը եւ մարմանդներուն վրայ...»: Երբ ինք կը մտածէ «բարութեան» մասին՝ կը զգայ ա՛յն ինչ որ պիտի զգար եթէ մտածէր «զառնուկներու» մասին: Ուրեմն կ'ըսէ «զառնուկ» փոխանակ ըսելու «բարի մարդ»:

Խորհրդանշապաշտներուն համար իրականութիւնը՝ խորհրդանշաններու միջոցով արտայայտուող՝ իրերու, երեւոյթներու թաքուն էութեան ձգած ազդեցութիւնն է մարդկային հոգիին վրայ:

Սորհրդանշապաշտներն ալ յաճախ հեռացան կեանքէն, դարձան յոռետես, եւ այս՝ որովհետեւ չէին հետաքրքրուած իրականութեամբ: Արուեստը իրենց համար թաքստոց մըն էր, ուր կ'ապաստանէին անոնք՝ փոխչելով կեանքի տղեղ եւ դառն իրականութենէն:

Հայկական գրականութեան մէջ իրենց խորհրդանշապաշտ հակումներով ծանօթ են Սիամանթօն, Վ. Տէրեանը, Մ. Մեծարենցը, Վ. Թէքէեանը, եւ ուրիշներ:

Հետեւեալ հատուածը, առնուած Սիամանթոյի «Յոյսին Համար» քերթուածէն, խորհրդանշապաշտ արուեստի յատկանշական նմուշ մըն է. — 1) Լի է այլաբանօրէն գործածուող բառերով, միտքերով, պատկերներով. օրինակ. — «գաղափարներու հովիտ», («հովիտ»ը ջրառատ եւ ծաղկած ձորն է. եւ երբ բանաստեղծը հարց կու տայ Յոյսին թէ գաղափարներու ո՞ր հովիտներէն պիտի դայ ան, ըսել կ'ուզէ թէ Յոյսին իրականացումը՝ իտեալներու, գաղափարներու ծաղկիլն ու պտղաւորուիլն է): «Ե՛րբ պիտի լուսնաս, ո՛վ Յոյս», (Յոյսը կը նմանցուի երկինքի. փոխանակ ըսելու՝ «Ե՛րբ պիտի իրականանաս, ո՛վ Յոյս», կ'ըսէ՝ «Ե՛րբ պիտի լուսնաս», որովհետեւ բանաստեղծը կը խորհի թէ հարագատօրէն զգալու համար ա՛յն ինչ որ ի՛նք կը զգայ՝ երբ կը խորհի յոյսերու իրականացման մասին՝ ընթերցողը պէտք է զգայ ա՛յն՝ ինչ որ բանաստեղծը կը զգայ երբ կը դիտէ երկինքը՝ լուսածափին: Եւ ապա, կ'ըսէ «ձեռքերս ... արշալոյսիդ քրտումներուն երկարեմ», (քրտումը՝ նուրբ, երկայն, մուգ կանաչ տերեւներով, մէջտեղէն սպիտակ ջիղով, մանիշակագոյն ծաղիկներով բոյս մըն է. կայ դեղին քրքում ալ). բանաստեղծը հիմա կ'ուզէ որ ընթերցողը՝ որպէսզի ան կարենայ հարագատօրէն հասկնալ թէ ի՛նք ինչ կը տեսնէ երբ կը դիտէ լուսածափը, երեւակայէ՛ քրքումներով ծածկուած ընդարձակ տարածութիւն մը եւ զգա՛յ անոր գեղեցկութիւնն ու իմաստը: Սիամանթոյին համար յոյսերու երկինքը այն զգացումն է, որ ինք կ'ունենայ երբ կ'երեւակայէ քրքումներով ծածկուած ընդարձակ տարածութիւն մը. ու եթէ ընթերցողը կ'ուզէ տեսնել ի՛նչ որ Սիամանթօն կը տեսնէ՝ կը պարտի զգալ ինչ որ ա՛ն կը զգայ: Քրքումի պատկերը այն «վարագոյրն» է, որուն ընդմէջէն ընթերցողը պիտի տեսնէ եւ զգայ բանաստեղծին տեսածն ու զգացածը): 2) Բանաստեղծութիւնը լի է տարտամութեամբ, անորոշութեամբ: 3) Գործածուած են բազմաթիւ խորհրդանշաններ, — «սեւ անձրեւներ», «կա-

պայտ եթեր», «գառնուկներ»: 4) Ոգեկան էութիւն ունին, օրինակ՝ աղբիւրները, որոնք (կարծէք գիտակից հոգի ունենան) «իրենց հեծեծանքը երգերու պիտի փոխեն»:

Գաղափարներու ո՞ր հովիտներէն պիտի գաս եւ Ե՛րբ
պիտի լուսնաս, ո՛վ Յոյս,
Ե՛րբ, որպէսզի ես ալ իմ երկու ձեռքերս, կարօտէն ու
սպասումէն դողդոջուն,
Արշալոյսիդ քրտումներուն երկարեմ:

... Մոխիրներու հողը ծաղկաստան մը պիտի դառնայ,
դրախտային եւ անթառամ,
Եւ բազմահազար աղբիւրները, իրենց հեծեծանքը հովիւնե-
րուն հետ երգերու պիտի փոխեն,
Սեւ անձրեւներուն տեղ հայրենի աստղերէն կապոյտ
եթերն է որ պիտի թորի,
Եւ գառնուկներ պիտի ծնին առուակին եզերքը եւ մար-
մանդներուն վրայ...

Վահան Տէրեանի հետեւեալ քերթուածը ունի խորհրդանշապաշտ յատկանիշներ. 1) Սորհրդանշանի գործածութիւն, — «ոսկէ» անձրեւ, անսուտ «գրախտ», 2) Ոգեկանութիւն երեւոյթներու ետին, — «Մի անծանօթ ձեռք», «Ամէն ինչ ունի չմեռնող մի կեանք», 3) Սորհրդաւորութիւն, — «Կայ խորհրդաւոր, դիւթող մի խաւար», 4) Յոռետեսութիւն, փախուստ ներկայէն, — «... անդարձ անցածում՝ մի անսուտ դրախտ» կայ. 5) Շեշտեալ երածշտականութիւն, կշռոյթ:

ՅՈՒՇԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

Կեանքը լուր է, աղմուկը մեռնում.
Մի անծանօթ ձեռք նուրբ մթնշաղում
Անցեալն ու ներկան իրար է խառնում,
Իմ սրտում ոսկէ անձրեւ է մաղում:

Մի ֆնուշ լոյս կայ իմ հոգու համար —
Ամէն ինչ ունի չմեռնող մի կեանք,
Կայ խորհրդաւոր, դիւթող մի խաւար,
Ուր բախտից փաղքը եւ տրտունջ ու տխրանք:

Մի քաղցր վիշտ կայ անդարձ անցածում,
Վերյուշերի մէջ — մի անսուտ դրախտ,
Մի անանգ վայելք, անխաբ հիացում —
Կեանքի'ց գեղեցիկ ցնորական բախտ...

5.- ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Այս շարժումն ալ կը հակադրուի վիպապաշտութեան մասնա-
ւորաբար, եւ միւս շարժումներուն՝ ընդհանրապէս: Կը ձգտի դրա-
կանութիւնը ազատագրել անձնականութենէ, երազկոտութենէ, ա-
նորոշութենէ, եւ զայն օժտել առարկայական, վստահելի մեթոտ-
ներով:

Իրապաշտները ձգտած են (ու կը ձգտին տակաւին) ներ-
կայացնել «կեանքը ինչպէս որ է»: Անոնք կը խորհէին որ լաւագոյն
կերպը ներկայացնելու իրականութիւնը, այսինքն՝ «կեանքը ինչպէս
որ է»՝ կեանքը նկարագրելն էր առաւելագոյն մանրամասնութեամբ
եւ ճշգրտութեամբ: Ահա թէ ինչո՛ւ՝ իրապաշտներուն գործերը լի
էին մանրամասն նկարագրութիւններով եւ ծանօթութիւններով: Ա-
նոնք կը նկարագրէին իրականութիւնը այնպէս ինչպէս կը ներկա-
յանար իրենց, կը վերլուծէին զայն եւ յաճախ կը յանդէին քննա-
դատութեան՝ ուղղակի թէ անուղղակիօրէն:

Իրապաշտները՝ իրականութեան այլազան երեսները մանրա-
մասնօրէն ներկայացնելու իրենց ձգտումին մէջ, ստիպուած էին
անշուշտ իրականութիւնը կազմող բազմաթիւ երեւոյթներէն եւ
մանրամասնութիւններէն ընտրել եւ նկարագրել անոնք, որոնք ըստ
իրենց աւելի կարեւոր եւ հիմնական էին. ստիպուած էին նաեւ այդ
երեւոյթները ներկայացնել այնպէս մը, որ անոնք ըլլային ճշմար-
տանման, այսինքն՝ համոզիչ: Իրապաշտ գրողները պարզապէս ի-
րողութիւնները թուող եւ զանոնք տեղեկագրողներ չէին: Անոնք
կ'ուզէին իրենց հերոսները իրական մարդեր ընել, մարդեր, որոնք
ունին իրենց սեփական եւ հարազատ ապրումներն ու մտածումնե-
րը, եւ ատոնց համեմատ կ'ապրին ու կը գործեն: Իրապաշտ գրողը
կեանքին կը մօտենար առարկայօրէն. կը ջանար կեանքը նկարագ-
րելով բացատրել ալ զայն. հետեւաբար կը դրողէր ժամանակակից
կեանքով առաւելաբար, եւ մանաւանդ առօրեայ կեանքով, եւ կը
ներկայացնէր այդ կեանքին՝ աւելի՛ տղեղ, յոռի, սեւ ու ծուռ կող-
մերը, քան գեղեցիկ, յուսադրիչ ու լուսաւոր երեսները:

Իրապաշտ գրողը չէր խուսափիր կեանքէն, կեանքի իրակա-
նութենէն, այլ կը դիմագրաւէր զայն եւ կը ձգտէր ներկայացնել ա-
նոր բուն դիմագիծը: Իրապաշտութիւնը պայթարի շարժում մըն էր
ընդդէմ տիրող պայմաններուն, կարգուսարքին, ըմբռնումներուն:

Իրապաշտները գրական բեմ կը հանէին ժողովուրդին բոլոր
խաւերն ալ, եւ մինչ այդ անտեսուած եւ արհամարհուած խաւը՝
հասարակ ժողովուրդը, իր առօրեայով, իր հոգերով, իր երազնե-
րով: Անշուշտ բոլոր խաւերն ալ ներկայացնելու եւ զանոնք այնպէս
ինչպէս որ են ներկայացնելու ձգտումը ընդարձակութիւն եւ այլա-
զանութիւն կու տար իրենց գործերուն թէ՛ նիւթին եւ թէ՛ ձեւին ու
լեզուին: Իրապաշտներուն լեզուն ուղիղ, ճշգրիտ եւ տոկուն էր,
թէեւ երկարածիզ եւ յաճախակի նկարագրութիւնները անոր կու
տային միօրինակութիւն եւ ծանրութիւն:

Իրապաշտները կը գործածէին ժողովրդական բառեր, ստոյթ-
ներ, խօսակցութեան ձեւեր՝ տեղական գոյն ստեղծելու համար:
(Լեզուական, կենցաղային, աշխարհագրական յատկանիշներ, ո-
րոնք բնորոշ են տեղի մը համար, երբ գրուին գրութեան մը մէջ՝
անոր կու տան հարազատութիւն եւ բնականութիւն: «Տեղական
գոյն» բացատրութեամբ կը հասկնանք այս հարազատութիւնն ու
բնականութիւնը): Օրինակ, գեղջկական բնիկ թէ օտար բառերու,
ստոյթներու, հնչածեւերու գործածումը, տեղական բնորոշ զղեստ-
ներու, սովորութիւններու, կլիմայական եւ աշխարհագրական
պայմաններու նկարագրութիւնը իրապաշտներու զրիչին տակ մի-
ջոցներ էին «տեղական գոյն» ստեղծելու եւ հետեւաբար ներկայա-
ցուող երեւոյթը աւելի իրական դարձնելու համար:

Հայկական գրականութեան մէջ իրապաշտութեան շրջան
նկատուած է 1885-էն մինչեւ 1905 երկարող ժամանակամիջոցը ա-
ռաւելաբար: Իրապաշտ գրողներն են՝ Յ. Պարոնեանը, Ա. Արփիար-
եանը, Գ. Չոհրապը, Շիրվանդատէն, Լ. Բաշալեանը, Տ. Կամսա-
րականը, Հրանդը, Երուխանը, Ռ. Սեւակը, Նար-Դոսը, Եւայլն,
բոլորն ալ արձակագիրներ (պատմուածքի, վէպի, թատրերգութեան
հեղինակ):

Հայկական գրականութիւնը չունի էովին իրապաշտ բանաս-
տեղծ, թէեւ ունի իրապաշտ շունչով եւ մօտեցումով յօրինուած բա-
նաստեղծութիւններ: Օրինակ, Դ. Վարուժանի արտագրութիւննե-
րէն ոմանք («Բանուորուհին», «Մեքենաները») գրուած են իրա-
պաշտ ոգիով:

Բացակայութիւնը հիմնովին իրապաշտ բանաստեղծութեան մը՝ հաւանաբար բացատրելի ըլլայ անով որ՝ չափածոն իր բնոյթով՝ առաւելաբար զդացական, երեւակայական եւ վերացական մարզ մըն է, եւ այս իսկ պատճառով գոհացում չի կրնար տալ իրապաշտութեան պահանջներէն շատերուն:

Ահա հատուած մը Լ. Բաշալեանի «Կաղանդ» գրութենէն.

Կ Ա Ղ Ա Ն Դ

.... Ձիւն կայ ամէն կողմ, յորդ, քաւ ու կակուղ, անաղարտ բաներու սրբութեամբ մը փալփուղ:

.... Կէս-գիշերուան զանգակները կը հնչեն աւետաւոր, Նոր Տարիին գալուստը իմացնելով....:

Անդին, տափուկ քիւրսիին շուրջը, որոնց տակ շարուած են կրակով լեցուն հողէ քաղարներ, շալէ բարձերու ու հաստ գորգերու վրայ նստած՝ ուրիշ խումբ մը, Նոր Տարիի հացը կը բաժնէ, մինչդեռ աւելի հեռուն, քոնիքին բոլորտիքը, բազմաթիւ նիւղերու բաժնուած հսկայ մումի մը լոյսով, ամբողջ ընտանիք մը «Կաղանդ Պապուկ»ին գալուստը կը սունէ:

Կաղանդի կորկուտը եւ եօքնագգի ապուրը, անդին, սեղանի մը շուրջ հաւած են խօսող-խնդացող բազմութիւն մը: Բայց աչքս անոնցմէ կը բաժնուի ու կը յառի քիչ մը հեռուն, աղուոր հարսի մը վրայ, որ տանը գոմին դռան առջեւ կեցած, կը կաղընդէ արջառները, կուլուլ նետելով անոնց՝ բռնալիք. չէ՞ մի որ տունէն են անոնք ալ, ու տարին ի բուն աշխատեցան նոյն վաստակին համար...: Կինը մէկ ձեռքով կը շոյէ հիմակ գոմշուկի մը ճակատը, մինչ անասունը, իր բարի աղուոր աչքերը խնդութեամբ լեցուն, անոր միւս ձեռքին մէջ կ'ուտէ հատիկները:

.... Մոխրի համ կայ օդին մէջ:

Դաշտերը մերկ են, ու ծառերը, կմախֆներու պէս կանգուն, անձկագին գալարումներով կը դողողան անոնց մէջ:

Տուները իրարու վրայ սեղմուած, սմբած են, ու ցաւն ու անձկութիւնը կը պտըտին անոնց վերեւ:

Սուգի երկիրն է ասիկա, հիւրամերժ ու անխնդում:

Բայց ահա երգիքի մը տակ սեղան մը կը տեսնեմ: Բազում-քիւն մը նստած է անոր չորս բոլորտիքը, մեծ-մայրը իր գաւկընթրով, հարսներով, քոններով: Կաղանդի սեղան մըն է ասիկա. բայց, ո՛չ Նոր Տարիի հացը կայ վրան, ո՛չ պտուղներու կոյտը, ո՛չ մեղր ու ո՛չ գինի: Թոնիքին մէջ կրակը մարած է շատոնց: Կանքեղ մը կը պլպլայ միայն անկիւն մը, ու անոր տատանոտ լոյսն է միայն կենդանի այստեղ:

Բայց այդ բոլոր մարդիկը չե՛ն խօսիր, չե՛ն երերար, չե՛ն նայիր:

Աչքերս կը յառեմ:

Ա՛հ, մեռած են:

Ու ի՛նչ մահով:

Մեծ մօրը աչքերը փորուած են, անոնց խոռոչը կը բացուի, կը խորունկնայ ահաւոր: Վզին վրայ, լայն վերքի մը շուրջը, արիւնը փխտացած է, սեւ ու փայլուն: Իր քովը, անդրանիկ գաւակը իր քեւ կռքնուցած է իր գլուխը որ մարմնէն անջատուած է: Իր պոսիկ հարսը դիմացը նստած է... ծունկերուն վրայ սեղմած նորածինի մը դիակը:

Վերի հատուածին մէջ ներկայ են իրապաշտ արուեստին յատկանիշներէն շատեր. — 1) Կան մանրամասն նկարագրութիւններ. 2) Տեղական գոյն տալու համար գործածուած են «քիւրսի», «կուլուլ» բառերը, ներկայացուած է Կաղանդի սեղանը՝ իր Նոր Տարիի տեղական ուտեստեղէններով, յիշատակուած է գոմշուկին ներկայութիւնը. 3) Կը պատկերուի իրականութիւնը ինչպէս որ է՝ ուղղակի եւ անպաճոյճ կերպով, օրինակ՝ երբ հեղինակը վերջին մասին մէջ կը նկարագրէ ընտանիքին անդամներուն աղետահար վիճակը. 4) Հեղինակին աչքը ուղղուած է բացասական երեւոյթի մը, — կը ներկայացնէ մարդերու խումբի մը կողմէ սպաննուած ուրիշ խումբ մը մարդերու: Առաջին երջանիկ պատկերը տրուած է հեղինակին կողմէ պարզապէս ցոյց տալու համար թէ ի՛նչ կրնար ըլլալ եւ պէտք է ըլլար հայ գիւղացիին վիճակը: Առաջին երջանիկ պատկերը երեւակայական է եւ բերուած է շեշտելու համար ծանրութիւնն ու ահաբեկութիւնը երկրորդին. 5) Գրութիւնը քննադատութիւն մըն է ուղղուած աշխարհին եւ տիրող այն կարգուսարքին դէմ՝ որ կ'արտօնէ նման ոճիքներ. 6) Լեզուն պիրկ, ուղիղ, ճշգրիտ եւ զօրաւոր է:

6.- ԲՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Բնապաշտները իրապաշտներ են, այն տարբերութեամբ որ իրենց համար՝ հակադրուելի Վիպապաշտութեան կը նշանակէ ճշգրտօրէն եւ ամբողջովին նմանիլ Բնութեան: Ասոնք մարդ արարածին բոլոր արարքները, մտածումները, յուզումները կը վերադրեն «բընական» պատճառներու, այսինքն՝ մարդկային կիրքերն ու մոլութիւնները, մտածումներն ու զգացումները կը բացատրեն բնախօսական պատճառներով, այլ խօսքով՝ զանոնք կը նկատեն արդիւնք ժառանգականութեան եւ միջավայրի (ընկերային, կլիմայական, աշխարհագրական, եւայլն): Ասոնք գիտական ճշգրտութեամբ, եւ առարկայականութեամբ կ'ուսումնասիրեն մարդը, ինչպէս պիտի քննէին եւ ուսումնասիրէին որեւէ կենդանի կամ բոյս: Ասոնց համար մարդը է՝ այն ինչ որ զինք կ'ընեն իր միջավայրն ու ժառանգականութիւնը. մարդկային առաքինութիւններն ու մոլութիւնները պարզապէս արտադրութիւններ են, ինչպէս որ արտադրութիւններ են, օրինակ, ձգախէժն ու շաքարը: Ուրեմն պէտք է քննել ու ներկայացնել մարդոց միջավայրն ու ժառանգականութիւնը մանրամասնօրէն, ամբողջութեամբ՝ իր սոցիոլոգիական, իր խոստովանելի թէ անխոստովանելի բոլոր կողմերով անխտիր. (ամէն բան արժանի է քննութեան): Անհատէն աւելի կարեւոր են այն ընկերութիւնն ու աշխարհը ուր կ'պարի անհատը, որովհետեւ ընկերութիւնն ու աշխարհն են, որոնք կ'ընեն անհատը ա՛յն ինչ որ է: Բնապաշտները կը հաւատան թէ գրականութեամբ կարելի է եւ պէտք է ներկայացնել ամէն երեւոյթ ու պարագայ, ո՛չ թէ գաղափար մը կամ զգացում մը յայտնելու կամ լուսաբանելու համար, այլ պարզապէս որովհետեւ այդ երեւոյթն ու պարագան գոյութիւն ունին որպէս մաս կեանքին: Ահա թէ ինչու՝ բնապաշտներն ալ մասնաւոր շեշտ կը դնեն նիւթական մանրամասնութիւններու վրայ եւ իրապաշտներուն պէս անձնատուր կ'ըլլան երկար նկարագրութիւններու: Բնապաշտներն ալ կը խորհին թէ որքան աւելի մանրամասնութիւններ տան երեւոյթի մը մասին՝ այնքան աւելի ճշմարտացիօրէն ներկայացուցած կ'ըլլան զայն:

Բնապաշտները կը հետեւին գիտական մեթոտին. կը ձգտին գիտականօրէն ուսումնասիրել մարդը, առանց զայն բնաւ անջատելու իր միջավայրէն: Ասոնք աւելի համարձակօրէն կը դիմադրուեն կեանքը, աւելի մեծ շահագրգռութիւն ցոյց կու տան վարի դասա-

կարգի մարդոց նկատմամբ եւ շեշտաւ հակուժը ունին ներկայացնելու կեանքին բնագրական, կենդանային եւ հիւանդագին կողմերը մասնաւորաբար:

Բնապաշտներուն համար իրականութիւնը գտնելու կերպը՝ գիտական առարկայականութեամբ եւ մանրամասնօրէն նկարագրելն է մարդոց բնախօսութիւնը, ընկերային կեանքը եւ աշխարհագրական պայմանները:

Բնապաշտներուն փիլիսոփայական տեսակէտը աւելի մեքենական է քան իրապաշտներունը: Բնապաշտին համար մարդ-արարածը կենդանի մըն է պարզապէս. իր կենդանական բնագրներն են, որոնք զինք կը մղեն այս կամ այն արարքը ընելու: Մարդուն բնախօսութիւնը՝ բնագր, կիրք, Ֆիզիքական տենչեր, աւելի կարեւոր է եւ հիմնական քան միտքն ու հոգին: Մարդ-արարածը չունի հոգեկան իրական յատկանիշներ: Բնապաշտները, սովորաբար, չեն հաւատար թէ մարդ-արարածը իտեալներ ունի եւ կրնայ անշահախնդրօրէն հետապնդել այդ իտեալներուն իրականացումը. անոնք կը ձգտին ցոյց տալ թէ ի՛նչ շարժառիթներ, պատճառներ կան պահած մարդոց «իտեալ»ներուն, «երագ»ներուն ետին: Աւելի՞նչ. Բնապաշտներուն համար Մարդը խաղալիկ մըն է Բնութեան ձեռքին մէջ եւ անօգնական լքուած է իր բախտին, այսինքն՝ զուգադիպութիւններու քմահաճոյքին: Մարդ-արարածը ազատ չէ:

Բնական էր որ բնապաշտները ըլլային յոռետեսներ: Բնապաշտները գործածած են ուղիղ, ճշգրիտ լեզու:

Հայկական գրականութեան մէջ բնապաշտ հակումներ ցոյց տուած են Երուսան եւ ուրիշներ:

Ահա հատուածներ Երուսանի «Համրին Վրէժը» պատմուածքէն.

... Բերանը քնաց է, ցուցնելով ապուշ ծիծաղէ մը լայնցած կաշեգոյն շրթներուն մէջ՝ լորձուկ ակոսները, տեղ-տեղ կոտրատու այդ նիխտտ խոռոչին մէջ միշտ կուստուկլոր կեցած է մսի կարմիր կտոր մը՝ սորաւիկի լայրիժ մարթիմ վէտվէտումներովը, քանձրացած լորձումեքի մերմակուրեամբ մը ծեփուած, եւ որ մերթ, չկարծած ատենդ, դուրս կը պոռթկայ միմչեւ թուշը, գոր կը լզէ, կ'անցնի-կը դառնայ, նարէն շուրջը, միջոցը կը լզուրտտէ, բան մը փնտռելու պէս, գոր չի գտնար, ու կամաց մը կը սփլի-կը մտնայ իր խոռոչին մէջ, քիչ ետքը նարէն դուրս երկննալու եւ շարժումները կրկնելու համար:

... Բնութիւնը, որ այս աստիճան անոդորմաբար ժլատ հանդիսացեր է այս խեղճ մարդուն ֆիզիքական կազմակերպութեանը համար, առեւելի կատակով մը կամ քնայնով մը՝ լսելու եւ խօսելու կարողութիւնն ալ զլացեր է անոր։ Ու այսպէս, անկա՛ միսի ու ոսկորի հրէշային շագախ՝ ամբոյսին սովորականութեան մէջ Տգեղութեան քստմանի պատկեր մը կը պտըտցնէ, իր ֆիզիքական ապաշնորհութեան վրայ ատելութիւն ու սիրտխառնուք միայն հրաւիրելով...

... Համբը, սակայն, մուրացկան մը չէր, եւ ո՛վ պէտք ուզէր ոգորմութիւն տալ իրեն, քանի որ արգահատանքի տեղ նազկանք միայն կ'ազդէր։ Ամէն մարդու պէս առուտուրով ապրող մարդ մըն էր։ Ոչխարի աղիք կը ծախէր...

Աղի՛ք, օ՛հ, տեսնելու էր զինք իր աղիքներուն հետ. դաստակներէն ու մատներէն վար կախուած էին անոնք, քաց, կակուղ, լարծուն, օճի պէս իրարու փաթթուած-խառնուած, անծայր, անվերջ գալարուածք մը մսի, արիւնի, փորտոտիքի։ Բայց ասիկա էր իր միակ հաճոյքը, գոր կարենար վայելել աշխարհի լիարուսն հաճոյքներուն մէջ։ Տեսակ մը հեշտութեամբ կը գրկէր իր աղիքները, անոնց կակուղ ցուրտ հպումէն անբացատրելի վայելք մը գգալով. կը սեղմէր, կը տրորէր զանոնք իր մատներուն մէջ... Մինչեւ իսկ — ու իր կատակն էր ասիկա — երբեմն իր բաց կլափին մէջ կը մխրտէր աղիքները յեղակարծ շարժումով մը, յետոյ ետ կը քաշէր կռկորդային սուր կոնկնով մը, որ պահ մը սարսափահար ընկրկիլ կու տար կատուներու նշացող, գգուրտող, սովալլուկ երանակը, գոր փողոցներուն մէջ, իր ետեւէն կը քաշկոտէր, գրգռելով-գայրացնելով անոնց անկուշտ քաղցը...

... Համբը տեսաւ աղջկան կատուն... վագրի ոստումով ցատկեց բռնեց կատուին ծոծրակէն, սեղմեց անոր կակուղ վիզը իր ջղոտ մատներուն մէջ, աչքերը քաւալելով մոլեգնութեամբ, լեզուն դուրս ցցած՝ օճի լեզուի պէս, խեղդեց կենդանին, որուն խաժ աչքները դուրս ցատկեցին կապիւններէն. յետոյ մօտեցաւ դիմացի պատին, զարկաւ ջախջախեց անոր քրդոտ գանկը. արիւնը՝ ուղեղով խառն, դուրս պտթկաց. ու զարկաւ, զարկաւ, խանջիւններ, կառաչներ արձակելով. մոլեգնելով այդ փ մը միսին վրայ, որ ա՛լ անմանաչ կոյտ մը եղած էր արիւնաշագախ. խաժաւ փրցուց անոր կակղիկ մանր քաթերը, ծախեց, դուրս նետեց...

Վերի հատուածին մէջ ներկայ են բնապաշտ արուեստին յատկանիշներէն շատեր. — 1) Մանրակրկիտ նկարազրուութիւններ կան. 2) Հիւանդագին պարագայ մը կը ներկայացուի. 3) Համբը բնագոյով ու կենդանական տենչերով շարժող արարած մըն է. աւելի կենդանի է քան «մարդ»։ Փոքրիկ կատուին փոքրիկ ու սիրուն տիրուհին հանդէպ զգացած իր «սէրը» երբ չի փոխադարձուիր՝ այդ սէրը փոխանակ զինք առաջնորդելու ազնուութեան, զոհողութեան՝ զինք կը մղէ սպաննելու աղջկան կատուն եւ անկէ՛ լուծելու իր վրէժը. 4) Հեղինակը չի դատապարտեր համբը իր արարքին համար, որովհետեւ զայն պատասխանատու չի նկատեր. համբը կ'ընէ ինչ որ իր ժառանգականութիւնը եւ միջավայրը կը մղեն զինք ընելու. ինք ենթակայ է անոնց։ 5) Բայց, միւս կողմէ, հեղինակը չի ջանար նաեւ համակրանք արթնցնել մեր մէջ համբին հանդէպ, այլ կը բաւականանայ առարկայականօրէն ներկայացնելով համբը եւ անոր արարքներն ու կիրքերը։ Ասիկա զիտական մեթոտն է. 6) Հեղինակը չի քաշուիր նկարազրուել պժշակի տեսարաններ ու պահեր. 7) Համբը կը պատկանի ամէնէն «վարի» դասակարգին. 8) Լեզուն տուրու է, ճշգրիտ, ուղիղ։

7.- ՏՄԱՒՈՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Այս դպրոցին պատկանող արուեստագէտներուն համար կարեւորը այն տպաւորութիւնն է, որ զբող մը կը ստանայ երեւոյթէ մը, պատահարէ մը, անձէ մը։ Ասոնք կը հաւատան թէ երեւոյթ մը, պատահար մը, անձ մը՝ ա՛յն է, ինչ որ է այն տպաւորութիւնը, որ արուեստագէտը կը ստանայ անոնցմէ՝ տրեւալ պահի մը։ Երբ փոխելի տպաւորութիւնը՝ կը փոխուի նաեւ այդ երեւոյթը, պատահարը կամ անձը՝ հեղինակին համար։ Ուրեմն իրական է միայն տպաւորութիւնը, որ մարդ կը ստանայ, եւ այդ տպաւորութիւնը կախում ունի, պահէն, տպաւորուող անձին տրամադրութենէն, դիրքէն, խառնուածքէն,

Տպաւորապաշտներուն համար կարեւորը բանի մը ինչպէս ըլլալը զիտանալը չէ, այլ զայն զգալն ու տեսնելն է։ Արուեստագէտին զերն է վերարտադրել, այսինքն՝ հարազատօրէն ներկայացնել այն տպաւորութիւնը, զոր ինք ստացեր է երեւոյթէ մը, պատահարէ մը, անձէ մը։ Եւ այդ ստացուած տպաւորութիւնը վերարտադրելու լաւագոյն կերպն է գոյներու, նրբերանգներու, ձայներու դիմելը։

Տպաւորապաշտները կը հաւատան թէ արտաքին կեանքն ու բնութիւնը ընդօրինակելը կարեւոր չէ. կարեւորը՝ դէպք մը, անձ մը, երեւոյթ մը, իր մը նկարագրելու ատեն՝ ընտրելն է այն մանրամասնութիւնները, որոնք կը կազմեն նկարագրուող բանին բուն էութիւնը՝ այդ պահուն, եւ ըստ հեղինակին: Եւ աւելի՛ իրական կ'ըլլայ ստացուող տպաւորութիւնը՝ եթէ ներկայացուին կարեւոր մասերը միմիայն եւ անտեսուին անոնք, որոնք կապ չունին հեղինակին այդ պահուն ունեցած տրամադրութեան հետ:

Տպաւորապաշտները, սովորաբար, փոխանակ բանի մը իրական պատճառները նկատի առնելու, այդ պատճառներուն տեղ կը դնեն իրենց անձնական համոզումներէն, զգացումներէն բխող պատճառներ:

Տպաւորապաշտներու լեզուն եղած է ճկուն, պատկերալից, ինքնավստահ, մերթ նրբին ու երաժշտական, մերթ թաւալուն՝ նայած գրութեան նիւթին ու հեղինակին խառնուածքին:

Հայկական գրականութեան մէջ տպաւորապաշտ էջեր ունին Տ. Չրաքեանը («Ներաշխարհ»), Վ. Թէքէեանը, Չ. Եսայեանը («Աւերակներուն մէջ») եւայլն:

Ահա հատուածներ Տ. Չրաքեանի «Ներաշխարհ» վէպէն.—

.... Հիմա նոսրաներուն հովին ձայնն է, որ գիշերէն կ'անցնի՝ անցեալով լեցուն, ցնորական. կարծես՝ Սեւ Ծովուն հեռալուր ձայնը՝ ապագայով լեցուն: Իմացական կեանքն իր անյայտ սկիզբը կը քուի առած ըլլալ անոր անհունութենէն. ինչպէ՛ս կը ճանչնամ իտէական անվախեան ձայնը, գոր ա՛լ իրապէս չեմ լսեր, բայց որուն նշանակութիւնը պիտի հնչէ գիտակցութեանս մէջ՝ ցորչափ Անհունին բազմաճիւղ տառապիմ:

.... Ո՛վ պիտի տար ինձի, բարե՛, խրճիթ մը Սեւ Ծովուն մէկ վայրենի արմառքին վրայ, խրճիթ մը՝ ուր ես բնակէի, ուր խիզս բնակէր, — տիեզերքին անսկիզբ ու անվախեան շշուկներուն մէջ երագուն խրճիթ մը...:

Բայց գիշերը կապուտցեր է. արշալոյսն է արդէն:

Գիշերը կը տժգունի, կը հալի ամպոտ առաւօտին մէջ, որ ահա կ'ելլէ, կը սպառնայ մղձաւանջի պէս: Օրն է, դժնդա՛կ: Նա՛, նոսրի մը կատարէն որի մը կը կոնչէ, որին իրականութիւնը կը պոռայ:

Կամաց-կամաց, սենեակիս երանաւէ՛տ նրագը կը քոսմի: Եւ անզգալարար լուսաւորուող պատուհանիս մէջ՝ ինքնութեանս, խիզ-նիս տեսիլը կամաց-կամաց կը հիւծի; կ'անօտրանայ, կը ցնդի:

**

Հովը կը փչէ. նոսրաները կը ծոխն, կը ճօնին անբացատրելի քախծութեամբ. նոսրաները կապոյտ երկիւմբը կը կանչեն...

Տարօրինա՛կ բան՝ ճառագայթ մը. ազօտ, գորշախառն ճառագայթ մը, տատամստ...:

Սենեակիս խեղճ իրերը ճառագայթին կը նային, ցուրտ, երկչոտ հրնուանքով մը. պատուհանը երկբայող գուարքութեամբ մը կը մեկամաղձօտի: Ո՛չ, չի՛ կրնար տեսլ. որքա՛ն պղտոր է երկիւմբէն իջնող ճառագայթը, հիմա պիտի նուաղի...:

Վերի հատուածներուն մէջ ներկայ են տպաւորապաշտ արւեստին յատկանիշներէն շատեր, — 1) Կը նկարագրուին պահեր եւ այդ պահերէն ստացուող տպաւորութիւնները, — «Հովին ձայնը կ'անցնի՛ անցեալով լեցուն», «նոսրաները կապոյտ երկիւմբը կը կանչեն», «պատուհանը կը մեկամաղձօտի», 2) Գրութիւնը ամբողջ պատկեր եւ զգացում է, — «Գիշերը կը տժգունի, կը հալի», «ճրագը կը թոռմի», «երազուն խրճիթ մը», «անհունը բաղձալու տառագանք», 3) Իր անձնական կարծիքէն՝ բխող պատճառներով կը բացատրէ հեղինակը շատ մը երեւոյթներ, — «Որին իրականութիւնը կը պոռայ», (որեւէ կապ չի կրնար գոյութիւն ունենալ որիին կանչին եւ իրականութեան միջեւ, բայց հեղինակը կը տեսնէ՛ կապ մը, որ ի՛ր միտքին մէջ կայ միայն), «իրերը ճառագայթին կը նային» (իրերուն եւ ճառագայթին միջեւ ոչ մէկ կապ կայ. ինք՝ հեղինակն է, որ կը նայի իրերուն եւ կը տեսնէ զանոնք՝ երբ անոնց վրայ լոյս, այսինքն՝ ճառագայթ իյնայ: Կապը՝ հեղինակին եւ իրերո՛ւն միջեւ է, բայց հեղինակը այդ կապը կը փոխադրէ իրերուն եւ ճառագայթին միջեւ):

8.- ԳԵՐԻՐԱՊՈՒՇՏՈՒԹԻՒՆ

Գերիրապաշտութիւնը ծայրայեղ դժգոհութեան եւ ընդունւած բոլոր արժէքներուն հանդէպ արհամարհանքի հասնող ըմբոստութեան շարժում մըն էր: Համաշխարհային Առաջին մեծ պատերազմէն ետք, յատկապէս երիւսասարդ մտաւորականներու եւ արւեստագէտներու մօտ ծայր տուող ընդհանուր յուսախարութեան եւ

դժգոհանքին ազդեցութեան տակ զարգացող շարժում մըն էր գեր-
իրապաշտութիւնը: Գերիրապաշտները կը հակադրուէին ամէն բա-
նի, կ'արհամարհէին ամէն արժէք, կ'անտեսէին ամէն նուիրակա-
նութիւն: Իրենցը անսանձ ազատութեան ձգտող ուղղութիւն մըն
էր. կողմնակից էին արուեստագէտին բացարձակ ազատութեան ա-
մէն մարզի մէջ. չկար օրէնք, չկար աւանդութիւն, չկար անցեալ,
այլ կար միայն արուեստագէտին հանճարէն եւ ազատութենէն բխող
«իրականութիւն»ը, այսինքն՝ գերիրականութիւնը, այսինքն՝ նոր
եւ տարբեր ու բարձր իրականութիւն մը:

Գերիրապաշտներուն համար՝ այս գերիրականութեան հաննե-
լու կերպը՝ մարդկային միտքն (ու հոգին) ամբողջովին ազատ ձգեւն
էր, եւ ներկայացնելն էր թէ ինչպէս կը բանի ան. կարելի չէր ճանչ-
նալ (գեր)իրականութիւնը՝ առանց միտքին (եւ հոգիին) վրայէն
վերցնելու ազդեցութիւնը բարոյական թէ այլ նկատումներու՝ ու-
րոնք կը կաշկանդէն մարդկային միտքն ու հոգին եւ արգելք կ'ըլլան
որ մարդ զգայ ու տեսնէ բուն իրականութիւնը՝ գերիրականութիւ-
նը: Հետեւաբար, գերիրապաշտները կը ձգտէին վերցնել իրենց միտ-
քին եւ զգացումներուն վրայէն հսկողութիւնը իրենց տրամաբանու-
թեան եւ բարոյական ու գեղագիտական նկատումներուն, եւ բա-
ցարձակօրէն ազատ ձգել իրենց միտքն ու զգայնութիւնները, որ
անոնք բանին ու բխին անկաշկանդ կերպով, խառնիխուռն, աննպա-
տակ...:

Ահա թէ ինչո՞ւ գերիրապաշտներուն գործերը եղան, յաճախ,
արտառոց ըլլալու աստիճան տարօրինակ, զարտուղի, քմահաճ, ան-
կազմակերպ: Անոնց գործերը ենթագիտակցական, բնադրային, ան-
պատասխանատու արտայայտութիւններու կուտակումներ էին յա-
ճախ:

Գերիրապաշտներուն ոճը՝ ոճ մը չունենալն էր, ամէն ոճէ
տարբեր ըլլալն էր. անոնք իրենք-իրենց արտօնած էին ամէն բան
ընել:

Հայկական գրականութեան մէջ գերիրապաշտ հակումներ
ցոյց տուող էջեր ունին Շ. Շահնուր եւ ուրիշներ. (Հայ գրողներուն
գերիրապաշտութիւնը եղած է անբաղդատելիօրէն աւելի զուսպ եւ
ուրեմն՝ աւելի գիտակցուած, ղեկավարուած):

Ահա հատուածներ Շ. Շահնուրի «Նահանջը...» վէպէն.—

«Մեր այն թագաւորը, որ կը կոչուէր Արգար, Գագիկ կամ
Խոսրոյ, հաւաքեց իր երկրին բոլոր այն անձերը, որոնց համար կ'ը-

սէին թէ խելացի են ... ու ջարդեց: ... Յետոյ պահանջեց որ Ար-
գարին երգ մը գրուի: Ամէն ոք եկաւ ու երգեց ի՛ր երգը: Չհաւանցաւ
ո՛չ մէկը, որովհետեւ խուլ ըլլալուն լաւագոյն հասկացողութիւնը
ունէր...»

Յաջորդ թագաւորը, որ կը կոչուէր Արգար, Գագիկ կամ
Խոսրոյ՝ կոյր էր: ... Ան արօրը կը լծէր ու ... երկա՛ր, երկար ա-
կօսներ կը բանար մշուշին վրայ ... , եւ բուռ-բուռ կը ցանէր ներ-
քին ձայներ եւ լուսիւն...»

Ըսի թէ կոյր էր ան. եւ որպէսզի լաւ տեսնէ՝ իր ամբողջ գա-
հակալութեան ընթացքին թռչնիկի մը երկու պատիկ թեւերը անցուց
իր ականջներուն:

Իր որդին սակայն, որ կը կոչուէր Արգար, Գագիկ կամ Խոս-
րոյ, սիրեց Գեղեցիկը: Հրամայեց որ իր մարդիկը մտնեն ամէն
տունէ ներս եւ սպաննեն այդ ընտանիքին է՛ն սիրական անձը ... :
Ամբողջ երկիրը եղաւ սգաւոր, գմայլելի, վեհ, ազնուադրոյմ: Մաք-
րութիւն, մաքրութիւն: Մնան հանճարներ...»

Թագաւորը չհաւանցաւ իր քաղաքները, անոնց բթամատները,
շուրջի ակնարկները — հրամայեց որ անմիջապէս նորոգութիւննե-
րու սկսին ամպերու վրայ:

Հրամայեց որ իր հպատակներէն ո՛չ մէկը նայի երջանկու-
թեան կռնակին...»

Հրամայեց որ ո՛չ ոք սկսի հաշուել հարիւրմէկէն մեկներով:

Վերի հատուածին մէջ կան գերիրապաշտ արուեստի յատ-
կանիչներ, — 1) Գրութիւնը ծայրայեղ ըմբոստացում մըն է Անց-
եալին հանդէպ. կը հեզնէ եւ ամբողջովին կը մերժէ այդ անցեալը, —
«Թագաւորը խուլ ըլլալուն լաւագոյն հասկացողութիւնը ունէր»,
«որովհետեւ թագաւորը Գեղեցիկը կը սիրէր՝ ամէն ընտանիքէ
սպաննել տուաւ է՛ն սիրական անձը», եւ եղաւ «մաքրութիւն: Մնան
հանճարներ...», 2) Արտայայտուելու անսովոր ձեւեր կան, — «Թա-
գաւորը չհաւանցաւ քաղաքին... բթամատները, քաղաքին շուրջի
ակնարկները», 3) Հեղինակը ազատօրէն, առանց յատկապէս կազ-
մակերպուած շարքի մը հետեւելու կ'արտայայտէ իր միտքերը. ինք-
զինք ազատ կը զգայ մասնաւոր տրամաբանական կարգ մը չընելու
իր յաջորդաբար յայտնած զաղափարներուն մէջ. սովորաբար են-
թագիտակցական է (այսինքն՝ գիտակցօրէն գրուած չէ) կապը յա-
ջորդական արտայայտութիւններու միջեւ:

Դ. ՄԱՍ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ԹՌՌԻՑԻԿ ԱԿՆԱՐԿ)

Մ Ո Ւ Տ Ք

Հայկական «գրականութիւնը» կարելի է բաժնել վեց գլխաւոր շրջաններու .

Ա.— ԱՒԱՆԴԱԿԱՆ ՇՐՋԱՆ, սկիզբէն մինչեւ Գիրերու Գիւտը, Ե դար, Ք. Ե. (Ժողովրդական բանահիւտութիւն, — առասպել, դիւցազնավէպ, հեքիաթ, եւայլն) :

Բ.— ՀԻՆ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ, Ե—ԺԱ. դարու վերջը՝ Գիրերու Գիւտէն մինչեւ Ռուբինեան Հարստութեան հիմնումը. (եկեղեցական գրականութիւն՝ կրօնական բովանդակութեամբ, եկեղեցական տեսակներով եւ ձեւերով : Պատմագրութիւն : Լեզուն՝ գրաբար) :

Գ.— ՄԻՋԻՆ ՀԱՅՅԵՐԷՆԻ ՇՐՋԱՆ, ԺԱ—ԺԲ. դար՝ Ռուբինեան Հարստութեան հիմնումի շրջանէն մինչեւ անկումին (1080—1375) յաջորդող երեք դարերը, այսինքն՝ մինչեւ 1700—ի առեւնները. (Գրականութեան աշխարհականացման շրջան՝ արդիւնք քաղաքներու աճման հետեւանքով յառաջ եկած հայկական վերածնունդին, ինչպէս նաեւ հիմնումին Ռուբինեան Հարստութեան, որ երկրին իշխանութիւնը կու տար աշխարհականներու : Զգտում դէպի կեանք եւ բնութիւն : Գրական նոր նիւթեր եւ տեսակներ՝ ժողովրդական լեզուով) :

Դ.— ՆՈՐ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ, ԺԲ—ԺԹ. դար, այսինքն՝ 1700—էն մինչեւ 1825—ի շրջանները. (եկեղեցական գրականութեան վերածնունդ՝ գրաբարով, յատկապէս Մխիթարեաններու մասնակցութեամբ, թէեւ կան ժողովրդական լեզուով գրողներ ալ. հայ աշխարհական իշխանութիւն գոյութիւն չունի : Վանքերն են մշակութային կեդրոնները) :

Ե.— ՆՈՐ ՇՐՋԱՆ, ԺԹ դարու սկիզբներէն մինչեւ 1920՝ Առաջին Մեծ Պատերազմին վախճանը. (Աշխարհաբարը կը դառնայ

գրական լեզուն ու կը հասնի զարգացումի բարձր մակարդակի . կ'արտադրուին մեծարժէք գործեր : Կան երկու հատուածներ, — Արեւմտահայ եւ Արեւելահայ՝ իրենց լեզուներով) :

Զ.— ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ, 1920—էն մինչեւ մեր օրերը. (կան երկու հատուածներ, 1.— Սփիւռքի գրականութիւն՝ շարունակումը Արեւմտահայ գրականութեան, եւ 2.— Հայաստանեան գրականութիւն՝ շարունակումը Արեւելահայ գրականութեան) :

Ա.— ԱՒԱՆԴԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ուրարտական սեպագիր արձանագրութիւնները (որոնց ամէնէն հինը Թ. դարէն է՝ Ք. Ա.), Հայաստանի գրաւոր մշակոյթին սկիզբը կը կազմեն եւ կը հասնին մինչեւ Զ. դար (Ք. Ա.) : Զ. դարէն մինչեւ Գիրերու Գիւտը (406, Ք. Ե.) երկարող շուրջ տասնութէկ դարերու շրջանէն մեզի չեն հասած գրաւոր արձանագրութիւններ : Խորհողներ կան թէ Գիրերու Գիւտէն առաջ (Ե. դար Ք. Ե.) Հայերը ունեցած են գիր եւ գրականութիւն, բայց ատոնք ամբողջովին կորսուած են քաղաքական, ընկերային եւ պատերազմական վերիվայրումներու հետեւանքով : Այս տեսակէտը պաշտպանողներուն գլխաւոր փաստը այն է, որ գրաբար լեզուն բարձրօրէն մշակուած, բարդ միտքեր եւ վիճակներ արտայայտելու կարողութեամբ օժտուած լեզու մը եղած է Գիրերու Գիւտին առաջին օրէն իսկ, եւ անհամոզիչ պիտի ըլլար ենթադրել թէ գրաբարը կրնար յանկարծօրէն այդքան զարգանալ առաջին գրողներուն գրիչին տակ՝ առանց որ հայ ժողովուրդը գրաւոր լեզու ունեցած ըլլար նախապէս :

Ուրիշներ այս փաստը չեն ընդունիր. անոնք չեն խորհիր թէ անհրաժեշտ է որ լեզու մը գիր ունենայ զարգանալու համար : Ըստ ասոնց՝ հայերէնը սեփական գիր չէ ունեցած Գիրերու Գիւտէն առաջ :

Կայ երրորդ տեսակէտ մը եւս, որուն պաշտպանները կը խորհին թէ Մեսրոպէն առաջ գոյութիւն ունեցած են ո'չ թէ հայերէն գիրեր՝ այլ հայկական նշանագրեր, որոնք գործածուած են հայերէն գրելու համար. (նշանագիրը իմաստ մը ներկայացնող դժապատկեր մը կամ գիրերու միացում մըն է) :

Հայ հին բանահիւտութենէն մեզի հասած են փշրանքներ միայն, առաւելաբար Մ. Խորենացիի «Հայոց Պատմութիւն» գործին միջոցով. բայց այդ փշրանքներն իսկ բաւարար են ցոյց տալու հայ-

կական բանահիւսութեան գրական մեծ արժէքը: Այդ բեկորները կը մատնանշեն արուեստի խորունկ հասկացողութիւն, ինչպէս նաեւ ինքնասպառնութիւն. (տե՛ս գիրքին սկիզբը):

Բ. ՀԻՆ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

Գիրքերու Գիւտէն ետք Մ. Մաշտոց եւ իր գործակիցներն ու աշակերտները կը բոլորեն թարգմանական եւ մշակութային եռուն շրջան մը, որ ծանօթ է որպէս «Ոսկեդար»: Թարգմանութիւնները, որոնք կը գրուեն շատ կարեւոր մէկ մասը արտադրուած գործերուն, կրօնական գիրքեր էին մեծ մասով: Այս մարզին մէջ նշանաւոր են Մաշտոցը, Սահակ Պարթեւ Կաթողիկոսը, Կորիւնը, Եզնիկ Կողբացին, Դաւիթ Անյաղթը, եւ ուրիշներ:

Այս սկզբնական շրջանի բանաստեղծութիւնը, որ նոյնպէս կրօնական էր, կը բովանդակէ շարականներ, մաղթանքներ, տաղեր, մեղեդիներ: Սահակ Պարթեւն ու Մեսրոպ Մաշտոցն են, որոնք գրած են առաջին կրօնական բանաստեղծութիւնները՝ հայերէն լեզուով եւ տառերով:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ կաթողիկոսը, բացի թարգմանութիւններէ եւ շարականներէ՝ գրած է նաեւ «Կանոնադրութիւն» մը՝ առաջնորդներու, եպիսկոպոսներու, քահանաներու համար:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ունի խրատական «Թուղթեր» ուղղուած ժողովուրդին, ինչպէս նաեւ շարական-բանաստեղծութիւններ: Իրեն կը վերագրուի նաեւ «Մաշտոց» անունով ծանօթ ծէսերու գիրքին թարգմանութիւնը:

Սահակը, Մեսրոպը եւ իրենց աշակերտներն ու գործակիցները կոչուած են քարգմանիչներ:

ԿՈՐԻՒՆԸ նշանաւոր է իր «Վարք Մաշտոցի» գրուածքով, որ Մեսրոպի կեանքն ու գործը կը ներկայացնէ: «Վարք Մաշտոցի»ն այս շրջանի սակաւաթիւ ինքնագիր երկերէն մէկն է:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻՆ գրած է «Եզժ Ազանդոց»ը, որ բանակոխ մըն է, եւ կը ջանայ ցոյց տալ հեթանոսական հաւատալիքներու, քրիստոնէայ աղանդաւորներու տեսակէտներուն եւ յունական շատ մը փիլիսոփայութիւններու սխալ ըլլալը:

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ փիլիսոփայէն մեղի հասած է շատ վիճբան: Կը պատմուի թէ Բիւզանդիոնի մէջ՝ իր պերճախօսութեամբ պապանճուածի մատնէր է իրեն հետ բանավէճի մտնող բոլոր յոյն հետորներն ու փիլիսոփաները:

Այս շրջանին պատմագրութիւնն ալ կը ստանայ մեծ դարկ: Նշանաւոր են Ալաթանգեղոսը, Ղազար Փարսեցին, Փաւստոս Բիւզանդը, Մովսէս Խորենացին, Եղիշէն եւ ուրիշներ՝ Ե. դարուն: Է. դարուն երեւան կու դան այլ պատմագիրներ, — Սէրէոսը, Մովսէս Կաղանկատուացին, Յովհան Մամիկոնեանը, եւայլն:

ԵՂԻՇԷՆ նշանաւոր է իր «Վարդանանց Պատերազմի մասին» գործով, որ պատմագրութիւն ըլլալէ աւելի՝ վէպ ու արձակ բանաստեղծութիւն է:

Ղ. ՓԱՐՊԵՑԻՆ գրած է «Հայոց Պատմութիւն» մը, սկսելով քրիստոնէութեան մուտքէն՝ Հայաստան, հասնելով մինչեւ Վահան Մամիկոնեանի մարզպետ կարգուիլը:

Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ կոչուած է պատմաւախր: Ան ջանացած է վերակազմակերպել հայ ժողովուրդին անցեալի՝ աւելի քան երկու հազար տարուան մութ եւ անծանօթ կեանքին պատմութիւնը՝ իր «Հայոց Պատմութիւն» գիրքին մէջ:

Յետադային, մէկ կողմէ՝ Բիւզանդական կայսրութեան կրօնա-քաղաքական ճնշումներուն դիմադրելու համար, միւս կողմէ՝ աղանդաւորական շարժումին դէմ կռուելու անհրաժեշտութեան որպէս հետեւանք՝ կը զարգանայ դաւանաբանական գրականութիւնը: Այս եկեղեցական-կրօնական հարցերով եւ վէճերով զբաղող գրականութիւնը կը շարունակէ իր գերակշիռ գոյութիւնը մինչեւ Ժ. դար, մինչեւ Հայկական վերածնունդին սկիզբը:

Չ. դարուն կը վերանորոգուի «Հայոց Տոմարը» եւ գործածութեան մէջ կը մտնէ «Տալիական թուականը»:

Է—Թ. դարերուն կը զարգանայ եկեղեցական բանաստեղծութիւնը: Պատմագրութեամբ սկսած աշխարհականացումը գրականութեան մէջ՝ կը կասի, թէ եւ կը կատարուին թարգմանութիւններ՝ աշխարհական նիւթեր շօշափող. օրինակ՝ Եղովրոսի առակները:

Է. դարէն, որպէս ոչ-կրօնական գրականութեան նմուշ, մեզի հասած է միայն Դաւթակ Քերթողին մէկ վիպերգը:

է. դարուն մասնաւոր ուշադրութեան արժանի է Անանիա Շիրակացին, որ հին դարերու միակ հայ գիտնականն է:

Ժ. դարուն, բանաստեղծութեան մէջ, ամէնէն մեծ դէմքը կը հանդիսանայ Գրիգոր Նարեկացին, որուն գործերը կը նշեն հայկական վերածնունդին սկզբնաւորումը:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ նշանաւոր է իր «Նարեկ» անունով ծանօթ աղօթագիրքով, որ շքեղ, որորակաւոր եւ յորդուն ոճով գրուած արձակ աղօթքներու շարք մըն է՝ բարբախուն մեծատրոփ բանաստեղծականութեամբ:

Ժ. դարուն է, որ կազմաւորուել կը սկսի «Սասմայ Ծուր» հերոսավէպը:

Ժ. դարու առաջին քառորդէն ետք Հայաստան կը ճանչնայ խաղաղութեան շրջան մը: Յառաջ կու գան առեւտրական կարեւոր քաղաքներ: Անին կը դառնայ մեծ կեդրոն: Առեւտրական դասը յատկապէս կը սկսի դիպել հարստութիւն:

Գ.- ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՇՐՋԱՆ

ԺԱ. դարուն նշանաւոր են աստուածաբան-փիլիսոփայ Գրիգոր Մագիստրոսը, պատմիչ Արիստակէս Լաստիվերացին, որոնք կը գրեն գրաբարով:

ԺԲ. դարուն արդէն կազմաւորուած է Ռուբինեան (Կիլիկեան) թագաւորութիւնը: Աշխարհական իշխանութեան մը կազմումը թափ կու տայ դրականութեան աշխարհականացումին: Հայերէն գրական լեզուն (գրաբարը) Ե. դարէն մինչեւ ԺԲ. դար այնքան փոխուած է ժողովուրդին բերնին մէջ՝ որ տարրեր եւ ուրոյն լեզուի մը վերածուած է: Ռուբինեան թագաւորութեան շրջանին՝ այս ժողովրդական, «աշխարհիկ» լեզուն կը սկսի գործածուել որպէս պաշտօնական գրաւոր լեզու: Հրովարտական եւ դաշնագիրներ կը խմբագրուին ա՛յդ լեզուով: Գրաբարը կը մնայ մատենագրութեան, վանքերու եւ կրօնքի լեզուն:

ԺԳ. դարուն, Կիլիկիոյ մէջ նշանաւոր են Ներսէս Լամբրոնացին, Կիլիկիայէն դուրս՝ Մխիթար Գօշը (հեղինակը՝ «Դատաստանագիրք»ին) եւ ուրիշներ, որոնք կը շարունակեն գրաբարով գրել:

Այս նոյն դարուն անհնաւոր դէմքերէն է Ներսէս Շնորհալին, որ հեղինակն է գրաբար բազմաթիւ չափածոյ գործերու, որոնց ա-

մէնէն նշանաւորն է «Ողբ Եղեսիոյ»: Շնորհալին ձգած է աւելի քան հարիւր հանելուկ՝ չափածոյ եւ ժողովրդական բարբառով:

ԺԴ—ԺԶ. դարերուն է, որ յառաջ կու գայ բուն աշխարհիկ գրականութիւնը՝ ժողովրդական լեզուով. (այս ժողովրդական լեզուն ծանօթ է «Միջին Հայերէն», «Կիլիկեան Հայերէն», «Նախնեաց Ռամհորէն» անուններով): Այս շրջանին, սակայն, չընդհատուի եկեղեցական-կրօնական գրականութիւնը, եւ նոյն ատեն կը շարունակուի ժողովրդական բանահիւսութիւնը:

Աշխարհիկ գրականութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւեն առակախօսութիւնը, պանդխտութեան եւ սիրոյ երգերը, եւ քնարերգական այլ տաղեր: Նշանաւոր են բանաստեղծներ՝ Պրիկը, Կոստանդին Երզնկացին, Յովհաննէս Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամարցին, Նահապետ Քուչակը, որոնց երգերուն նիւթերն են բնութիւնը, սէրը, պանդխտութիւնը, փիլիսոփայական խոհերը:

Ականաւոր պատմագիրներ են Վարդանը, Կիրակոս Գանձակեցին, Մտեփաննոս Օրփէլեանը, որոնք կը գրեն գրաբարով:

ԺԳ—ԺԶ. դարերուն մեծագոյն արձակագիրն է առակախօս Վարդան Այգեկցին: (Թէ՛ Գօշի եւ թէ՛ Այգեկցիի առակներու ժողովածուները երբեմն կը կրեն «Աղուեսագիրք» անունը. եւ այս, թե՛րեւս այն պատճառով որ առակներուն գլխաւոր դերակատարները յաճախ աղուէսներն են):

1512-ին սկիզբ կ'առնէ հայկական տպագրութիւնը:

Գ.- ՆՈՐ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

ԺԷ—ԺԸ. դարերուն Հայաստան կ'իյնայ թրջական եւ պարսկական լուծին տակ: Տիրող քաղաքական եւ ընկերային դժուարին պայմաններուն հետեւանքով՝ հայկական գրականութեան զարգացումը մասնաւորապէս ԺԷ. դարու առաջին կէսին կը տուժէ մեծապէս: Երկրորդ կէսին կը սկսի նոր աշխուժացում մը՝ կեդրոն ունենալով Տաթևի եւ Գանձասարի վանքերը: Հայկական վերածնունդը ԺԷ. դարուն սկիզբը տկարանալէ ետք՝ վերջին անգամ մըն ալ կը փայլատակէ յանձին Նաղաշ Յովնաթանի եւ Սայեաթ Նովայի, որոնք մեծարժէք աշուղ-բանաստեղծներ են:

ՍՍՅԵԱԹ ՆՈՎԱՆ (1717-1861) եղած է անդուգական նուագող, հմայիչ ձայնով օժտուած երգիչ, ստեղծագործող աննման երաժիշտ: Տաղեր յօրինած է երեք լեզուով, հայերէն, վրացերէն, ասորայէճաներէն: Աւելին՝ Սայեաթ Նովան բացած եւ հիմնաւորած է ուղին՝ աշուղական արեւելեան նոր ձեւերու եւ գայրոցներու: Մի-րոյ եւ սիրոյ տառապանքին անկրկնելի վարպետն է ան:

1717-ին կը հիմնուի Մխիթարեան Մխարանութիւնը:

Ժէ—ԺԸ. դարերուն կը հաստատուին սպարոններ Վեհեօիկի, Հոռմի, Փարբլի, Պոլխի, Իգմիրի, Բեթերգուրկի մէջ:

1794-ին, Մատրասի մէջ (Հնդկաստան) լոյս կը տեսնէ հայերէն առաջին սրբրեւրականը՝ «Աղղարար»ը:

Մխիթարեան վանքերը՝ Վեհեօիկ եւ Վիեննա, կը դառնան մեծ կեդրոններ: Կարեւոր դէմքերէն են, — Մխիթար ԱՐԲԱՀԱՅՐԸ (հիմնադիրը Մխիթարեան Մխարանութեան. ճգած է բազմաթիւ աշխատութիւններ. մեծ դարկ անուած է հայկական սպարութեան եւ մատենագրութեան), ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉԵԱՆԸ (գործերն են՝ «Նուագարան Օրհնութեանց»ը, «Աղղային Պատմութիւն»ը): ՀԱՅՐ ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃԵԱՆԸ (ձգած է պատմական եւ տեղագրական գործեր, ինչպէս՝ «Դարապարտում»ը), ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ (հայ դպրութեան ամէնէն ուշագրաւ դէմքերէն մէկը. մեծ հմտութեամբ եւ տաղանդով գրաբարի վերածած է հին դասական մատենագրութեան գլուխ-գործոցներէն շարք մը ամբողջ, ինչպէս՝ Հոմերոսի «Իլիական»ն ու «Ոդիսական»ը, Վիրգիլիոսի «Մշակահանք»ը, Էւայլն: Գրած է «Հայկ Դիւցաղն» դիւցազներգական ողբերգութիւնը՝ տաղաչափեալ, գրաբար), ՀԱՅՐ ԵՂՈՒԱՐԴ ՀԻԻՐ-ՄԻԻՉԸ (Թարգմանած է Վիրգիլիոսի «Ենէական»ը եւ ուրիշ գործեր: Ունի «Աշխարհաբարէ գրաբար բողբիջ» մը, ընդարձակ «Դիցաբանութիւն» մը, Էւայլն: Հրատարակած է բանաստեղծութիւններ):

Հայկական նոր գրականութիւնը կը սկսի ԺԹ. դարու երկրորդ քառորդէն:

Ե.- ՆՈՐ ՇՐՋԱՆ

Այս շուրջ հարիւր տարուան շրջանը կարելի է բաժնել երկուքի, — Մինչեւ 1870-75՝ «Ձարթօնքի Շրջան», եւ 1875-էն մինչեւ 1920՝ «Արդի Շրջան»:

ՄՈՒՏՔ

Տպագրութեան դիւտը (1455) մէկն է այն կարեւորագոյն ազդակներէն, որոնք սատարած են գրականութիւններու տարածումին եւ ժողովրդականացման: Եւ որովհետեւ Օսմանեան իշխանութիւնը չէր արտօնած տպարաններու հաստատումը իր սահմաններէն ներս, ու նաեւ՝ որովհետեւ Օսմանեան լուծը անկարելի կը դարձնէր արւեստներու զարգացումն ու զոյատեւումը՝ Արեւմտահայ նոր գրականութիւնը ծնունդ առաւ հոն՝ ո՛ւր կարելի էր մամուլ ունենալ եւ բաւարար ազատութիւն, այսինքն՝ օտար հողի վրայ, Եւրոպա եւ այլուր: Գրեթէ նոյնն էր նաեւ կացութիւնը Արեւելահայ գրականութեան, թէեւ տարբեր ազդեցութեանց եւ տարբեր պայմաններու տակ. Թիֆլիսը, Բեթերգուրկը եւ Մոսկուան էին մշակութային կեդրոնները:

Յետագային, Օսմանեան հողի վրայ՝ Իգմիրը (1759) եւ Պոլիսը (1767) կ'ունենան իրենց տպարանները եւ կը մասնակցին հայկական նոր գրականութեան ստեղծումին, հիմնաւորումին եւ ծաղկումին: Հայկական շրջաններէն՝ Վանը, Խարբերդը, Երեւանը կը բերեն իրենց մասնակցութիւնը:

Վանքերը, որոնք մինչ այդ մտաւորական միակ կեդրոններն էին, հետզհետէ կը կորսնցնեն իրենց մշակութային-գրական կարեւորութիւնը: Աշխարհականներ ձեռք կ'առնեն մշակութային-գրական կեանքին առաջնորդութիւնը. կը ծնի նոր գրականութիւնը. երկար պայքարէ մը ետք կը յաղթանակէ աշխարհաբարը (որ Միլին Հայերէնի, բարբառներու եւ գրաբարի միաձուլումն է) եւ կը դառնայ գրական լեզու: Գրաբարը կը մնայ որպէս եկեղեցական արարողութիւններու եւ հին մատենագրութեան լեզուն:

ԶԱՐԹՕՆՔԻ ՇՐՋԱՆ (1820-1875)

Թանգիմաթի հրատարակումը 1839-ին, կը բերէ նուազ ծանր պայմաններ Թուրքիոյ հայերուն համար: Պոլսոյ հայերը կը սկսին գրաւել բարձր դիրքեր, կը դիզեն հարստութիւն:

Թէ՛ Եւրոպայէն վերադարձող եւ թէ՛ տեղւոյն վրայ զարգացում ստացող հայ երիտասարդները՝ գրականութենէ աւելի կը նւիրուին ազգային լուսաւորութեան գործին, — կը բացուին գլորոց-

ներ Պոլիս թէ հեռուոր հայկական գաւառներուն մէջ, կը կատարւին թարգմանութիւններ, կը խօսուին ճառեր, կը հիմնուին մշակութային թէ այլ կազմակերպութիւններ, կը հրատարակուին թերթեր, կը ստեղծուի ազգային-մշակութային եռուզեռ:

Այս նախապատրաստական շրջանը, որ կ'երկարի մինչեւ 1875-ական թուականները՝ չունի գեղարուեստական լուրջ մտահոգութիւններ: Գրողները, որոնց շարքին կան բազմաթիւ տաղանդաւոր անհատներ, գրականութիւն արտադրելէ աւելի՝ իրենց գրութիւններով (եւ գործունէութիւններով) կը ձգտին նոյն երազներուն եւ գաղափարականներուն շուրջ համախմբել հայերը, զանոնք կազմակերպել, զարգացնել, անոնց ազգային-մշակութային ինքնութիւն տալ եւ վերածել զանոնք իւրայատուկ զիմազիծ ունեցող ազգութեան մը: Արդարեւ, ժ.թ. դարու սկիզբը, հայկական պետականութեան անկումին յաջորդող հինգ երկար դարերու ստրկութենէն, կոտորածներէն, տեղահանութիւններէն ետք՝ հայ ժողովուրդը կորսնցնել սկսած էր՝ ազգութեան մը համար անհրաժեշտ եղող տրեւալները: Պէտք էր անոր տալ նախ՝ միասնական նոր լեզու մը, ապա՝ ընկերային կազմակերպութիւն եւ հաստատութիւններ, ազգային ինքնագիտակցութիւն: Ահա ա՛յս աշխատանքին է, որ կը լծուի այս շրջանի մտաւորականութիւնը. ու կասկած չկայ թէ նման բազմապիսի եւ ծանրածանր առաջադրանքներով ճամբայ ելած մտաւորականութիւն մը չէ՛ր կրնար զուտ գրական-արուեստագիտական նպատակներ հետապնդել:

Այս նախապատրաստական շրջանը կը կոչենք Զարթօնքի Շրջան:

Արեւմտահայաստանի մէջ, Զարթօնքի Շրջանի գլխաւոր դէմքերն են, — Յովհաննէս Տէրոյենց, Խաչատուր Միսաքեան, Նահապետ Ռուսինեան, Նիկողոս Զօրայեան, Ստեփան Ոսկան, Գրիգոր Օտեան, Կարապետ Իւթիւճեան, Յակոբ Պէյ Պալեան, Յովհաննէս Հիսարլեան, Սրապիոն Հեքիմեան, Խրիմեան Հայրիկ, եւ այլն: Արեւելահայաստանի մէջ, ուր կացութիւնը առաւել կամ նուազ չափով նոյնն էր՝ գլխաւոր դէմքերն են, — Յարութիւն Ալամդարեանը, Մեսրոպ Թաղիադեանը, Խաչատուր Աբովեանը, Գարբիէլ Տէր-Յովհաննէսեանը, Գէորգ Դողոսեանը, Ստեփաննոս Նազարեանցը, Ռափայէլ Պատկանեանը, եւ այլն:

Թ Ե Ր Թ Ե Ր Ը

Առաջին հայ գիրքը՝ «Պարզատումար»ը, տպուած է Վենետիկ, 1512-ին:

Շմաւոր քահանայ, 1794-ին, Մատրասի մէջ կը հրատարակէ առաջին հայ լրագիրը՝ «Աղբարար»ը, քրքարով: Հայր Դուկաս Ինճիճեան 1812-ին, Պոլսոյ մէջ կը հրատարակէ առաջին աշխարհաբար թերթը՝ «Դիտակ Բիւզանդեան»ը: 1832-ին Պոլսոյ մէջ լոյս կը տեսնէ առաջին օրաթերթը՝ «Լրոյ Գիր Մեծի Տէրութեան Օսմանեան»ը: 1840-ին «Արշալոյս Արարատեանը», Իզմիր: 1842-ին «Բաղմալէպ»ը՝ բանասիրական եւ գեղարուեստական հանդէս, Վենետիկի մէջ: 1846-ին «Հայաստան» շաբաթաթերթը, 1852-ին՝ «Մասիս» օրաթերթը, 1856-ին՝ «Մեղու» երգիծաթերթը. նոյն տարին՝ «Նրեակը» ապա «Թատրոն»ը, բոլորն ալ Պոլիս: «Հանդէս Ամսօրեայն», Վիեննա, «Արծուի Վասպուրականի»ն՝ Վանի մէջ, ու տակաւին կան «Մարտ»ը, «Հիւսիսափայլ»ը, «Փունջ»ը, «Կոռնիկ»ը, «Փորձ»ը, «Մշակ»ը, «Արեւելեան Մամուլ»ը, «Երկրագունտ»ը, «Ծաղիկ»ը, «Շիրակ»ը, «Ազատամարտ»ը, «Շաւիղ»ը, «Նոր Դար»ը, «Բանասէր»ը, «Գրական եւ Իմաստասիրական Շարժում»ը՝ 1883, «Ուկրա»ը՝ 1884, «Հայրենիք»ը՝ 1891, «Ծաղիկ»ը՝ 1894, «Անահիտ»ը՝ 1898, «Հայ Հանդէս»ը՝ 1902, «Ռազմիկ»ը՝ 1905, «Մուրճ»ը, «Նոր Կեանք»ը, «Դաշինք»ը, «Հոսանք»ը, «Իզնատ Աղա»ն, «Շանթ»ը, «Ոստան»ը, «Մեհեան»ը, «Բարձրափայլ»ը, եւ այլն, եւ այլն:

Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ն Ք Ե Ր Ը

Օտար հողի վրայ յառաջ եկած մշակութային մեծ կեդրոններէն են Միլիթարեան վանքերը՝ Վենետիկ եւ Վիեննա: Միլիթարեանները բերած են իրենց մասնակցութիւնը հայ նոր գրականութեան հիմնումին՝ իրենց հրատարակութիւններով վերակենդանացնելով հայ պատմական անցեալը, թարգմանութիւններու միջոցով ժողովուրդը տեղեակ դարձնելով հին յունական եւ լատինական ստեղծագործութիւններուն եւ մտածողութեան, դպրոցներով, ուսումնասիրութիւններով եւ բառարաններով հայերէն լեզուին կազմաւորումն ու տարածումը գիւրացնելով, իրենց բանաստեղծական արտադրութիւններուն նպաստը բերելով հայկական գրականութեան ծաղկել սկսող անդամաստանին:

Մխիթարեան Մխարանութեան կարեւոր դէմքերն են՝ այս շրջանին, — Հայր Արսէն Այտրնեանը (հիմնադիր «Հանդէս Ամսօրեայ»ին), Հայր Յակոբոս Տաշեանը, Հայր Գարեգին Զարպիանելեանը, Հայր Արսէն Ղազիկեանը, Հայր Ղեւոնդ Ալիշանը, եւ այլն:

1843-ին կը սկսի հրատարակուիլ «Բաղմավէպ»ը՝ Վենետիկ, Հայր Ղ. Ալիշանի խմբագրութեամբ: Վիեննայի Մխիթարեանները կը հրատարակեն «Ներոպա»ն. (երկուքն ալ հանդէս են. «Բաղմավէպ»ը լոյս կը տեսնէ տակաւին):

ՊՈԼԻՍԸ

Արեւելահայ գրականութեան գլխաւոր կեդրոնը եղած է Թիֆլիսը, Արեւմտահայ գրականութեան՝ Պոլիսը, երկուքն ալ օտար քաղաքներ:

Պոլիսը եղած է բուն կեդրոնը Արեւմտահայ գրականութեան, որովհետեւ.

1.— Պոլիսը, վերջին դարերուն, դարձած էր տնտեսական եւ մտաւորական մեծադոյն կեդրոնը Օսմանեան պետութեան. եւրոպական ազդեցութիւններ մուտ գործած էին հոն հետզհետէ ածող թափով:

2.— Հայ գաղթականութիւն մը սկսած էր հոսիլ դէպի հոն: Ոմանք եկած էին ահամայ՝ պատերազմէ, բռնադաղթէ եւ հալածանքէ փախչելով. Պոլիս աւելի ազատ վայր մըն էր, չափով մը եւրոպական ըլլալուն համար ալ: Ուրիշներ եկած էին կամայ, որովհետեւ Պոլիսը կը խոստանար նիւթական բարգաւաճում՝ ըլլալով առեւտրական մեծ կեդրոն:

3.— Պոլիս ունեցած էր իր տպարանը (1767-ին) եւ յետոյ իր դպրոցները:

4.— Հոն յառաջ եկած հայ առեւտրական եւ ամիրայական ազդեցիկ դասակարգերը, որոնք արքունիքէն ներս ալ ձեռք ձգած էին բարձրագոյն սրաշտօններ, իրենց ազդեցութիւնը կը տարածէին մինչեւ հեռաւոր գաւառները:

5.— Պոլսոյ հայ պատրիարքութեան հիմնումը այդ քաղաքին կու տար մասնաւոր կարեւորութիւն. Պոլիսը կ'ըլլար նաեւ հայերու կրօնական կեդրոնը:

6.— Գաւառային կեդրոնները շատ հեռու էին իրարմէ եւ կըրնային իրարու հանդիպիլ միայն Պոլիս, որ այսպէսով կ'ըլլար նաեւ հայ ազգային միութեան կեդրոն մը:

7.— Եւրոպա ուսանելու գացած երիտասարդները կը վերադառնային Պոլիս, ու հոն կը տարածէին իրենց նոր գաղափարները, ու հոն է որ կը լծուէին աշխատանքի:

8.— Պոլսոյ մէջ էր որ կը հռչակուէր Ազգային Սահմանադրութիւնը. Պոլիսը կ'ըլլար նաեւ վարչական կեդրոն:

9.— Պոլիսը այն վայրն էր, ուր այլազան շրջաններէ եկող հայեր կը միախառնուէին օտար ազդեցութիւններու ներքեւ, եւ ճնշուող կու տային նոր լեզուի մը՝ Պոլսահայերէնին:

10.— Պոլիսը յարաբերութեան մէջ ըլլալով Արեւելահայ հատուածին հետ, կը հանդիսանար մշակութային կապը երկու հայկական հատուածներուն միջեւ:

ԻԶՍԻՐԸ

Իզմիրի գրականութիւնը թարգմանական է դրեթէ ամբողջութեամբ: Թարգմանուած գործերը կը տարածեն կարգալու վարժութիւնը, կը ծանօթացնեն եւրոպական գրականութիւնն ու գաղափարները: Մատթէոս Մամուռեան մեծագոյն դէմքն է Իզմիրի գրականութեան: 1759-ին հիմնուող տպարանը կարելի կը դարձնէ լրագիրներու հրատարակումը: Թերթերն են — «Արշալոյս Արարատեան», «Արեւելեան Մամուլ», «Արփի Արարատեան», եւ այլն: Իզմիր չկրցաւ կեդրոն դառնալ նաեւ անոր համար որ սերտ յարաբերութեան մէջ չէր գաւառներուն հետ:

ԱՐԴԻ ՇՐՋԱՆ (1870-1920)

Հայ նոր գրականութիւնը պէտք է իրապէս սկսած նկատել 1865-70-ի շրջաններէն, որովհետեւ ատկէ առաջ արտագրուածը առաւելաբար կրօնաշունչ կամ դաստիարակչական-ազգային ոգիով մշակուած միտումնաւոր գրականութիւն մըն էր՝ յաճախ զուրկ արուեստային արժանիքներէ: Գրաբարը տիրական էր:

Արեւմտահայ ղեղարուեստական գրականութիւնը կը սկսի Հայր Ղեւոնդ Ալիշանով («Յուշիկը Հայրենեաց»), Մկրտիչ Պէշիկ-Թաշեանով («Տաղք եւ Թատրերգութիւնք») եւ Պետրոս Դուրեանով («Տաղք եւ Թատրերգութիւնք»)՝ բանաստեղծութեան մէջ. Յակոբ Պարոնեանով, Արփիար Արփիարեանով եւ Գրիգոր Զոհրապով՝ արձակի մէջ:

Արեւելահայ գեղարուեստական գրականութիւնը կը սկսի Սաչատուր Աբովեանով, Միքայէլ Նալպանտեանցով, Ղապարոս Աղայեանով, Ռաֆֆիով, Գաբրիէլ Սունդուկեանցով:

Շուրջ միայն քառասուն տարի ընդգրկող այս ժամանակամիջոցը կը տեսնէ ծնիւն ու ծաղկիւր հոծ խումբ մը ամբողջ մեծատաղանդ արուեստագէտներու, որոնք ո՛չ միայն բարձրագոյն գեղեցկութեան մը կը հասցնեն հայերէն աշխարհաբարը, այլեւ հայ գրականութիւնը կը հարստացնեն միջազգային արժէք ունեցող բազմապիսի գործերով: Զարմանալիօրէն բեղուն շրջան մըն է ասիկա: Դարերու սարկութեանէն եւ տառապանքէն ետք, յանկարծ, կարծէք՝ հայ ժողովուրդը կը բանայ իր հանճարին մինչ այդ ճնշուած եւ զրապուած ընդյատակեայ ակերը, եւ ահա կը ժայթքեն ջուրերը ամէն ուղղութեամբ: Բազմատաղանդ երկեր կը յաջորդեն իրարու եւ հայ ժողովուրդը ոչ միայն կը հիմնէ իր ազգային նոր գրականութիւնը, այլ նաեւ զայն կ'օժտէ արուեստի ազնուաւորոյն արժանիքներով:

Ահա շարք մը կարեւոր անուններու եւ գործերու.

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ (Նուալք, Շիրակ, Այրարատ), ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՍԻԱՆԻ (Կոնստանդնուպոլիս, Վահան, Մատենադրութիւնք Մկրտիչ Պէշիկթաշեանի), ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ (Հրաւիրակ Արարատեան, Հրաւիրակ Երկիրն Աւետեաց, Պապիկ եւ Թոռնիկ, Հայ Գոյժ), Մ. ՄԱՄՈՒՌԵԱՆ (Հայկական Նամականի, Սեւ Լեռին Մարդը), ՆԱՐ-ՊԷՅ (Սառեքը Հայկական, Քնար Պանդխտին), ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ (Սեւ Հողեր, Վարդ եւ Շուշան, Թատրոն կամ Թշուառներ, Տաղք եւ Թատրերգութիւնք), ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ (Պաղտասար Աղբար, Մեծապատիւ Մուրացիաններ, Աղբային Ձոջեր, Շողոքորթը), Գ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ (Մանանա, Համով-Հոտով, Դրոց-Բրոց), ԵՂԻՍ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ (Իմաստասիրական Բառարան, Քերթուածներ), ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ (Կարմիր Ժամուց, Ոսկի Ապրջան, Հոգու Չաւակը, Հողվրտիք), ԳՐԻԳՈՐ ՁՈՀՐԱՊ (Խղճմտանքի Չայներ, Կեանքը Ինչպէս որ է, Լուս Յաւեր, Ծանօթ Դէմքեր, Էջեր Ուղեւորի մը Օրագրէն), ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ (Պատմուածքներ), ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ (Վարժապետին Աղջիկը), ՀՐԱՆԴ (Պանդուխտի Նամական, Շինականի Նամական, Պատմուածքներ), ՀՐԱՆԴ ԱՍՍՏՈՒՐ (Դիմաստուերներ), ՁԱՊԷԼ ԱՍՍՏՈՒՐ (Աղջկան մը Սիրտը, Յուլքեր, Պատմուածքներ, Որբու-

հին), ԱՐՇԱԿ ՁՈՊԱՆԵԱՆ (Թուղթին Փառքը, Արշալոյսի Չայներ, Թրթուամներ, Տղու Հոգիներ, Նահապետ Քուչակի Դիւանը, Գրական Դէմքեր), ՌՈՒԲԷՆ ՁԱՐԴԱՐԵԱՆ (Յայգալոյս), ԹԼԿԱՏԻՆՅԻ (Յովհ. Յարութիւնեան), -- (Մութ Անկիւններէ, Էնդի Դէմէն, Կտակը), ԵՐՈՒԽԱՆ (Կեանքին մէջ, Հարազատ Որդի, Ամիրային Աղջիկը), ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ (Հովուական Սրինգ, Սրբազան Քնար), ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆ (Հողեր, Հրաշալի Յարութիւնք, Կէս Գիշերէն մինչեւ Արշալոյս, Սէր, Հայերգութիւն, Տաղարան), ՍԻՍՄԱՆԹՕ (Դիւցազնօրէն, Հոգեւարքի եւ Յոյսի Չահեր, Կարմիր Լուրեր Բարեկամէս, Հայրենի Հրաւէր, Սուրբ Մեսրոպ), ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ (Սարսուռներ, Յեղին Սիրտը, Հեթանոս Երգեր, Հացին Երգը), ՄԻՍԱԲ ՄԵՏԱՐԵՆՅ (Ծիածան, Նոր Տաղեր), ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ (Կեղծ Հերոսներ, Չարըլը Արթին Աղա, Փանջուրի, Պատերազմ եւ Խաղաղութիւն, Թաղականին Կնիկը, Վաճառականի մը Նամականը), ՁԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ (Շնորհքով Մարդիկ, Սպասման Սրահին մէջ, Սկիւտարի Վերջալոյսները, Երբ Այլեւս Ձեն Սիրեր, Վերջին Բաժակը, Անձկութեան Ժամեր, Աւերակներուն Մէջ), ԻՆՏՐԱ (Տիրան Չրաքեան), - (Ներաշխարհ, Նոճատան), ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ (Քայքայում, Հայուհին, Կիլիկեան Արհաւիրքը, Չայնը Հնչեց, Անմահ Բոցը), ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ (Չիլինկիբեան), - (Բժիշկին Գրէն Փրցուած Էջեր, Բանաստեղծութիւններ), ՏԻԳՐԱՆ ՁԷՕԿԻՐԵԱՆ (Վանք, Հերոսը), ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ (Քիւֆէճեան), - (Խոնարհներ, Խորհուրդներու Մեհեանը, Երբ Պատանի են, Մնացորդաց, Երբ Մեռնիլ Գիտենք), Եւ այլն:

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ (Վէրք Հայաստանի, Պարապ Վախտի Խաղալիք), ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ (Մեռելահարցուկ, Սատանայի Պաշտօնական Մեծ Հանդէսը), ՍՄԲԱՏ ՇԱՀԱՉԻՉ (Լեւոնի Վիշտը), ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆ (Սօս եւ Վարդիթեր, Ցեցեր, Սկիզբն Երկանց), ՂԱՉԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ (Արութիւն եւ Մանուէլ, Երկու Քոյր, Քէօրօղլի), ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ (Պեպօ, Խաթաբալա, Քանդած Օճախ), ՌԱՖԻԻ (Յակոբ Մելիք-Յակոբեան), - (Ոսկի Աքաղաղ, Կայծեր, Սամուէլ, Խաչազոյի Յիշատակարանը), ՇԻՐՎԱՆ-ՁԱՏԷ (Ալեքսանար Մովսիսեան), - Նամուս, Քաոս, Ունէ՞ր Իրաւունք), ՄՈՒՐԱՅԱՆ (Գրիգոր Տէր-Յովհաննիսեան), - (Գէորդ Մարգպետունի, Ռուզան, Առաքեալը), ՆԱՐ-ԴՈՍ (Միքայէլ Յով-

Հաննիսեան), - (Պայքար, Աննա Սարոյեան, Մահը), ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (Անուշ, Գիքորը, Կաթիլ մը Մեղը, Թմկաբերդի Առումը), ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ (Արու-Հալա Մահարի, Սասմա Մհեր, Երգեր ու Վէրքեր), ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ (Ժայռ, Պատկերներ Թիւրքահայերի Կեանքից, Ըմբոստի Մահը), ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ (Տէր-Գրիգորեան), - (Մթնշաղի Անուրջներ, Փշէ Պսակ, Գիշեր եւ Յուշեր), ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ (Ազատութեան Ճանապարհին, Իմ Գիրքը), ԼԵՒՈՆ ՇԱՆԹ (Դերասանուհին, Կայսրը, Հին Աստուածներ, Հողիները Ծարաւի), ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ (Օրերի Պսակը, Երկիրներ եւ Աստուածներ, Անցորդը եւ իր Ճամբան, Նաւը Լեռան Վրայ), եւայլն:

Զ.- ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ (1920 -)

1920-էն ետք Հայ ժողովուրդը ինքզինք գտաւ բաժնուած երկու մասի, - Սփիւռք եւ Արդի (Խորհրդային) Հայաստան:

Առաջին տարիները եղան խարխափումի, պատշաճումի եւ ուղղորոշումի տարիներ. բայց շուտով պարզուեցաւ որ երկու հաստածներուն գրականութիւնները պիտի ընթանային տարբեր ճանապարհներէ, որովհետեւ անոնք պիտի ապրէին ու զարգանային ընկերային-քաղաքական հիմնովին տարբեր կառոյց ունեցող աշխարհներու մէջ, փիլիսոփայական եւ գեղագիտական գլխովին տարբեր ազդեցութիւններու տակ:

Ս Փ Ի Ռ Ի Ք

Վեցետիկն ու Վիեցնաց, որոնք նկատառելի դեր խաղացած էին մօտիկ անցեալին, ծուարեցան իրենք-իրենց վրայ եւ մեկուսացան: (Միթարեաններու բանաստեղծն է Հայր Վահան Յովհաննէսեանը («Հայրենի Կրակարան», «Դու եւ Ես»): Պալիսը, երէկուան այդ մեծ կեդրոնը, ամայացած էր. ո՛չ-մէկ մեծ գրող հոն՝ անցեալէն երկարաձգուող իր ձայնով. Սիպիլ աւարտած է ինքզինք. Մատթէոս Զարիֆեան իր անհատական, պղտիկ բայց իրապէս յուզիչ տաղերով կը նմանի տարաշխարհիկ փափուկ ծաղիկի մը, որ կը փորձէ իր քնքուշ բոյրը արձակել մթնոլորտը լեցնող արիւնի եւ խանձի ծանր հոտին ընդմէջէն:

Հետզհետէ Պոլսոյ մէջ տեղ գրաւեցին գրական նոր դէմքեր՝ Յ. Մնձուրին, Թ. Աղատեանը, Ե. Սիմֆէշեանը, Զոհականը, Ե. Այվազեանը, Ա. Տիրազանը, եւայլն:

Յետագային յայտնուեցան նորագոյն ուժեր ալ:

Ֆրանսայի գրողները, ուժեղ պոռթկումէ մը ետք, ատեն մը առաջնորդողի դեր կատարելէ վերջ, հետզհետէ կորսնցուցին իրենց սկզբնական թափին ուժը: Տաղանդաւորներէն ոմանց, — Շ. Շահնուրին, Վ. Շուշանեանին, Փ. Միքայէլեանին, — վերապահուեցաւ անժամանակ եւ տիտղ վախճան: Տաղանդաւոր միւս գրողներն են՝ Զաւէն Սիւրմէլեանը («Լոյս-Չուարթ»), Զարեհ Որբունին («Փորձը», «Վարձու Սենեակ»), Հրաչ Զարդարեանը («Մեր Կեանքը», «Ժամանակը եւ Խորհուրդը Իւր»), Բիւզանդ Թոփալեանը («Այգահանդէս», «Արեւազալ»), Շաւարշ Նարդունին («Մեղեդիներ, Մեղեդիներ», «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ»), Նիկողոս Սարաֆեանը («Անջրպետի մը Գրաւումը», «14»ը), Նշան Պէշիկթաշլեանը («Ծաղրանկարներ», «Երգիծական»), Ա. Սեման («Զրահաւոր Գարուն», «Շամիրամ»), Մարի Աթմաճեանը («Գողգոթայի Շուշաններ», «Յաւիտեանական Ուղիներ»), եւայլն: (Վ. Շուշանեանի գործերէն են՝ «Սիրոյ եւ Արկածի Տղաք», «Ամուսն Գիշերներ», Փ. Միքայէլեանի՝ «Եւա», «Արեւ, Արեւ», Շ. Շահնուրի՝ «Յարալէզներու Դաւաճանութիւնը»):

Ամերիկացի (Միացեալ Նահանգները) ունեցաւ խումբ մը տաղանդաւոր գրողներ, — Համաստեղ («Անրեւ», «Գիւղը», «Տոմար Մաքիական»), Բենիամին Նուրիկեան («Այգեկութք»), Վահէ Հայկ («Հայրենի Ծխան»ներու շարքը), Անդրանիկ Անդրէասեան («Սպիտակ Արդարութիւն», «Վերջին Կայանը»), Արամ Հայկազ («Յեղին Զայնը», երկու հատոր), Հեղինէ Դաւիթեան («Ճակատագիր»), դաղթած Իրանէն, եւայլն:

Մերձաւոր Արեւելքն ալ տուաւ իր հունձը, — Վահէ-Վահեան («Արեւ-Անձրեւ», «Ոսկի Կամուրջ»), Մուշեղ Իշխան («Տուներու Երգը», «Կրակը»), Տիգրան Վարժապետեան («Կեանքի Քառուղիէն», «Զառիթափին Վրայ»), Անդրանիկ Մառուկեան («Առագաստներ», «Մանկութիւն Զուներցող Մարդիկ»), Ժազ Յակոբեան («Գաղտնի Ճամբան», «Վերածնունդ»), Եղիվարդ («Մագթաղիւնէն Մեղրամոմէ», «Անցորդը»), Սմբատ Փանոսեան («Անարձագանգ Քայլեր», «Որ Մրրկաւ էին Զատուած»), Սիրան Սեզա («Պատնէշը»,

«Մեղաւորուհին»), Միհրան Տէր-Ստեփանեան («Յոյսի Խարոյկներ»), Սարգիս Սահակեան («Չորալանք», «Բարձրերդ»), Էւայն:

Հետզհետէ երեւան եկան նորագոյն ուժեր ալ:

Հին Սերունդէն վերապրող դէմքերը եղան՝ Ռ. Որբերեանը, Սիպիլը, Կամսարականը, Վ. Թէքէեանը, Ս. Պարթեւեանը, Ե. Օտեանը, Լ. Բաշալեանը, Ա. Չոպանեանը, Լ. Շանթը, Ա. Ահարոնեանը, Յ. Օշականը, Կ. Չարեանը, Էւայն, որոնցմէ՝ Թէքէեանը, Օշականը եւ Չարեանը միայն շարունակեցին ստեղծագործել. միւսները կա՛մ լռեցին եւ կա՛մ նուիրուեցան առաւելարար հրապարակաւորութեան կա՛մ գրականագիտական-բանասիրական-խմբադրական աշխատանքներու:

Սփիւռքահայ գրողներու շոշափած նիւթերը եղան՝ Մեծ Եղեռնը, որբանոցային կեանքը, դիւղը, այլասերումը, հայրենասիրութիւնը, հայրենազարձը, եւ անշուշտ՝ սէրը, հոգեկան տառապանքները, յոյսը:

Սփիւռքը թատերադիր չունեցաւ:

ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Արդի Հայաստանի գոյառումով նոր էջ մը բացուեցաւ հայրական գրականութեան մէջ: Տնտեսահայեցողական եւ ընկերվարական տեսակէտները դարձան պաշտօնական տեսակէտները նաեւ Հայաստանի գրողներուն, եւ այս պիտաւոր ուղիէն է, որ ընթացաւ Արեւելահայ նոր գրականութիւնը:

Նախորդ սերունդին պատկանող գրողներէն Շիրվանդատէն, Յակոբ Յակոբեանը («Հաւասարութիւն»), Միքայէլ Մանուկեանը («Եղսան Մոքիբը», «Անապատը կը ծաղկի»), Ազատ Վչտունին («Նոր Արեւելք», «Արեւելքը Հուր է Հիմա»), Արալին («Կարմիր Մեխակներ», «Այրուող Հորիզոն»), Գ. Տեմիրճեանը («Վասակ», «Քաջ Նազար», «Վարդանանք»), Ստ. Չորեանը («Տխուր Մարդիկ», «Մի Կեանքի Պատմութիւն»), Աւ. Իսահակեանը («Բանաստեղծութիւններ», «Ալազեազի Մանիններ»), եւ ուրիշներ շարունակեցին իրենց գրական կեանքը 1920-էն ետք ալ:

1920-էն ետք հրապարակը դրաւող միւս տաղանդաւոր վրոյներն են՝ Գ. Մահարին («Մրգահաս», «Բարտիներ»), Ե. Չարենցը

(«Ամբոխները Խելագարուած», «Գիրք Ճանապարհի»), Ա. Բակունցը («Մթնածոր», «Սեւ Յելերի Սերմնացանը»), Վ. Ալազանը («Մաքառումներ», «Վաթսուներորդ Հորիզոն»), Վ. Թոթովենցը («Կեանքը Հին Հոռովմէական Ճանապարհի Վրայ», «Նոր Բիւզանդիոն»), Վ. Նորենցը («Երկրորդ Գիրք», «Բանաստեղծութիւններ»), Արաքս («Զիմմի»), Ն. Չարեանը («Զրանցքի Կապոյտ Երկրում», «Պրն. Պետրոսն ու իր Նախարարները», «Արա Գեղեցիկ»), Սարմէնը («Թռիչք»), Ք. Թափալցեանը («Կեանքի Արշալոյսը», «Պատերազմ»), Մ. Արմէնը («Հեղնար Աղբիւր», «Եասվա»), Գ. Սարեանը («Երկաթէ Ոտնաձայներ», «Բանաստեղծութիւններ»), Ս. Տարօնցին («Առաւօտ», «Սերունդների Երգը»), Խաչիկ Դաշտենցը («Սողեղա»), Վ. Անանեանը («Սեւանի Ափին», «Յովազաձորի Գերիները»), Հ.Քոչարը («Սրբազան Ուխտ», «Մեծ Տան Զաւակները»), Աղաւնին («Իմ Տաղարանը», «Շիրակ»), Յ. Շիրազը («Երգ Հայաստանի», «Գիրք Սիրոյ եւ Խաղաղութեան»), Գ. Էմինը («Նոր Ճանապարհ», «Նորք»), Ս. Կապուտիկեանը («Օրերի Հետ», «Իմ Հարազատները»), Պ. Սեւակը («Անմահները Հրամայում են»), Վ. Խեչումեանը («Զուարթնոց»), Վ. Դաւթեանը, Ա. Սահինեանը, Ա. Մարգարեանը, եւ ուրիշներ:

Հայաստանի գրականութեան մէջ ալ, ինչպէս՝ Սփիւռքի, թատերական եւ երգիծական գործերը չհասան բանաստեղծութեան, պատմուածքին ու վէպին բարձրութեան:

Գլխաւոր նիւթերը եղան, — յեղափոխութիւնը, շինարարութիւնը, ընկերվարական կարգերու հաստատումը, համաշխարհային եղբայրութիւնն ու խաղաղութիւնը, պատերազմը, հայրենասիրութիւնը, ու նաեւ՝ սէրը եւ հոգեկան այլ ապրումներ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

ԳՐԱԿԱՆ ՍԵՌԵՐ

ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

Մուտք	3
Առասպել	6
Դիցազներգութիւն	8
Հայ դիցաբանութեան մասին ծանօթութիւն	12
Հեփթաթ	15
Ժողովրդական երգ	19
Առած եւ Ասացուածք	20
Առակ	21
Հանելուկ	23

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Զափածոյ եւ Արձակ	24
Զափածոյ (Զափ, յանգ, ոտանաւորի տեսակներ, քնարերգութիւն՝ հնչեակ, վիպերգ)	25
Արձակը (Վէպ, վիպակ, պատմուածք, քատրերգութիւն)	32

Բ. ՄԱՍ

ԶԵՒ ԵՒ ԽՈՐՔ

ՄՈՒՏՔ	39
ԼԵԶՈՒ ԵՒ ՈՃ	40
ՈՃԸ (ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ)	41
ԽՈՐՔԸ (ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ)	54
ԽՕՍՔԻ ԶԵՒԵՐ (ՈՃԻ ՏԵՍԱԿՆԵՐ)	59

Գ. ՄԱՍ

ԳՐԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄ	73
ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ «ԳՐԱԿԱՆ ԳՊՐՈՑ» ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ	73
ԳՐԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ	
Դասականութիւն	75
Վիպապաշտութիւն	79
Բառնասեաններ	82
Խորհրդանշապաշտութիւն	84
Իրապաշտութիւն	88
Բնապաշտութիւն	92
Տպաւորապաշտութիւն	95
Գերիւրապաշտութիւն	97

Դ. ՄԱՍ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՏՔ	100
ԱՒԱՆԴԱԿԱՆ ՇՐՋԱՆ	101
ՀԻՆ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ	102
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՇՐՋԱՆ	104
ՆՈՐ ԳՐԱԲԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ	105
ՆՈՐ ՇՐՋԱՆ	106
Մուտք	107
Զարթօնքի Շրջան	107
Թերթերը	109
Մխիթարեան Վանքերը	109
Պուլիսը	110
Իզմիրը	111
Արդի Շրջան	111
ՆՈՐԱԳՈՑՆ ՇՐՋԱՆ	114
Սփիւռք	114
Արդի Հայաստան	116

Մասնակի կամ ամբողջական վերարտադրության
ամեն իրաւունք վերապահուած է հեղինակին

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ը

ԳՐԱԿԱՆ ԳԻՏՏԵԼԻՔՆԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Նախապատրաստական

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Տարբական

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Միջին-Բարձրագոյն

Դիմել՝

ՆՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
Կ.ՏՕՆՆԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

871 - 887, Արմենիա փողոց

ՍԷՑ Միշէլ - Պէյրութ